*Դեկտեմբեր 2010*

# ՄՐԳԵՐԻ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**Հաշվետվություն**

Հեղինակ՝ **ԱՄ ՓԱՐԹՆԸՐԶ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՄՓՆԻ**

ՀՀ Էկոնոմիկայի Նախարարություն

Զարգացման Հայկական Գործակալություն

Համաշխարհային Բանկ / Արտասահմանյան Ֆինանսական Ծրագրերի Կառավարման Կենտրոն

ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի

**Բովանդակություն**

**1 ՆԱԽԱԲԱՆ** 6

**1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ** 6

**1.2 ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ** 7

1.2.1 Ուսումնասիրվող ապրանքները 7

1.2.2 Տեղեկատվության աղբյուրները 12

1.2.3 Տեղեկատվության հավաքագրումը 14

**1.3 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ** 15

**2 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ** 19

**2.1 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ** 19

2.1.1 Մշակության տարածքներ 19

*2.1.1.1 Մրգերի այգետարածքները* 20

*2.1.1.2 Բանջարեղենի ցանքատարածությունները* 25

2.1.2 Արտադրության քանակներ 27

*2.1.2.1 Մրգերի արտադրության քանակները* 27

*2.1.2.2 Բանջարեղենի արտադրության քանակները* 32

**2.2 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ** 35

2.2.1 Արտադրության աշխարհագրությունը 35

*2.2.1.1 Մրգերի արտադրության աշխարհագրությունը* 37

*2.2.1.2 Բանջարեղենի արտադրության աշխարհագրությունը* 42

2.2.2 Արտադրության սեզոնայնությունը 46

**2.3 ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԸ** 56

**3 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ** 58

**3.1 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՔԱՆԱԿՆԵՐԸ** 58

3.1.1 Մրգերի արտահանման քանակները 58

3.1.2 Բանջարեղենի արտահանման քանակները 62

**3.2 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ** 64

**3.3 ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ** 67

**3.4 ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԸ** 68

**4 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ** 75

**4.1 ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՔԱՆԱԿՆԵՐԸ** 75

4.1.1 Մրգերի ներմուծման քանակները 75

4.1.2 Բանջարեղենի ներմուծման քանակները 78

**5 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՍՊԱՌՈՒՄԸ** 81

**5.1 ՄՐԳԵՐԻ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՈՒՄ** 81

5.1.1 Իրացման (սպառման) կառուցվածքը 81

5.1.2 Արտադրող տնտեսությունների ներքին սպառումը 81

5.1.3 Վերամշակողների մթերումները 86

*5.1.3.1 Խաղողի վերամշակման քանակները* 86

*5.1.3.2 Մրգերի եւ բանջարեղենի վերամշակման քանակները* 88

5.1.4 Բնակչության սպառումը 92

**5.2 ԻՐԱՑՄԱՆ ԳՆԵՐԸ** 96

5.2.1 Իրացման գների վրա ազդող հիմնական գործոնները 96

5.2.2 Մրգերի եւ բանջարեղենի իրացման գները 98

**6 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ** 115

**6.1 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՍԽԱԼԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ** 115

**6.2 ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ** 116

6.2.1 Մշակության տարածքների եւ արտադրության քանակների փոփոխության գործոնը 117

6.2.2 «Ավանդական» արտահանողների գործունեության մասշտաբների գործոնը 118

6.2.3 «Սպայկայի» գործոնը 120

**6.3 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԳՆԵՐԻ ՎՐԱ** 121

**7 ԱՄՓՈՓՈՒՄ** 124

7.1 ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ........ 124
7.2 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԱՃԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 126

8 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ........ 128

8.1 ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐՆ ԸՍՏ ՍՈՐՏԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԵՒ ՄԱՐԶԵՐԻ ........ 129
8.2 ՄՐԳԵՐԻ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԸ ........ 131
8.3 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ........ 147
8.3.1 Հանդիպումներ եւ հարցազրույցներ ........ 147
8.3.2 Հրապարակումներ ........ 148

## Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1 - Հայաստանից արտահանվող թարմ մրգերի տեսականին 2008-2009 ........ 9
Աղյուսակ 2 - Հետազոտության իրականացման համար օգտագործված տեղեկատվության աղբյուրները ........ 13
Աղյուսակ 3 - Տեղեկատվության աղբյուրների դասակարգումն ըստ հետազոտության առարկայի ........ 14
Աղյուսակ 4 - Մրգերի այգետարածքների բաշխվածքն ըստ տեսակների, 2009թ. ........ 20
Աղյուսակ 5 - Մրգերի այգետարածքների փոփոխությունը 2004-2009թթ. ........ 21
Աղյուսակ 6 - 2005-2009թթ.-ին հիմնված եւ որպես բազմամյա տնկարկներ չհաշվառված այգիների բաշխվածքը ........ 24
Աղյուսակ 7 - Բանջարեղենի ցանքատարածությունների բաշխվածքն ըստ տեսակների, 2005-2010թթ. ........ 25
Աղյուսակ 8 - Բանջարեղենի արտադրության քանակները, 2005-2009թթ., տոննա ........ 34
Աղյուսակ 9 - Արարատյան դաշտավայրում (Արմավիրի եւ Արարատի մարզերում) թողարկվող մրգերի եւ բանջարեղենի մասնաբաժինը Հայաստանի ընդհանուր ցուցանիշներում 2009թ. ........ 36
Աղյուսակ 10 - Պտղի տնկարկների եւ արտադրության քանակների բաշխվածքն ըստ մարզերի, 2008-2009թթ. ........ 40
Աղյուսակ 11 - Կարտոֆիլի եւ բանջարեղենի ցանքատարածությունների եւ արտադրության քանակների բաշխվածքն ըստ մարզերի, 2008-2009թթ. ........ 44
Աղյուսակ 12 - Հայաստանում մրգերի եւ բանջարեղենի արտադրության հիմնական օջախները ........ 47
Աղյուսակ 13 - Մրգերի արտադրության սեզոնայնությունը ........ 48
Աղյուսակ 14 - Բանջարեղենի արտադրության սեզոնայնությունը ........ 52
Աղյուսակ 15 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ. ........ 59
Աղյուսակ 16 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2008-2010թթ., տոննա ........ 60
Աղյուսակ 17 - Հայաստանի բանջարեղենի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ. ........ 63
Աղյուսակ 18 - Հայաստանի բանջարեղենի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ., տոննա ........ 64
Աղյուսակ 19 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալներն ըստ իրացման շուկաների, 2009-2010թթ. ........ 65
Աղյուսակ 20 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալներն ըստ բեռնափոխադրումների ձեւերի, 2009-2010թթ. ........ 68
Աղյուսակ 21 - Հայաստանում աճող մրգերի ներմուծման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ. ........ 76
Աղյուսակ 22 - Հայաստանում աճող բանջարեղենի ներմուծման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ. ........ 79
Աղյուսակ 23 - Մրգերի ապրանքայնության մակարդակը Հայաստանում 2006-2009թթ. ........ 82
Աղյուսակ 24 - Բանջարեղենի ապրանքայնության մակարդակը Հայաստանում 2006-2009թթ. ........ 84
Աղյուսակ 25 - Արտադրող տնտեսությունների կողմից մրգերի եւ բանջարեղենի ներքին սպառման քանակները 2006-2009թթ. ........ 85
Աղյուսակ 26 - Վերամշակման նպատակով խաղողի մթերումներն ըստ մարզերի, 2006-2009թթ., տոննա ........ 87
Աղյուսակ 27 - Խաղողի մթերման 5 խոշոր ձեռնարկությունները 2006-2009թթ. ........ 87
Աղյուսակ 28 - Վերամշակման նպատակով մթերվող մրգերի տեսականին եւ քանակները, 2006-2009թթ., տոննա ........ 88
Աղյուսակ 29 - Մրգերի մթերման 5 խոշոր ձեռնարկությունները 2006-2009թթ. ........ 89
Աղյուսակ 30 - Վերամշակման նպատակով մթերվող բանջարեղենի տեսականին եւ քանակները, 2006-2009թթ., տոննա ........ 90
Աղյուսակ 31 - Բանջարեղենի մթերման 5 խոշոր ձեռնարկությունները 2006-2009թթ. ........ 90
Աղյուսակ 32 - Հայաստանի չորացրած մթերքի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ. ........ 91
Աղյուսակ 33 - Բնակչության կողմից մրգերի սպառման քանակները 2006-2009թթ., տոննա ........ 92
Աղյուսակ 34 - Բնակչության կողմից կարտոֆիլի սպառման քանակները 2006-2009թթ. ........ 94
Աղյուսակ 35 - Բնակչության կողմից բանջարեղենի սպառման քանակները 2006-2009թթ., տոննա ........ 94
Աղյուսակ 36 - Մրգերի եւ բանջարեղենի գների կառուցվածքն ըստ արժեշղթայի մասնակիցների եւ ապրանքի որակական հատկանիշների ........ 96
Աղյուսակ 37 - Մրգերի եւ բանջարեղենի ձեռքբերման վայրերն ըստ գնորդների ........ 97
Աղյուսակ 38 - Խաղողի առաջարկի մեծության եւ մանրածախ գների համադրություն (2007-2009թթ.-ի արդյունքներով) ........ 98
Աղյուսակ 39 - Արտահանողների կողմից խաղողի մթերման գներն ըստ արտահանվող հիմնական տեսակների, 2008-2010թթ. ........ 99
Աղյուսակ 40 - Խաղող. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ........ 100
Աղյուսակ 41 - Խաղող. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ........ 100
Աղյուսակ 42 - Ծիրանի առաջարկի մեծության եւ իրացման գների համադրություն (2006-2010թթ.-ի արդյունքներով) ........ 100
Աղյուսակ 43 - Ծիրան. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ........ 101
Աղյուսակ 44 - Ծիրան. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ........ 101
Աղյուսակ 45 - Ծիրանի մանրածախ գների դինամիկան ըստ մարզերի, 2008-2010թթ. ........ 102

Աղյուսակ 46 - Դեղձ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 103
Աղյուսակ 47 - Դեղձ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 103
Աղյուսակ 48 - Սալոր. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 103
Աղյուսակ 49 - Սալոր. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 103
Աղյուսակ 50 - Կեռաս. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 103
Աղյուսակ 51 - Կեռաս. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 103
Աղյուսակ 52 - Դեղձի առաջարկի մեծության եւ իրացման գների համադրություն (2007-2010թթ.-ի արդյունքներով) ..... 104
Աղյուսակ 53 - Սալորի առաջարկի մեծության եւ իրացման գների համադրություն (2007-2010թթ.-ի արդյունքներով) ..... 104
Աղյուսակ 54 - Կեռասի առաջարկի մեծության եւ իրացման գների համադրություն (2007-2010թթ.-ի արդյունքներով) ..... 104
Աղյուսակ 55 - Խնձորի առաջարկի մեծության եւ մանրածախ գների համադրություն (2007-2009թթ.-ի արդյունքներով) ..... 105
Աղյուսակ 56 - Խնձոր. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 105
Աղյուսակ 57 - Խնձոր. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 105
Աղյուսակ 58 - Տանձի առաջարկի մեծության եւ մանրածախ գների համադրություն (2007-2009թթ.-ի արդյունքներով) ..... 105
Աղյուսակ 59 - Տանձ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 105
Աղյուսակ 60 - Տանձ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 105
Աղյուսակ 61 - Կարտոֆիլ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 107
Աղյուսակ 62 - Կարտոֆիլ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 107
Աղյուսակ 63 - Բաց գրունտի վրա աճեցված լոլիկի առաջարկի մեծության եւ մանրածախ գների համադրություն (2007-2009թթ.-ի արդյունքներով) ..... 109
Աղյուսակ 64 - Լոլիկ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 109
Աղյուսակ 65 - Լոլիկ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 109
Աղյուսակ 66 - Վարունգ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 110
Աղյուսակ 67 - Վարունգ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 110
Աղյուսակ 68 - Կաղամբ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 111
Աղյուսակ 69 - Կաղամբ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 111
Աղյուսակ 70 - Պղպեղ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 112
Աղյուսակ 71 - Պղպեղ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 112
Աղյուսակ 72 - Սմբուկ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 113
Աղյուսակ 73 - Սմբուկ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 113
Աղյուսակ 74 - Գլուխ սոխ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ..... 114
Աղյուսակ 75 - Գլուխ սոխ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ ..... 114
Աղյուսակ 76 - «Ավանդական» արտահանողների կողմից մրգերի արտահանման գնահատականն ըստ փորձագետների ..... 119
Աղյուսակ 77 - «Ավանդական» արտահանողների կողմից մրգերի արտահանման գնահատականն ըստ պատմ. թվային շարքերի ռեգրեսիոն վերլուծության ..... 119

## Նկարների ցանկ

Նկար 1 - Հայաստանում մրգերի արտադրության քանակները միջին բարենպաստ տարում ..... 8
Նկար 2 - Հայաստանում բանջարեղենի արտադրության քանակները 2008-2009թթ.-ին ..... 11
Նկար 3 - Հայաստանի ՀՆԱ-ի, գյուղատնտեսության եւ բուսաբուծության համախառն արտադրանքների (ընթացիկ գներով) համադրություն, 2005-2009թթ ..... 16
Նկար 4 - Հայաստանի ՀՆԱ-ի, գյուղատնտեսության եւ բուսաբուծության համախառն արտադրանքների (համադրելի գներով) ֆիզիկական ծավալի ինդեքսները, 2005-2009թթ. ..... 17
Նկար 5 - Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը, 2005-2009թթ ..... 18
Նկար 6 - Հայաստանում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները եւ տնկարկները 2005-2009թթ.-ին ..... 19
Նկար 7 - Մրգերի այգետարածքներն ըստ տեսակների 2009թ.-ին ..... 20
Նկար 8 - Խաղողի տնկարկների բաշխվածքն ըստ սորտային կազմի, 2009թ. ..... 22
Նկար 9 - Հայաստանում կարտոֆիլի արտադրության եւ սպառման քանակները, 2000-2009թթ ..... 26
Նկար 10 - Խաղողի արտադրության քանակները 2000-2010թթ. ..... 28
Նկար 11 - Ծիրանի արտադրության քանակները 2000-2010թթ ..... 29
Նկար 12 - Դեղձի, սալորի, կեռասի, խնձորի եւ տանձի արտադրության քանակները 2006-2009թթ. ..... 30
Նկար 13 - Մրգերի արտադրության քանակների գնահատականը առաջիկա 3-4 տարիների համար ..... 31
Նկար 14 - Կարտոֆիլի եւ բանջարեղենի բերքատվության ցուցանիշները 2005-2009թթ., տոննա/հա ..... 32
Նկար 15 - Կարտոֆիլի արտադրության քանակները 2000-2010թթ., տոննա ..... 33
Նկար 16 - Բանջարեղենի արտադրության քանակները 2005-2009թթ., տոննա ..... 34
Նկար 17 - Հայաստանի ֆիզիկական քարտեզը ..... 35
Նկար 18 - Խաղողի արտադրության աշխարհագրությունը ..... 37
Նկար 19 - Ծիրանի արտադրության աշխարհագրությունը ..... 37
Նկար 20 - Դեղձի արտադրության աշխարհագրությունը ..... 38
Նկար 21 - Սալորի արտադրության աշխարհագրությունը ..... 38

Նկար 22 - Կեռասի արտադրության աշխարհագրությունը ... 39
Նկար 23 - Խնձորի եւ տանձի արտադրության աշխարհագրությունը (2009թ.-ի արդյունքներով) ... 39
Նկար 24 - Բանջարեղենի արտադրության աշխարհագրությունը (2009թ.-ի արդյունքներով) ... 43
Նկար 25 - Ծիրանի բերքահավաքի ժամկետներն ըստ արտադրության հիմնական օջախների ... 56
Նկար 26 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալները 2006-2010թթ. ... 59
Նկար 27 - Հայաստանի բանջարեղենի արտահանման ծավալները 2006-2010թթ. ... 62
Նկար 28 - Կարտոֆիլի արտահանման բաշխվածքն ըստ շուկաների, 2010թ. (I-X) ... 66
Նկար 29 - Կարտոֆիլի արտահանման բաշխվածքն ըստ արտահանողների, 2010թ. ... 74
Նկար 30 - Հայաստանի մրգերի արտաքին առեւտրի հաշվեկշիռը 2006-2009թթ. ... 75
Նկար 31 - Հայաստանի մրգերի ներմուծման ծավալները 2006-2009թթ. ... 75
Նկար 32 - Հայաստանում չաճող մրգերի ներմուծման ծավալներն ըստ տեսակների 2006-2009թթ. ... 76
Նկար 33 - Հայաստանի բանջարեղենի արտաքին առեւտրի հաշվեկշիռը 2006-2009թթ.* ... 78
Նկար 34 - Հայաստանի բանջարեղենի ներմուծման ծավալները 2006-2009թթ. ... 78
Նկար 35 - Մրգերի եւ բանջարեղենի իրացման / սպառման կառուցվածքը Հայաստանում ... 81
Նկար 36 - Վերամշակող ձեռնարկությունների կողմից խաղողի մթերման քանակները 2003-2010թթ. ... 86
Նկար 37 - Վերամշակող ձեռնարկությունների կողմից մրգերի մթերման քանակները 2003-2010թթ. ... 88
Նկար 38 - Վերամշակող ձեռնարկությունների կողմից բանջարեղենի մթերման քանակները 2001-2010թթ. ... 89
Նկար 39 - Մրգերի եւ բանջարեղենի առաջարկի մեծության եւ գների մակարդակի կոռելյացիան ... 96
Նկար 40 - Խաղողի միջին մանրածախ գների դինամիկան 2007-2010թթ. ... 99
Նկար 41 - Ծիրանի առաջարկի սեզոնայնության եւ մանրածախ գների համադրություն (2009թ.-ի տվյալների հիման վրա) ... 102
Նկար 42 - Ծիրանի առաջարկի սեզոնայնության եւ արտահանողների մթերման գների համադրություն (2009թ.-ի տվյալների հիման վրա) ... 102
Նկար 43 - Խնձորի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ. ... 106
Նկար 44 - Տանձի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ. ... 106
Նկար 45 - Կարտոֆիլի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ. ... 107
Նկար 46 - Լոլիկի միջին մանրածախ գների դինամիկան 2008-2010թթ. ... 108
Նկար 47 - Վարունգի միջին մանրածախ գների դինամիկան 2008-2010թթ. ... 110
Նկար 48 - Կաղամբի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ. ... 111
Նկար 49 - Պղպեղի միջին մանրածախ գների դինամիկան 2008-2010թթ. ... 112
Նկար 50 - Սմբուկի միջին մանրածախ գների դինամիկան 2008-2010թթ. ... 113
Նկար 51 - Գլուխ սոխի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ. ... 114
Նկար 52 - Մրգերի արտադրության քանակների գնահատականը առաջիկա 3-4 տարիների համար ... 118
Նկար 53 - Հայաստանի մրգերի եւ բանջարեղենի արտահանման քանակների գնահատականը 2011-2014թթ.-ին ... 120
Նկար 54 - Հայաստանի մրգերի արտադրության եւ արտահանման 2011-2014թթ.-ի կանխատեսվող քանակների համադրություն ... 122
Նկար 55 - Արտահանվող 5 մրգերի շուկայի հաշվեկշռի դինամիկան 2004-2014թթ. ... 122

## Հապավումների բացատրություններ

| Հապավումներ | | Բացատրություններ |
|---|---|---|
| ԱՎԾ | ☞ | ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն |
| ԲՍՊՏ | ☞ | Գյուղատնտեսության Նախարարության Բուսասանիտարիայի պետական տեսչություն |
| ԳԱՀԿ | ☞ | Գյուղատնտեսության Աջակցության Հանրապետական Կենտրոն |
| ԳԱՄԿ | ☞ | Գյուղատնտեսության Աջակցության Մարզային Կենտրոններ |
| ԳԶՄՀ (IFAD) | ☞ | Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամ |
| ՀՀ | ☞ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՄՀՀ | ☞ | «Հազարամյակի մարտահրավերներ» Հիմնադրամ - Հայաստան |
| ՀՆԱ | ☞ | Համախառն Ներքին Արդյունք |

*Հարգելի ընթերցող,*

*Մրգերի եւ բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալների ուսումնասիրությունը վերաբերվում է մի ոլորտի, որի վերաբերյալ վիճակագրությունը տարբեր պատճառներով ունի զգալի թերություններ: Խոսքը գնում է գյուղատնտեսության մասին: Վերլուծելով Հայաստանում գյուղատնտեսական վիճակագրական տվյալների հավաքման ողջ գործընթացը, մենք եկել ենք եզրահանգման, որ դրանց մի մասն աչքի է ընկնում իր արժանահավատությամբ, իսկ մի մասին պետք է վերաբերվել որոշ վերապահումներով: Տվյալների թերությունների գլխավոր պատճառը կայանում է նրանում, որ առ այսօր Հայաստանում ստեղծված չէ Գյուղատնտեսական ռեգիստր եւ դեռեւս չի իրականացվել գյուղատնտեսական համատարած հաշվառում (Agricultural Census): Բազաթիվ պատճառներով տվյալների ստացումն արդեն սկզբնաղբյուրում մասամբ աղավաղվում է:*

*Սույն ուսումնասիրության հաշվետվության մեջ օգտագործված է հսկայական քանակությամբ թվային տվյալներ: Դրանք վերաբերվում են Հայաստանում աճող 14 տեսակի մրգերի եւ բանջարեղենի արտադրության, արտահանման, ներմուծման, սպառման եւ գների վերջին 5-10 տարիների ցուցանիշներին: Տվյալների աղբյուրները շատ են եւ երբեմն հակասական: Մենք արել ենք առավելագույնը, որպեսզի մեր կողմից ներկայացված ցուցանիշները հաստատված լինեն մի քանի աղբյուրների կողմից: Որտեղ դա հնարավոր չի եղել, մենք խորհուրդ ենք տվել տվյալներին վերաբերվել որոշ վերապահումներով: Չնայած այդ ամենին, ընթերցողը կարող է հանդիպել տվյալների, որոնք իր տեսանկյունից լինելու են վիճելի: Ցավով ենք նշում, որ մեր ընկալմամբ դա ի սկզբանե անխուսափելի էր: Ուստի մենք առաջարկում ենք նման դեպքերում կենտրոնանալ ոչ թե կոնկրետ թվերի, այլ միտումների վրա: Մեր գնահատմամբ, սույն հաշվետվությունը լիարժեք պատկերացում է տալիս Հայաստանի մրգերի եւ բանջարեղենի արտահանման բնագավառի մասին եւ կարող է օգտակար լինել շահագրգիռ ընթերցողների հարցերի պատասխանները գտնելու համար:*

*Հաճելի ընթերցում,*



*ՎԱՐԴԱՆ ԱՂԲԱԼՅԱՆ*

*Հաշվետվության հեղինակային խմբի ղեկավար / գլխավոր վերլուծաբան*
*«ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» ՍՊԸ, Հիմնադիր եւ Ծրագրերի ղեկավար*

*19 Դեկտեմբեր, 2010թ.*

# 1 ՆԱԽԱԲԱՆ

Մրգերի եւ բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալների ուսումնասիրության իրականացումը նախաձեռնել է **«Զարգացման Հայկական Գործակալություն» ՓԲԸ**-ը[1] (այսուհետ՝ ԶՀԳ): Ուսումնասիրության իրականացումը ֆինանսավորվել է ՀՀ Ֆինանսների Նախարարության **«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ**-ի (այսուհետ՝ ԱՖԾԿԿ) կողմից՝ Օտարերկրյա ներդրումների եւ արտահանման խթանման երկրորդ դրամաշնորհային ծրագրի (դրամաշնորհ No TF TF091254) եւ ՀՀ պետական բյուջեի միջոցներից: Ուսումնասիրությունն իրականացրել է **«ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի» ՍՊԸ**-ը[2]՝ 2010թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

## 1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Գյուղատնտեսությունն առանցքային դեր ունի Հայաստանի պարենային անվտանգության ապահովման գործընթացում: ՀՀ Կառավարությունը ակտիվ եւ շարունակական քայլեր է ձեռնարկում գյուղատնտեսության ոլորտը զարգացնելու ուղղությամբ, որոնցից մեկը հայկական գյուղատնտեսական արտադրանքի (այսուհետ նաեւ՝ գյուղմթերքներ) արտահանման խթանումն է:

Գյուղմթերքների արտահանման խթանման քաղաքականության կարեւոր միջոցառումներից է ՀՀ Կառավարության կողմից հավանություն ստացած Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում Ազատ տնտեսական գոտու (այսուհետ՝ ԱՏԳ) ստեղծման ծրագիրը[3]: Վերջինիս նպատակն է արտադրություն-վերամշակում-շուկա շղթայի լիարժեք գործարկմամբ ապահովել հայկական գյուղմթերքների արտահանման աճը: Գործարկման սկզբնական փուլում ԱՏԳ-ն միտված է լինելու դեպի **թարմ մրգերի եւ բանջարեղենի** արտահանման ապահովմանը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կստեղծի զարգացնելու ոլորտի տնտեսական ներուժը եւ հնարավորություն կտա ավելացնել գյուղացիական տնտեսությունների եկամուտները:

ԱՏԳ-ն կոչված է լրացնելու այն բացը, որն առկա է գյուղմթերքների իրացման ենթակառուցվածքների հարցում: Այն, որպես ապրանքների արտահանման լոգիստիկ կենտրոն, հնարավորություն կտա արագ կազմակերպել գյուղատնտեսական մթերքների արտահանումը ինչպես օդանավով, այնպես էլ այլ տրանսպորտային միջոցներով: ԱՏԳ-ն կունենա գյուղմթերքի պահեստավորման եւ պահպանման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: ԱՏԳ-ում գործելու է եվրոպական չափանիշներին համապատասխանող որակավորման լաբորատորիա, ստեղծվելու է համապատասխան ընդունման կետերի ցանց, որն աշխատելու է գյուղմթերք արտադրողների հետ՝ տրամադրելով պահեստավորման եւ պահպանման հնարավորություններ:

ԱՏԳ-ի ստեղծման ծրագիրը ներկայումս գտնվում է ընթացքի մեջ: Ծրագրի պատասխանատուների գնահատմամբ, այն կգործարկվի 2011թ. կեսերին[4]: Մինչ այդ շարունակվում է ծրագրի նախապատրաստական-կազմակերպչական միջոցառումների իրականացումը: Մասնավորապես քննարկման փուլում է գտնվում ՀՀ Էկոնոմիկայի Նախարարության կողմից մշակված «Ազատ տնտեսական գոտու մասին» ՀՀ Օրենքի

[1] www.ada.am
[2] www.ampartners.am
[3] ԱՏԳ-ի ստեղծման հայեցակարգը մշակվել ՀՀ Էկոնոմիկայի Նախարարության կողմից 2008թ.-ին
[4] Ծրագրի գործարկման ժամկետներն ըստ նախարարության Արդյունաբերության վարչության պետ Հ. Միրզոյանի

նախագիծը, հստակեցվում են ԱՏԳ-ում հարկային արտոնությունների ռեժիմի կիրառման կանոնները, շուտով կսկսվի անհրաժեշտ ենթակառուցվածքների (օրինակ՝ սառնարանների) ստեղծման աշխատանքները եւ այլն: Այս ամենից զատ կան այլ կարեւոր խնդիրներ եւս, որոնց լուծումից է կախված ԱՏԳ-ի ծրագրի հաջողությունը: Մասնավորապես, կարեւոր է հասկանալ, թե որքանո՞վ ԱՏԳ-ն հնարավորություն կունենա սպասարկել թարմ մրգերի եւ բանջարեղենի արտահանման սպասվող քանակները կամ էլ՝ առկա՞ է արդյոք հայկական մրգերի եւ բանջարեղենի առաջարկի այնպիսի քանակություն, որի պարագայում ԱՏԳ-ի հզորությունները կաշխատեն բավարար ծանրաբեռնվածությամբ: Այս հարցերի պատասխանները ստանալուն է միտված հայկական մրգերի եւ բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալների ուսումնասիրության անցկացումը (այսուհետ՝ Հետազոտություն):

Սույն **հետազոտության նպատակն է** իրականացնել հայկական մրգերի եւ բանջարեղենի բնագավառի ուսումնասիրություն, գնահատելով ներկայումս գյուղմթերքների արտադրության ծավալները, ներքին շուկայի սպառումը, ներմուծման եւ արտահանման ծավալները, բացահայտել հիմնական արտադրողներին եւ արտահանողներին, գնահատել արտահանման հնարավոր ծավալները տարբեր գյուղմթերքների համար՝ հիմնվելով շուկայի առանձնահատկությունների, արժեքի եւ սեզոնայնության գործոնների վրա: Այս տեսանկյունից սույն **հետազոտության առարկա են** հանդիսանում հայկական մրգերին եւ բանջարեղենին առնչվող հետեւյալ հարցերը.

| | |
|---|---|
| **1. Արտադրության քանակներ** | **2. Սպառման քանակներ** |
| **3. Արտահանման քանակներ** | **4. Ներմուծման քանակներ** |
| **5. Արտադրողներ** | **6. Արտահանողներ** |
| **7. Արտադրության աշխարհագրություն** | **8. Սեզոնայնություն** |
| **9. Գներ** | |

**Հետազոտության խնդիրն է** հանդիսանում վերոհիշյալ հարցերի քննարկմամբ գնահատել **հայկական մրգերի եւ բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալները**, ինչպես նաեւ գնահատել արտահանման ծավալների հնարավոր աճի ազդեցությունը ներքին շուկայի գների վրա:

## 1.2 ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

### 1.2.1 Ուսումնասիրվող ապրանքները

Հայկական մրգերի եւ բանջարեղենի տեսականու անգամ մակերեսային դիտարկումը թելադրում է այն, որ սույն հետազոտությունը պետք է իրականացվի դրանց առանձին տեսակների մակարդակով: Հայաստանում աճեցվող մրգերի եւ բանջարեղենի տասնյակներ կազմող տեսակները տարբերվում են իրենց արտադրության քանակներով, դրանց մշակմամբ զբաղված գյուղացիական տնտեսությունների թվով, արժեքով եւ պահանջարկով: Հայկական մրգերի եւ բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալների գնահատման համար անհրաժեշտ ապրանքների կազմը սահմանելիս հիմք են ընդունվել երկու գործոններ.

1) **առաջարկի գործոն,** որի կարեւոր բաղադրիչներն են արտադրության բավարար մեծ քանակները եւ կայունությունը,
2) **արտահանման փորձի** եւ ավանդույթների առկայություն:

**Մրգերի առաջարկը** տարեց տարի մեծապես տատանվում է: Մրգերի արտադրության քանակները կտրուկ տատանվում են՝ կախված *բնակլիմայական պայմաններից*: Կլիմայական

պայմանների առումով բարենպաստ եւ անբարենպաստ տարիներին մրգերի առանձին տեսակների արտադրության քանակները կարող են մինչեւ 10 անգամ տարբեր լինել: Ուստի Հայաստանում մրգերի արտադրության քանակները պատկերացնելու համար կողմնորոշիչ կարող են հանդիսանալ *միջին բարենպաստ տարվա ցուցանիշները* կամ *պոտենցիալ առաջարկի մեծությունը*: Այդ իմաստով հայկական մրգերի արտադրությունն ունի հետեւյալ ցուցանիշները.

**Նկար 1 - Հայաստանում մրգերի արտադրության քանակները միջին բարենպաստ տարում[5]**




Աղբյուրներ՝
1. Պաշտոնական վիճակագրական տվյալներ
2. Բնագավառի փորձագետներ եւ մշակությամբ զբաղվող տնտեսություններ

Հայաստանի բնակլիմայական եւ ռելիեֆային պայմանների պատճառով այստեղ հիմնականում եւ մեծ քանակներով աճում են հնդավորները, կորիզավորները եւ խաղողը: Սակայն դրանց մեջ չկան այնպիսի տեսակներ, որոնց արտադրությունը շատ թե քիչ չափով գերազանցի Հայաստանի բնակչության ներքին սպառման պահանջարկը: Դա է պատճառը, որ Նկար 1-ում ներկայացված 17 անուն մրգերից այսօր ***կայուն կերպով*** արտահանվում են միայն 5-ը (խաղող սեղանի սորտերի, ծիրան, դեղձ, սալոր, կեռաս): Եւս 2 անուն մրգեր (խնձոր, տանձ) արտահանվում են ***ոչ կայուն կերպով*** եւ ***չնչին քանակներով***: Մնացած մրգերը սպառվում են Հայաստանում:

Հայկական մրգերի որոշ տեսակների արտադրությունն այնքան փոքր է, որ դրանք նաեւ ներմուծվում են, ինչպես օրինակ ընկուզապտուղները՝ հունական ընկույզը, պնդուկը, նուշը: Ունենալով խաղողի արտադրության բավականին մեծ քանակներ, Հայաստանը տարեկան 900-1,000 տոննա չամիչ է ներմուծում: Սեզոնային դեֆիցիտի ծածկման համար Հայաստան է ներմուծվում նաեւ խնձոր, տանձ: Կարծիք կա, որ եթե Հայաստանը ցամաքային կապ եւ առեւտրային հարաբերություններ ունենար Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ, ապա այնտեղից

[5] Տվյալները ճիշտ են 2005-2010 ժամանակահատվածում ընկած բերքի բարենպաստ տարիների համար

Հայաստան կարող էր ներմուծվել կեռաս, դեղձ, ծիրան[6]: Այսպիսով, անգամ ամենաշատ քանակներով արտադրվող հայկական մրգերի քանակները չի կարելի անվանել «շատ մեծ» կամ անգամ «մեծ»:

Սակայն փաստ է նաեւ այն, հայկական մրգերի որոշ տեսակներ արտահանվում են, որոնցից մի քանիսն իրենց իրացման շուկաներում ունեն անառարկելի հեղինակություն: Եթե դիտարկենք 2008-2009թթ. **մրգերի արտահանման** տվյալները, ապա Հայաստանից արտահանվել են 8 տարբեր տեսակի մրգեր, որոնցից 5-ն են արտահանվել նշանակալից քանակներով՝ առնվազն մեկ 20 տ կոնտեյների չափով: Ստորեւ բերված աղյուսակում ներկայացված են Հայաստանից արտահանվող բոլոր մրգերի տեսակները, ինչպես նաեւ դրանց դասակարգումն ըստ արտահանման քանակների.

**Աղյուսակ 1 - Հայաստանից արտահանվող թարմ մրգերի տեսականին 2008-2009**

| Պայմանական նշաններ | | | | |
|---|---|---|---|---|
| ★ ★ ★ | → | Մեծ քանակներ | → | Արտահանումը՝ >200 տոննա/տարեկան |
| ★ ★ | → | Փոքր քանակներ | → | Արտահանումը՝ 20-200 տոննա/տարեկան |
| ★ | → | Չնչին քանակներ | → | Արտահանումը՝ < 20 տոննա/տարեկան |

| Թարմ մրգերի տեսակները | Մրգերն ըստ ԱՏԳԱԱ[7] 8-նիշ դասակարգման | Արտահանումը | |
|---|---|---|---|
| | | 2008 | 2009 |
| 1. Ընկուզապտուղներ[8], այդ թվում՝<br>- Կոկոսենու ընկույզ (Coconut)<br>- Հնդկական ընկույզ (Cashew nut)<br>- Նուշ կճեպազատված<br>- Պնդուկ<br>- Հունական ընկույզ կճեպազատված<br>- Մայրու ընկույզ (Pine nut) | <br>08011900<br>08013200<br>08021290<br>08022200<br>08023200<br>08029085 | ★ | ★ |
| 2. Խաղող սեղանի սորտերի | 08061010 | ★ ★ ★ | ★ ★ ★ |
| 3. Խնձոր | 08081080 | ★ ★ | ★ |
| 4. Տանձ | 08082050 | ★ | ★ |
| 5. Ծիրան | 08091000 | ★ ★ ★ | ★ ★ ★ |
| 6. Կեռաս | 08092050 | ★ ★ ★ | ★ ★ ★ |
| 7. Դեղձ | 08093090 | ★ ★ ★ | ★ ★ ★ |
| 8. Սալոր | 08094005 | ★ ★ ★ | ★ ★ ★ |

Աղբյուր՝ «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2008-2009

Երկու տարիների արտահանման ցուցանիշները վկայում են այն մասին, որ հայկական մրգերի արտահանումը գլխավորապես ներկայացված է *կորիզավորների խմբով (ծիրան, կեռաս, դեղձ, սալոր) եւ խաղողով*: Դա ճիշտ է նաեւ այն դեպքում, եթե որպես հիմք ընդունվեն ոչ թե 2, այլ ավելի մեծ թվով տարիների դիտարկումները:

Միեւնույն ժամանակ կարելի է նկատել, Աղյուսակ 1-ում տեղ գտած (այսինքն՝ արտահանված) մրգերի 7 տեսակները (բացառությամբ ընկուզապտուղների, որոնց մեծ մասը վերարտահանվել

[6] Ինչպես որ եղել է Խորհրդային Միության տարիներին (մինչեւ 1988-1990թթ.)
[7] Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակ
[8] Հայաստանում չաճող մրգերի տեսակների (օրինակ՝ կոկոսենու ընկույզ, հնդկական ընկույզ) արտահանումը նշանակում է, որ դրանք սկզբից ներմուծվել են, որից հետո դրանց մի մասը (սովորաբար շատ չնչին քանակներով) արտահանվել է

է) նույնությամբ համընկնում են Նկար 1-ի վերին 7 անուն մրգերի հետ: Սա վկայում է այն մասին, որ Հայաստանից արտահանվում են տեղում աճող այն մրգերը, որոնց արտադրության քանակները նշանակալից են՝ տարեկան ավելի քան 10,000 տոննա: Իհարկե, դա չի նշանակում, որ Հայաստանը չի կարող արտահանել հոն կամ նուռ, նամանավանդ, որ այդպիսի դեպքեր արդեն եղել են: Սակայն դրանց արտադրության քանակները այնքան փոքր են, որ լուրջ խնդիր են ստեղծում դրանց հավաքման, կուտակման եւ տեղափոխման նախապատրաստման համար: Ուստի սույն հետազոտության առանցքը կազմել են 7 անուն մրգեր, որոնց հիման վրա էլ կատարվել են Հայաստանի մրգերի արտահանման վերլուծությունը եւ առաջիկա տարիների կանխատեսումները: Դրանք են.

| | |
|---|---|
| **1. Ծիրան**  | **2. Կեռաս**  |
| **3. Դեղձ**  | **4. Սալոր**  |
| **5. Խաղող սեղանի սորտերի**  | **6. Խնձոր**  |
| **7. Տանձ**  | |

Մրգերի նշված տեսակների մեջ միայն *խնձորը* եւ *տանձն* են, որոնց արտահանման ծավալները բավականին փոքր են՝ չնայած արտադրության համեմատաբար մեծ քանակներին: Խնձորի ուսումնասիրության վրա արվել է առանձնահատուկ շեշտադրություն՝ հասկանալու համար, թե ի՞նչն է խանգարում լայն տարածում եւ բավականին որակյալ սորտեր ունեցող այդ մրգին արտահանման հարցում:

Ուսումնասիրված մյուս ապրանքների՝ **կարտոֆիլի եւ բանջարանոցային մշակաբույսերի** արտադրությունը Հայաստանում ներկայացված է հետեւյալ անվանացանկով.

- Կարտոֆիլ
- Վարունգ
- Գլուխ սոխ
- Սեղանի ճակնդեղ
- Կոլրաբի
- Կաղամբ
- Բիբար (տաքդեղ)
- Կանաչ սոխ
- Կանաչեղեն
- եւ այլն
- Ծաղկակաղամբ
- Բամիա
- Սխտոր
- Կանաչ ոլոռ
- Լոլիկ
- Սեղանի գազար
- Սմբուկ
- Բրոկկոլի

Մոտ 2 տասնյակ կազմող այս անվանացանկից նշանակալից քանակներով արտադրվում են միայն 10-ը: Կարտոֆիլի եւ բանջարանոցային մշակաբույսերի դեպքում արտադրանքի քանակների կայունության մասին խոսելը դժվար է: Դրանց արտադրության ցիկլը մեկ տարի է: Կախված պահանջարկից, արտահանման հնարավորությունների առկայությունից եւ արտադրության առանձնահատկություններից (օրինակ՝ ցանքաշրջանառության

անհրաժեշտությունից), դրանց արտադրության քանակները տարեց տարի մեծապես տատանվում են: Ուստի ուսումնասիրության ենթակա ապրանքների կազմը սահմանելիս **առաջարկի կայունությունը**, որպես գործոն, չի կիրառվել: Փոխարենը ուժի մեջ են մնացել **արտադրության համեմատաբար մեծ քանակներ** ու **արտահանման փորձի** գործոնների կիրառությունը: Ստորեւ ներկայացված են Հայաստանում կարտոֆիլի եւ բանջարանոցային մշակաբույսերի առաջարկի (արտադրության) ցուցանիշները.

**Նկար 2 - Հայաստանում բանջարեղենի արտադրության քանակները 2008-2009թթ.-ին**




Աղբյուրներ՝
1. «Գյուղատնտես. մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը 2008-2009», ԱՎԾ, 2008-2009
2. Բնագավառի փորձագետներ եւ մշակությամբ զբաղվող տնտեսություններ

Բանջարանոցային մշակաբույսերի նշված ցանկից Հայաստանի ներքին սպառման պահանջարկը գերազանցող չափով արտադրվում է միայն *կարտոֆիլը*: Ուստի այն հանդիսացել է սույն հետազոտության առանձնահատուկ ուշադրության առարկան: Բանջարանոցային մշակաբույսերի մյուս տեսակների արտադրության եւ հատկապես՝ արտահանման քանակները բավականին փոքր են: Դրանց միջից, որպես ուսումնասիրության թիրախ, առանձնացվել են *լոլիկը, վարունգը, պղպեղը*: Դրանք ունեն համեմատաբար մեծ արտադրության եւ արտահանման քանակներ: Այս երեք մշակաբույսերը հանդիսանում են նաեւ ջերմոցային տնտեսություններում ամենից շատ արտադրվող ապրանքները, ինչը թույլ է տալիս ամբողջ տարվա ընթացքում ապահովել այդ ապրանքների առաջարկը: *Կաղամբը, սմբուկը* եւ *գլուխ սոխը* ներառվել են հետազոտության մեջ իրենց արտադրության համեմատաբար մեծ քանակների պատճառով: Տարբեր տարիների դրանք եւս փոքր քանակներով արտահանվել են:

Այսպիսով՝ սույն հետազոտության շրջանակներում ապրանքների «բանջարեղեն» խմբում ուսումնասիրվել են հետեւյալ ապրանքները.

| | |
|---|---|
| **8. Կարտոֆիլ**  | **9. Լոլիկ**  |
| **10. Վարունգ**  | **11. Պղպեղ**  |
| **12. Կաղամբ**  | **13. Սմբուկ**  |
| **14. Գլուխ սոխ**  | |

Ասվածը չի նշանակում, որ մյուս ապրանքները սույն հետազոտության մեջ լիովին շրջանցվել են: Դրանց եւս տարբեր առիթներով եւ անհրաժեշտության դեպքում անդրադարձ է կատարվել:

Թիրախված 14 մշակաբույսերի ուսումնասիրության դեպքում սույն հետազոտությունն ունի հետեւյալ ընդգրկումը.

- թիրախված մրգերի տնկարկները կազմում են Հայաստանում առկա բոլոր մրգերի տնկարկների 88%-ը,
- թիրախված բանջարեղենի տեսակների ցանքատարածությունները կազմում են Հայաստանում առկա բոլոր բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունների 95%-ը:

! Այսուհետ հետազոտության կողմից թիրախված 7 ապրանքների՝ խաղողի, ծիրանի, դեղձի, սալորի, կեռասի, խնձորի եւ տանձի համախմբությունը կբնորոշվի **«մրգեր»** կամ **«պտուղներ»** բառերով, իսկ մյուս 7 ապրանքները՝ կարտոֆիլը, լոլիկը, վարունգը, կաղամբը, պղպեղը, սմբուկը եւ գլուխ սոխը՝ **«բանջարեղեն»** կամ **«բանջարանոցային մշակաբույսեր»** բառերով:

### 1.2.2 Տեղեկատվության աղբյուրները

Ուսումնասիրության իրականացման նպատակով օգտագործվել են տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքագրման, համադրման, ճշգրտման եւ ամփոփման մեթոդը: Մրգերի եւ բանջարեղենի արտադրության, սպառման, արտահանման, եւ ներմուծման մասին տեղեկությունները ստացվել են այդ մասին իրազեկ բոլոր աղբյուրներից: Տեղեկատվության աղբյուրները պայմանականորեն կարելի է բաժանել 3 խմբերի.

**Աղյուսակ 2 - Հետազոտության իրականացման համար օգտագործված տեղեկատվության աղբյուրները**

| | | |
|---|---|---|
| **1.** | **Պաշտոնական աղբյուրներ** | ▶ ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն[9]<br>▶ ՀՀ Էկոնոմիկայի Նախարարություն[10]<br>▶ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն[11]<br>▶ ՀՀ Կառավարության առընթեր Պետական Եկամուտների Կոմիտե[12], իր երկու կառուցվածքային ստորաբաժանումներով՝ Մաքսային ծառայություն[13] եւ Հարկային ծառայություն[14]<br>▶ Մարզպետարաններ, ի դեմս իրենց Գյուղատնտեսության վարչությունների |
| **2.** | **Ոչ պաշտոնական կամ փորձագիտական աղբյուրներ** | ▶ Մրգերի եւ բանջարեղենի խոշոր արտադրողներ<br>▶ Թարմ մրգերի եւ բանջարեղենի արտահանողներ<br>▶ Թարմ մրգերի եւ բանջարեղենի ներմուծողներ<br>▶ ԳԱՀԿ[15]<br>▶ ԳԱՄԿ<br>▶ IFAD<br>▶ ՀՄՀՀ<br>▶ Գյուղմթերքների արտադրողների ասոցիացիաներ |
| **3.** | **Հրապարակումներ** | ▶ Մամուլ, վերլուծական հաշվետվություններ, տեղեկատուներ |

Տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը պայմանավորված է եղել հետեւյալ հանգամանքներով.

- Չկա մի որեւէ կառույց, որն ունենա սույն ուսումնասիրության իրականացման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը. այն ցրված է տարբեր աղբյուրների մեջ;
- Հայաստանն իր անկախության տարիներին եւ առ այսօր դեռ չի իրականացրել Գյուղատնտեսության համատարած հաշվառում (Census of Agriculture): ԱՎԾ-ն, որը պատասխանատու է այդ միջոցառման իրականացման համար, գյուղատնտեսության հիմնական ցուցանիշները ստանում է տարբեր հետազոտությունների միջոցով: Օրինակ՝ առանձին իրականացվում են գյուղտեխնիկայի, մշակաբույսերի ցանքատարածությունների, բերքատվության եւ բերքի քանակի, անասնագլխաքանակի հաշվառման միջոցառումներ: Սակայն գյուղատնտեսական ցուցանիշների հաշվառման համակարգը պարունակում է որոշակի թերություններ: Ուստի ցածր հավաստիությամբ տեղեկությունները համադրվել են այլ՝ իրարից անկախ մեկ այլ աղբյուրի տվյալների հետ: Եթե արձանագրվել են տարբերություններ, ապա մենք փորձել ենք հասկանալ դրանց պատճառները եւ փորձագիտական կարծիքի մակարդակով իրականացնել ճշգրտումներ:

Ստորեւ բերված մատրիցը ցույց է տալիս, թե կոնկրետ որ աղբյուրից են հավաքվել հետազոտության առարկայի վերաբերյալ տեղեկությունները.

[9] Վեբ կայք՝ www.armstat.am
[10] Վեբ կայք՝ www.mineconomy.am
[11] Վեբ կայք՝ www.minagro.am
[12] Վեբ կայք՝ www.petekamutner.am
[13] Վեբ կայք՝ www.customs.am
[14] Վեբ կայք՝ www.taxservice.am
[15] Վեբ կայք՝ www.asrc.am

**Աղյուսակ 3 - Տեղեկատվության աղբյուրների դասակարգումն ըստ հետազոտության առարկայի**

| Տեղեկատվության աղբյուրներ ↓ | Հետազոտության առարկան | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արտադրության քանակներ | Սպառման քանակներ | Արտահանման քանակներ | Ներմուծման քանակներ | Արտադրողներ | Արտահանողներ | Արտադրության աշխարհագրություն | Սեզոնայնություն | Գներ |
| ԱՎԾ | ★ | ★ | ★ | ★ | | | ★ | | ★ |
| ՀՀ Էկոնոմիկայի Նախարարություն | | | | | | | | | |
| ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն | ★ | | ★ | | ★ | ★ | ★ | ★ | ★ |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ | | | ★ | ★ | | ★ | | | |
| Մարզպետարանների Գյուղ վարչություններ | | | | | ★ | | ★ | ★ | ★ |
| Արտադրողներ | ★ | | | | ★ | ★ | ★ | ★ | ★ |
| Արտահանողներ | | | ★ | | ★ | ★ | ★ | ★ | ★ |
| Ներմուծողներ | | | | ★ | | | | ★ | ★ |
| ԳԱՀԿ | ★ | | ★ | | | | ★ | ★ | ★ |
| ԳԱՄԿ | ★ | | | | ★ | ★ | ★ | ★ | ★ |
| IFAD | ★ | | | | ★ | | ★ | ★ | |
| ՀՄՀՀ | ★ | | | | ★ | | ★ | | |
| Ասոցիացիաներ | ★ | | ★ | | ★ | ★ | ★ | ★ | ★ |
| Մամուլ, վերլուծական հաշվետվություններ | ★ | ★ | ★ | ★ | ★ | ★ | ★ | ★ | ★ |

## 1.2.3 <u>Տեղեկատվության հավաքագրումը</u>

Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկությունների ստացման համար կիրառվել են տարբեր եղանակներ: Դա թելադրված է այն հանգամանքով, որ սույն ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկատվությունն ըստ հասանելիության բաժանվում է 3 մասի.

1) *<u>Հեշտ հասանելի (առկա, ոչ գաղտնի) տեղեկատվություն</u>*

Այդ շարքում են մրգերի եւ բանջարեղենի արտադրության, արտահանման եւ ներմուծման **<u>քանակական տվյալները</u>**, մրգերի եւ բանջարեղենի արտադրության բազան կազմող ցուցանիշները՝ **մշակության տարածություններ** եւ **բերքատվության ցուցանիշներ**: Այս ցուցանիշները առկա են նաեւ **մարզերի կտրվածքով**: Հեշտ հասանելի է նաեւ մրգերի եւ բանջարեղենի **գների** վերաբերյալ տեղեկությունները, որոնք վերաբերվում են մեծածախ եւ մանրածախ գներին, վերջնական սպառման եւ վերամշակման գներին: Այս բոլոր ցուցանիշները հնարավոր է ներկայացնել բավարար երկար ժամանակահատվածի մեջ:

2) *<u>Միջին հասանելիության տեղեկատվություն</u>*

Որոշակի բարդության հետ է կապված բոլոր արտահանողների, ներմուծողների եւ խոշոր արտադրողների հայտնաբերումը, այն իմաստով՝ որ այդ տեղեկատվությունը պատրաստի վիճակում չկա եւ պետք էր ամբողջապես վեր հանել ուսումնասիրության արդյունքում:

*3) Դժվար հասանելի տեղեկատվություն*
Այն տեղեկատվությունը, որը վերաբերվում է առանձին տնտեսվարողների գործունեությանը, սովորաբար դժվար է հայթայթվում: Մասնավորապես խոսքը գնում է առանձին արտահանողների եւ ներմուծողների իրացման շրջանառության, նրանց իրացման կառուցվածքի մասին: Այս հարցերի վերաբերյալ տեղեկատվության մեկ այլ աղբյուր է հանդիսացել Մաքսային Ծառայությունը:

Առանձին դժվարություն է ներկայացրել մրգերի եւ բանջարեղենի սպառման ծավալների եւ պահանջարկի գնահատումը՝ 2 պատճառներով.

- Մրգերի իրական սպառման ծավալների վերաբերյալ տեղեկություններ չկան: Եթե մենք հիմնվենք ՀՀ Առողջապահության Նախարարության տվյալների վրա, համաձայն որի մեկ մարդու կողմից մրգերի սպառման նորման 200գ է եւ կարտոֆիլի սպառման նորման՝ 250գ, ապա կարելի է հաշվարկել, թե որքան է կազմում դրանց նկատմամբ պահանջարկը: Սակայն այդ պահանջարկը կարող է չբավարարվել 2 պատճառներով. ա) առաջարկի բացակայության կամ անբավարարության պատճառով, եւ բ) գնողունակ պահանջարկի ցածր մակարդակի պատճառով: Մրգերի եւ բանջարեղենի սպառման ծավալների հաշվարկման եւ կանխատեսումների կատարման համար վերջին գործոնն ունի մեկ ազդեցություն եւս, որը շարադրված է հաջորդ;
- Մրգերի առանձին տեսակների նկատմամբ պահանջարկն ունի երկակի դրսեւորում. ա) փաստացի՝ օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջներով պայմանավորված պահանջարկ, եւ բ) գնողունակ պահանջարկ: Ցանկացած մթերքի սպառման մակարդակը պայմանավորված է միայն գնողունակ պահանջարկով: Իսկ վերջինս դինամիկ ցուցանիշ է եւ փոփոխվում է մարդկանց սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխության արդյունքում: Ուստի դժվար է գնահատել գալիք տարիներին գնողունակ պահանջարկի փոփոխության աստիճանը:

*Հեշտ հասանելի* տեղեկատվության ստացման համար կիրառվել են անհատական հարցազրույցների, պաշտոնական գրավոր դիմումների, ինտերնետային հետազոտության եւ առկա տպագիր նյութերի ուսումնասիրության մեթոդը: Մյուս տեղեկությունները (*միջին կամ դժվար հասանելի*) ստացվել են հարցազրույցների եւ հարցումների արդյունքում՝ հիմնականում ոչ պաշտոնական ուղիներով:

Զուտ **տեխնիկապես** տեղեկատվության հավաքագրման գործողություններն իրականացվել են *աղբյուրի մոտ:* Դա նշանակում է, որ առաջադրանքի կատարմանը ներգրավված խորհրդատուները այցելել են բոլոր մարզերը եւ յուրաքանչյուր մարզում մի շարք համայնքներ: Հատկապես մարզերում տեղեկատվության հավաքագրման ժամանակ լայնորեն կիրառվել է «ձնագնդի մեթոդը», որի դեպքում հարցվողներն իրենք են տեղեկություններ փոխանցել տեղեկատվության այլ աղբյուրների մասին (օրինակ՝ մի արտադրողը կամ արտահանողը տեղեկություն է տվել այլ արտադրողների կամ արտահանողների մասին):

## 1.3 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

*Գյուղատնտեսությունը* Հայաստանի տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է: Ընկած լինելով ազգային անվտանգության կարեւորագույն բաղադրիչներից մեկի՝ սննդի անվտանգության եւ ինքնաբավության ապահովման հիմքում, գյուղատնտեսությունը մշտապես գտնվում է Հայաստանի իշխանությունների ուշադրության ներքո: Ցավոք, ոլորտը լի է խնդիրներով, որոնք մեծապես դանդաղեցնում են նրա զարգացումը՝ առնվազն երկրի ընդհանուր զարգացման տեմպերին համահունչ: Մինչեւ 2009թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը Հայաստանի տնտեսությունն արձանագրում էր բավականին

տպավորիչ եւ կայուն աճ՝ տարեկան ավելի քան 10%: Գյուղատնտեսության ոլորտը եւս արձանագրել է զարգացում, սակայն շատ ավելի դանդաղ տեմպերով, ինչը հանգեցրել է տնտեսության մեջ գյուղատնտեսության մասնաբաժնի կրճատման: Այսպես, եթե 2005թ.-ի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմում էր Հայաստանի ՀՆԱ-ի 22.2%-ը, ապա մինչճգնաժամային 2007թ.-ին այն արդեն կազմում էր 20.1%-ը, իսկ ճգնաժամային 2009թ.-ին՝ 17.6%:

Հայաստանի գյուղատնտեսության մեջ գերակա ուղղությունը *բուսաբուծությունն* է: 2009թ.-ին բուսաբուծության բնագավառում թողարկվել է Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի 2/3-ը: Գյուղատնտեսության եւ բուսաբուծության համախառն արտադրանքի ցուցանիշները ներկայացված են ստորեւ.

**Նկար 3 - Հայաստանի ՀՆԱ-ի, գյուղատնտեսության եւ բուսաբուծության համախառն արտադրանքների (ընթացիկ գներով) համադրություն, 2005-2009թթ.**




Աղբյուր՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», ԱՎԾ, 2009

*Ընթացիկ գներով* գյուղատնտեսության կամ բուսաբուծության արտադրանքի դիտարկումը ցույց է տալիս կայուն եւ դանդաղ աճ: Սակայն եթե գյուղատնտեսության կամ բուսաբուծության արտադրանքի ֆիզիկական ծավալը հաշվարկվի *համադրելի գներով*, ապա կարելի է նկատել միանգամայն այլ պատկեր: Տարեց տարի բուսաբուծության արտադրանքը կտրուկ տատանվում է՝ անկայունություն եւ տատանումներ առաջացնելով ողջ գյուղատնտեսական արտադրանքի ծավալում (տես Նկար 4): Դրա համար առկա են մի շարք պատճառներ.

- Հայաստանի կլիմայական պայմանները ենթարկվում են կտրուկ տատանումների, որոնք պատճառ են հանդիսանում ցրտահարությունների, կարկտահարությունների կամ երաշտի;
- Գյուղմթերքների իրացման հնարավորությունները անընդհատ փոփոխվում են եւ միշտ չէ, որ դրանք ավելանում են: Հարեւան երկրների հետ ճանապարհային հաղորդակցության ընդհատումը, խաթարումը կամ որեւէ ապրանքի արտահանման համար խոչընդոտների ստեղծումը հաճախ առաջացնում է ապրանքային լճացում (ինչպես կարտոֆիլի դեպքում): Դա իր հերթին էժանացնում է գյուղմթերքների գները, որոնք երբեմն լինում են ավելի ցածր, քան ապրանքների ինքնարժեքն է:

- Գյուղմթերքների արտադրությամբ զբաղվող տնտեսությունների մեծ մասը (հատկապես փոքր տնտեսությունները) զգալի թերացումներ է թույլ տալիս մշակության ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման հարցերում:

**Նկար 4 - Հայաստանի ՀՆԱ-ի, գյուղատնտեսության եւ բուսաբուծության համախառն արտադրանքների (համադրելի գներով) ֆիզիկական ծավալի ինդեքսները, 2005-2009թթ.**




Աղբյուրներ՝
1. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք», ԱՎԾ, 2009
2. «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005-2009», ԱՎԾ, 2006-2010

Հայաստանի բուսաբուծության արտադրանքի ծավալների վրա ազդող գլխավոր գործոնը *բնակլիմայական պայմաններն* են: Ջերմաստիճանի կտրուկ անկումները կարող են 1-2 օրերի ընթացքում վճռել ամբողջ տարվա բերքի ճակատագիրը: Ջերմաստիճանային անկումների նկատմամբ հատկապես զգայուն են *բազմամյա տնկարկները*՝ պտղի եւ խաղողի այգիները: Վերջին 10 տարիների դիտարկումները վկայում են անցանկալի օրինաչափության մասին. միջին հաշվով երեք տարին մեկ անգամ պտղի այն տեսակները, որոնք ծաղկում են ավելի վաղ, զոհ են եղանակային անբարենպաստ պայմաններին: Դրանք հատկապես այն պտուղներն են, որոնք ունեն ավելի մեծ պահանջարկ եւ արտահանման ավելի մեծ հնարավորություններ (ծիրան, դեղձ) Պտղի բերքի կորուստի ժամանակագրությունը հետեւյալն է.

| | | |
|---|---|---|
| 2002/2003 ձմեռ | ▶ | Արարատյան դաշտավայրում մեծ քանակությամբ խաղողի այգիներ վնասվում են աննախադեպ ցրտերի (-20-25°C) արդյունքում |
| 2004 ապրիլ | ▶ | Վաղ գարնանային ցրտահարությունների զոհ է գնում ծիրանի բերքի 90%-ը |
| 2007 | ▶ | Վաղ գարնանային ցրտահարությունների զոհ է գնում ծիրանի բերքի 80%-ը |
| 2008 | ▶ | Անբարենպաստ եղանակային պայմաններին զոհ է Արմավիրի մարզի դեղձի բերքի 80%-ը (Արմավիրի մարզում աճում է Հայաստանի դեղձի բերքի 50%-ը) |
| 2010 մարտ-մայիս | ▶ | Վաղ գարնանային ցրտահարությունների, ինչպես նաեւ անձրեւային տեղումների եւ խոնավ եղանակին զոհ է գնում ծիրանի բերքի 90%-ը |
| 2010 | ▶ | Արարատյան դաշտում անձրեւային տեղումների եւ խոնավ եղանակին զոհ է գնում դեղձի բերքի 90%-ը: Դեղձի մեծածախ գինը արձանագրում է ռեկորդ՝ 1,000-1,200 դրամ/կգ |

Չնայած անկայուն եղանակային պայմանների ազդեցությանը, գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքում տեղի են ունենում ուշագրավ փոփոխություններ: Ի հաշիվ *անասնաբուծության* արտադրանքի՝ աստիճանաբար ավելանում է *բուսաբուծության* արտադրանքի մասնաբաժինը (տես Նկար 5): Դա պայմանավորված է հետեւյալ գործոններով.

- Փորձելով հասնել ռազմավարական նշանակության գյուղատնտեսական արտադրանքի՝ հացահատիկի գծով սեփական ինքնաբավության ապահովմանը, ՀՀ Կառավարությունը մեծ ջանքեր է ներդնում, որպեսզի խթանի դրա արտադրության ծավալները;
- 2005թ.-ից ներդրվել է սերմերի եւ տնկանյութի հավաստագրման համակարգ, որը ֆերմերներին հնարավորություն է տալիս հավաստագրված սերմարտադրողներից

ծեռքբերել փորձարկում (ապրոբացիա) անցած եւ հավաստագիր ստացած ավելի բարձրորակ սերմացու: Այսօր շուկայից կարելի է ձեռք բերել հացահատիկի, կարտոֆիլի, հատիկաընդեղենային, բանջարանոցային եւ կերային մշակաբույսերի հավաստագրված սերմացու, ինչպես նաեւ պտղի հավաստագրված տնկանյութ:

- Շարունակվում են գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: «Հազարամյակների Մարտահրավերներ», «Գյուղական ձեռնարկությունների եւ փոքրածավալ առեւտրային գյուղատնտեսության զարգացման»[16], «Գյուղատնտեսական ծառայություններ»[17] Ծրագրերի շրջանակներում, ինչպես նաեւ մասնավոր ներդրումների հաշվին զգալիորեն ընդլայնվել են ոռոգվող հողատարածությունները, բարելավվել են ոռոգման ջրագծային ցանցերը:

**Նկար 5 - Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքը, 2005-2009թթ.**




Չնայած բնակլիմայական պայմաններից ունեցած մեծ կախվածությանը, վերջին 10 տարիներին կայուն կերպով աճում են պտղի եւ խաղողի այգետարածքները, համապատասխանաբար նաեւ՝ արտադրության քանակները: Նույն միտումները, սակայն, առկա չեն բանջարեղենի արտադրության հարցում: Սույն հետազոտության առանցքը կազմող այդ ապրանքային խմբերի առավել հանգամանալից վերլուծությունը բերված է հաջորդիվ:

[16] Իրականացվել է 2005-2010թթ.-ին Գյուղատնտեսական Բարեփոխումների Աջակցություն ԾԻԳ-ի կողմից՝ հիմնականում Համաշխարհային Բանկի ֆինանսական աջակցությամբ
[17] IFAD-ի ծրագրերից է, որն իրականացվել է 2001-2005թթ.-ին

# 2 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

## 2.1 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

### 2.1.1 Մշակության տարածքներ

Մրգերի եւ բանջարեղենի մշակության տարածքների հարցը հնարավոր չէ դիտարկել ամբողջ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության տարածքներից առանձին: Այդ տարածքները անընդհատ փոփոխվում են եւ երբեմն ի հաշիվ մեկը մյուսի: Դրա համար առկա են բազմաթիվ պատճառներ, որոնք իրենց ազդեցությունը կունենան առաջիկա տարիներին եւս: Հայաստանում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության տարածքների հարցում իրավիճակն այն է, որ վերջին 5 տարիներին արձանագրվել է դրանց կրճատում: Եթե 2005թ.-ին գյուղատնտեսական մշակաբույսերի բոլոր ցանքատարածությունները, ներառյալ բազմամյա տնկարկները, կազմում էին 382 հազ. հա, ապա 2009թ.-ին նույն ցուցանիշը կազմել է 353 հազ. հա: Ցանքատարածքների այս անկումը տեղի է ունեցել հիմնականում ի հաշիվ հացահատիկային մշակաբույսերի, որոնց տարածքները 2005-2009թթ. ժամանակահատվածում կրճատվել են շուրջ 38 հազ. հա-ով[18]: Հացահատիկից «ազատված» տարածքների մի մասը, ինչպես նաեւ նոր յուրացված հողերը ուղղվել են այլ մշակաբույսերի աճեցմանը, սակայն 5 տարիների ընթացքում դա կազմում է ընդամենը 10-12 հազ. հա, այնպես որ ակնհայտ է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների նվազման փաստը:

Սույն հետազոտության տեսանկյունից կարեւոր ապրանքների՝ մրգերի (պտղի եւ խաղողի) եւ բանջարեղենի դեպքում առկա է տնկարկների եւ ցանքատարածությունների կայունության կամ աճի միտում (տես Նկար 6):

**Նկար 6 - Հայաստանում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները եւ տնկարկները 2005-2009թթ.-ին**




| | Հացահատիկ | Հատիկա-ընդեղեն | Տեխնիկական | Կարտոֆիլ | Բանջարեղեն | Բոստան | Կերային | Պտուղ | Խաղող |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2005 | 207,741 | 1,849 | 536 | 34,440 | 22,539 | 3,865 | 60,854 | 34,879 | 14,932 |
| 2006 | 180,432 | 1,974 | 773 | 33,045 | 24,364 | 4,025 | 65,550 | 35,403 | 15,746 |
| 2007 | 174,224 | 1,989 | 1,616 | 31,674 | 25,607 | 5,884 | 64,989 | 38,020 | 15,888 |
| 2008 | 170,630 | 2,208 | 2,386 | 34,298 | 24,219 | 5,446 | 65,272 | 36,748 | 16,796 |
| 2009 | 169,548 | 2,085 | 2,418 | 31,998 | 23,914 | 6,163 | 63,888 | 36,959 | 16,480 |

Աղբյուրներ՝ Մարզպետարանների Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետեր եւ ԱՎԾ

[18] Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների կրճատումը պայմանավորված է բերքատվության ցածր ցուցանիշներով, որն էլ իր հերթին պայմանավորված է որակյալ սերմացուի անբավարարությամբ, ոռոգվող հողատարածքների սակավությամբ եւ եղանակային անբարենպաստ պայմաններով

Մրգերի (պտղի, խաղողի) եւ բանջարեղենի տնկարկների եւ ցանքատարածությունների աճի միտումը կամ հարաբերական կայունությունը պայմանավորված է այդ ապրանքների իրացման աստիճանաբար մեծացող հնարավորություններով եւ չբավարարվող ներքին պահանջարկով: Սակայն մրգերի կամ բանջարեղենի առանձին տեսակների համար այդ հնարավորությունները տարբեր են եւ դրանք վերլուծված են հաջորդիվ:

### *2.1.1.1 Մրգերի այգետարածքները*

2009թ. աշնանը կատարված հաշվառման արդյունքներով մրգերի այգետարածքները կազմել են 37 հազ. հա, իսկ խաղողինը՝ 16.5 հազ. հա: Դա առնվազն 10%-ով ավելին է, քան 2000-ական թթ. սկզբին եղած այգետարածքները: Մրգերի այգետարածքների բաշխվածքն ըստ տեսակների վկայում է, որ Հայաստանում մշակվող հիմնական մրգերն են խաղողը, ծիրանը, խնձորը եւ դեղձը (տես Նկար 7):

**Նկար 7 - Մրգերի այգետարածքներն ըստ տեսակների 2009թ.-ին**




**Աղյուսակ 4 - Մրգերի այգետարածքների բաշխվածքն ըստ տեսակների, 2009թ.**

| Մրգեր | Այգետարածք-ների մասնա-բաժինն ընդ-հանուրի մեջ |
|---|---|
| Խաղող | 30.8% |
| Ծիրան | 18.7% |
| Խնձոր | 18.0% |
| Դեղձ | 10.1% |
| Տանձ | 5.5% |
| Հատապտուղներ | 4.0% |
| Սալոր | 3.7% |
| Ընկուզապտուղներ | 3.2% |
| Կեռաս | 2.1% |
| Այլ կորիզավորներ[19] | 2.1% |
| Մերձարեւադարձայիններ | 1.3% |
| Մերկեւիլ | 0.6% |
| **Ընդամենը** | **100.0%** |

Աղբյուրներ՝ Մարզպետարանների Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետեր եւ ԱՎԾ

Մրգերի այգետարածքների չափերը մշտապես փոփոխվում են առնվազն երկու պատճառներով. ա) ամեն տարի տնկվում են նոր այգիներ, եւ բ) ամեն տարի առկա այգետարածքների մի մասը տարբեր պատճառներով (ցրտահարություն, ցածր բերքատվություն) քանդվում են: Այս երկու գործընթացների դրական կամ բացասական հաշվեկշռի չափով էլ փոփոխվում են այգետարածքների չափերը:

Նոր այգիների հիմնման եւ հների քանդման գործընթացը շարունակական բնույթ ունի եւ տեղի է ունեցել նաեւ վերջին 5 տարիներին: Նոր այգիների հիմնման գործընթացը խթանող նախադրյալները հետեւյալն են.

[19] Բալ, հոն

- Գյուղատնտեսական մթերքների արտադրության մեջ ներդրումներ իրականացնող սուբյեկտները նախընտրում են մրգերի այգետարածքների հիմնումը, քանի որ այն ներդրումների կապիտալիզացիայի հնարավորություն է տալիս: Բացի այդ, ըստ մասնագետների կարծիքների, մրգատու եւ խաղողի այգիների խնամքը (ագրոտեխնիկական միջոցառումները) ավելի հեշտ է՝ համեմատաբար քիչ ժամանակատար լինելու պատճառով:
- Ավելի էժան եւ սեփական պահանջներին համապատասխան հումք ունենալու համար որոշ վերամշակողներ («ՄԱՊ», «Թամարա Ֆրութ», «Ավշարի գինու գործարան») հիմնում են սեփական այգիներ: Այդպիսի միտում առկա է նաեւ արտահանողների մոտ: Վերջիններս հիմա էլ պատրաստ են ներդրումներ անել որոշ մրգերի արտադրության մեջ, եթե ունենային ազատ ֆինանսական միջոցներ կամ էժան (ոչ ավել 10-12%) եւ երկարաժամկետ (առնվազն 7-8 տարվա) վարկային միջոցներ:
- Տարեց տարի մեծանում են վերամշակման կամ արտահանման նպատակով հայկական մրգերի մթերումների/գնումների ծավալները: Անշուշտ, այդ միտումները մրգերի տարբեր տեսակների գծով տարբեր են, սակայն ընդհանուր պատկերը դրական է: Այդ մասին առավել հանգամանալից ներկայացված է **«ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ» գլխում (տես էջ 58):**
- Հայաստանում բուսաբուծության ավանդաբար թողարկվող արտադրանքի մեջ մրգերը համեմատաբար բարձրարժեքն են, ինչը բարձրացնում է դրանց աճեցմամբ զբաղվելու տնտեսական գրավչությունը:
- Մրգերի եւ ոչ մի տեսակի գծով չկան արտադրության այնպիսի քանակներ, որոնք գերազանցում են ներքին սպառման պահանջարկը:

Այս գործընթացների արդյունքում մրգերի այգետարածքների փոփոխությունը 2004-2009թթ.-ին ունի հետեւյալ պատկերը.

**Աղյուսակ 5 - Մրգերի այգետարածքների փոփոխությունը 2004-2009թթ.**

| Մրգեր | 2004 | | 2009 | | Փոփոխությունը 2004-2009թթ. ժամանակահատվածում | |
|---|---|---|---|---|---|---|
| | Բոլոր տնկարկները | որից՝ բերքատու տարիքի | Բոլոր տնկարկները | որից՝ բերքատու տարիքի | Բոլոր տնկարկները | Բերքատու տարիքի տնկարկները |
| Խաղող | 14,856 | 13,560 | 16,480 | 14,292 | +1,624 | +732 |
| Ծիրան | 9,692 | 7,635 | 9,983 | 7,808 | +291 | +173 |
| Խնձոր | 9,861 | 8,839 | 9,627 | 8,811 | -234 | -28 |
| Դեղձ | 4,670 | 3,126 | 5,385 | 4,283 | +715 | +1,157 |
| Տանձ | 3,159 | 2,856 | 2,936 | 2,756 | -223 | -100 |
| Սալոր | 1,521 | 1,355 | 1,976 | 1,536 | +455 | +181 |
| Կեռաս | 1,054 | 920 | 1,126 | 997 | +72 | +77 |

Աղբյուրներ՝
1. Մարզպետարանների Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետեր
2. ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն
3. ԱՎԾ

Ինչպես կարելի է հասկանալ Նկար 7-ից եւ Աղյուսակ 5-ից, մրգերի այգետարածքների չափերը ներկայացված են ըստ պաշտոնական տվյալների: Համադրելով այս տվյալները բնագավառի մասնագետների եւ փորձագետների կողմից ստացված ոչ պաշտոնական տեղեկատվության, նրանց կարծիքների եւ գնահատականների հետ, մենք եկել ենք այն եզրահանգմանը, որ դրանք

լիարժեք չեն: Նախքան այդ խնդրին անդրադառնալը, ներկայացնենք, թե ինչով են բացատրվում մրգերի առանձին տեսակների այգետարածքների փոփոխությունների միտումները.

**<u>Խաղողի</u>** այգետարածքների աճը պայմանավորված է 2004-2009թթ. Հայաստանի կոնյակի եւ գինու արտադրության բնագավառների բուռն զարգացմամբ: Ավելացել են ինչպես վերամշակող ձեռնարկությունների քանակը, այնպես էլ նրանց կողմից կատարվող մթերումների քանակը: Մասնավորապես, 2004-2009թթ.-ին կոնյակի եւ գինու արտադրության նպատակով կատարված խաղողի մթերումների քանակն ավելացել է 2.7 անգամ: Այդ մասին առավել հանգամանալից ներկայացված է **«<u>Վերամշակողների մթերումները</u> » բաժնում** (տես էջ 86): Սակայն պետք է հաշվի առնել, որ այն ինչ վերամշակվում է, բնակչության սպառման կամ արտահանման տեսանկյունից հետաքրքրություն չի ներկայացնում: Խնդիրը կայանում է խաղողի սորտային կազմի մեջ: Հայաստանում աճեցվող խաղողի սորտերի մեջ **գերակշռում են տեխնիկական <u>սորտերը</u>** (տես Նկար 8): Դրանց նկատմամբ պահնաջարկը ներկայացվում է վերամշակողների կողմից: Բնակչության սպառման (այդ թվում նաեւ արտահանման) համար նախատեսված **սեղանի սորտերի** տնկարկների համար առկա են տարբեր գնահատականներ. 10-12% ըստ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության մասնագետների տվյալների եւ 18.4%՝ ըստ մարզպետարանների Գյուղատնտեսության վարչությունների տրամադրած տվյալների:

**Նկար 8 - Խաղողի տնկարկների բաշխվածքն ըստ սորտային կազմի, 2009թ.**




Խաղողի այգետարածքների ավելացման գործընթացը որոշակիորեն դանդաղել է 2008-2009թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով: 2009-2010թթ. վերամշակողները կրճատել են իրենց մթերումների ծավալները: Արդյունքում առաջացել է հումքի ավելցուկ: Դժվարությունը կայանում է նրանում, որ վերամշակողների կողմից մթերվում են տեխնիկական սորտեր եւ դրանց մեծ մասը հնարավոր չէ իրացնել ներքին շուկայում (բնակչության շրջանում) կամ արտահանել: Ուստի շատ արտադրողներ, չունենալով իրենց ապրանքը իրացնելու հնարավորություն, ստիպված են այն վաճառել նույն վերամշակողներին՝ անգամ ինքնարժեքից ցածր գնով (85-95 դրամ/կգ): Սա լուրջ վտանգ է խաղողագործությամբ զբաղվող տնտեսությունների համար եւ եթե առաջիկա 1-2 տարիներին չվերականգնվեն կամ չգերազանցվեն 2008թ. մթերումների ծավալները (մոտ 145 հազ. տոննա/տարեկան), ապա կարող է սկսվել խաղողի այգիների քանդման գործընթաց:

Հետազոտության առարկա մյուս մրգերից **<u>ծիրանը</u>**, **<u>դեղձը</u>**, **<u>սալորը</u>** եւ **<u>կեռասը</u>** չունեն այդպիսի խնդիրներ: Նրանց պահանջարկը գնալով մեծանում է, ինչն իր հերթին խթանում է նոր այգիների հիմնման գործընթացը: **Ծիրանը ամենապահանջված միրգն է**, որի բոլոր տեսակի եւ որակի բերքն էլ ունի իր սպառողները. բարձր որակի ապրանքը (մեծ չափեր, գեղեցիկ ապրանքային տեսք) գնվում է արտահանողների կողմից, բարձր եւ միջին որակի ապրանքը իրացվում է ներքին շուկայում՝ բնակչության շրջանում, եւ ցածրորակ ծիրանը մթերվում է վերամշակողների կողմից: Արտահանման համար ոչ պիտանի ծիրանի սորտի՝ «Սաթենիի» գնորդներն են չորացրած մթերքի արտադրողները: Ներքին չբավարարվող պահանջարկի եւ արտահանման հնարավորությունների ընդլայնման պատճառով ավելանում են նաեւ *դեղձի*, *սալորի* եւ *կեռասի* այգետարածքները: Վերջիններիս տարածքների աճը պայմանավորված է նաեւ ծիրանի նոր այգիների հիմնմամբ, քանի որ ծառերի փոշոտման արդյունավետությունը բարձրացնելու համար ծիրանի այգիներում տնկվում են նաեւ դեղձենիներ եւ սալորենիներ:

**<u>Խնձորի</u>** այգետարածքների անկումը (ինչպես երեւում է Աղյուսակ 5-ում) պետք է համարել ոչ թե միտում, այլ ընդունել որպես կայունության նշան: 2004-2010թթ. ժամանակահատվածում խնձորի այգետարածքները տատանվել են 9-10 հազ. հա-ի սահմաններում, տարեկան ավելանալով կամ նվազելով 200-250 հա-ի չափով: Բնագավառի մասնագետների գնահատականներով, այգետարածքների ընդհանուր **կայունության պատճառն այն է, որ խնձորի արտադրությունը մոտավորապես համընկնում է ներքին պահանջարկի ծավալների հետ**: Բացի այդ, խնձորն ունի մի առավելություն, որը չունեն կորիզավորները: **Նրա արտադրությունը մեծապես դիվերսիֆիկացված է արտադրության աշխարհագրության, սորտային կազմի եւ սեզոնայնության առումով**: Հայաստանում խնձոր արտադրվում է բոլոր մարզերում, ընդ որում բերքը ստացվում է 4 ամիսների ընթացքում (հուլիս-հոկտեմբեր) եւ իրացվում է 10 ամիսների (հուլիս-ապրիլ) ընթացքում: Այս պատճառներով միջին բարենպաստ տարում խնձորը հանդիսանում է Հայաստանում ամենաշատ սպառվող միրգը: Սակայն խնձորի այգետարածքների ավելացմանը խանգարում է այն խթանի բացակայությունը, որն առկա է կորիզավորների դեպքում՝ արտահանողների կողմից ներկայացվող պահանջարկը:

**<u>Տանձի</u>** դեպքում խնդիրը մի փոքր այլ է: Այգետարածքների հարաբերական կայունությունը կամ փոքր նվազման միտումը պայմանավորված է խոշոր արտադրողների բացակայությամբ, տանձենու տակ զբաղված այգետարածքների կտրտվածությամբ եւ ցրվածությամբ (մի զգալի մասը գտնվում է տնամերձ հողամասերում): Տանձը խնձորի նման աչքի է ընկնում սորտային կազմի բազմազանությամբ, սակայն քանի որ արտադրության ծավալները փոքր են, դժվար է խոսել դրանց մեծածախ առեւտրի կազմակերպման մասին: Տանձի այգետարածքների ընդլայնման համար որեւէ խթան չկա արտահանողների եւ վերամշակողների կողմից:

Այսպիսով, մրգերի այգետարածքների փոփոխության միտումները, ինչպես որ ներկայացնում է պաշտոնական վիճակագրությունը, ընդհանուր առմամբ ճիշտ են: Սակայն հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ գալիք տարիներին մրգերի արտադրության եւ արտահանման ծավալների փոփոխության կանխատեսման համար այդ տվյալները չեն կարող ամբողջապես կամ այդ տեսքով հիմք ընդունվել: Խնդիրը կայանում է նրանում, որ **ներկայումս առկա այգետարածքների մի մասը հաշվառված չէ կամ էլ արտացոլված չէ պաշտոնական տվյալներում**: Ուշագրավն այն է, որ այդ խնդիրը պայմանավորված է ոչ թե հաշվառող պետական (պաշտոնական) մարմնի՝ Ազգային Վիճակագրական Ծառայության թերացմամբ, այլ խիստ սուբյեկտիվ պատճառների առկայությամբ: Վերջին տարիներին նկատվում է միտում, որ բազմամյա տնկարկների՝ մրգերի այգիների հիմնման մեջ ներդրումներ են կատարում ոչ միայն անհատական գյուղացիական տնտեսությունները: Կան շատ տեղացի եւ արտասահմանյան գործարարներ, պարզապես մարդիկ, ովքեր ունեն ազատ դրամական միջոցներ, որոնք նախընտրում են ներդրումներ անել գյուղատնտեսության մեջ: Եվ այդ ներդրումների հիմնական ուղղությունը մրգերի այգիների հիմնումն է: Դա ուրախալի փաստ է, հատկապես որ ներդրողների մեծ մասը պահպանում է մրգերի աճեցման ագրոտեխնիկական միջոցառումների պահանջները, որոշները ներմուծել են նորարարական մեթոդներ, ինչպիսին է օրինակ կաթիլային ոռոգումը: Նոր այգիները հիմնվում են ոչ թե նախկին այգիների տեղում, այլ նոր յուրացվող հողերի վրա, որոնք գլխավորապես վարելահողեր են: Ահա հենց այստեղ է, որ ծագում է մրգերի այգետարածքների թերհաշվառման խնդիրը. **Նոր այգիների հիմնումից հետո այգետերերի մեծ մասը խուսափում են իրենց հողերը ձեւակերպել որպես բազմամյա տնկարկներ, այլ դրանք թողնում են նախկին նպատակային նշանակությամբ՝ որպես վարելահողեր**: Այգետերերի նման վարքագիծը ունի հետեւյալ բացատրությունը. վարելահողերի սեփականատերերը վճարում են հողի հարկ, որի մեծության ձեւավորման գլխավոր բաղադրիչներից մեկը հողի կադաստրային զուտ եկամտի մեծությունն է: Բազմամյա տնկարկների դեպքում հողի կադաստրային զուտ եկամտի մեծությունը էապես գերազանցում է վարելահողերի նույն ցուցանիշը, ինչը թանկացնում է նաեւ բազմամյա տնկարկների հողի հարկը: **Ավելի շատ հողի հարկ չմուծելու համար այգետերերը նախընտրում են իրենց հողերը ցույց տալ որպես վարելահողեր**: Հատկանշական է, որ այգետերերին չի հրապուրում անգամ

այն, որ եթե իրենք իրենց հողերը ձեւակերպեն որպես նոր հիմնված բազմամյա տնկարկներ, ապա իրենք կարող են ազատվել հողի հարկի վճարումից մինչեւ այդ այգիների բերքատու դառնալը: Խնդրի ձեւավորմանը նպաստում է նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքների ղեկավարներ եւ ավագանիներ), պետական կառավարման մարմինների (մարզպետարանների) եւ հողերի հաշվառման/գրանցման պետական մարմնի (կադաստր) աշխատանքի թերությունները:

Խնդրի մասշտաբները հասկանալու եւ մրգերի այգետարածքների մեջ որոշ ճշգրտումներ անելու համար մենք հավաքել ենք նաեւ ոչ պաշտոնական տվյալներ մարզպետարանների Գյուղատնտեսության վարչության պետերից եւ աշխատակիցներից[20], մրգերի խոշոր արտադրողներից, արտադրողների ասոցիացիաներից: Պետք է նշել, որ ստացված տվյալները գնահատականների մակարդակի են, մոտավոր եւ պետք է հիմք ընդունել որոշ վերապահումներով: Հավաքված ոչ պաշտոնական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 5 տարիներին (ինչպես նաեւ դրանից առաջ) մրգերի նոր այգիների հիմնման հիմնական մարզերն են Արմավիրի, Արարատի եւ Արագածոտնի մարզերը: Ընդհանուր առմամբ այս երեք մարզերում հիմնված այգիներից առնվազն մոտ 2.3 հազ. հա-ը հաշվառված չեն, որոնք հիմնականում կորիզավորներ են եւ խաղող: Նոր այգիների հիմնումն ավելի ինտենսիվ բնույթ է կրել Արմավիրի եւ Արագածոտնի մարզերում, որտեղ մեծ ներդրումների համար դեռեւս առկա են ընդարձակ հողատարածքներ (Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանում եւ Արագածոտնի մարզի Աշտարակի եւ Թալինի տարածաշրջաններում): Ըստ մարզերի, ըստ հիմնման տարիների եւ ըստ մրգերի առանձին տեսակների այդ երիտասարդ եւ չհաշվառված այգիները բաշխվում են հետեւյալ կերպ.

**Աղյուսակ 6 - 2005-2009թթ.-ին հիմնված եւ որպես բազմամյա տնկարկներ չհաշվառված այգիների բաշխվածքը**

| Մրգեր | Այգիների հիմնման տարիները → | 2005 | 2006 | 2007 | 2008 | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| Խաղող | Արարատի մարզ | ≈30 հա | ≈15 հա | ≈25 հա | ≈50 հա | |
| | Արմավիրի մարզ | | | | | |
| | Արագածոտնի մարզ | | | | | |
| | **Ընդամենը** | **≈30 հա** | **≈15 հա** | **≈25 հա** | **≈50 հա** | **≈120 հա** |
| | Բերքի տակ մտնելու տարիները | 2009 | 2010 | 2011 | 2012 | - |
| Ծիրան | Արարատի մարզ | ≈20 հա | ≈25 հա | ≈30 հա | | |
| | Արմավիրի մարզ | | | ≈200 հա | ≈200 հա | |
| | Արագածոտնի մարզ | | ≈140 հա | ≈140 հա | | |
| | **Ընդամենը** | **≈20 հա** | **≈165 հա** | **≈370 հա** | **≈200 հա** | **≈755 հա** |
| | Բերքի տակ մտնելու տարիները | 2010 | 2011 | 2012 | 2013 | - |
| Դեղձ | Արարատի մարզ | ≈10 հա | ≈15 հա | ≈20 հա | | |
| | Արմավիրի մարզ | | | ≈100 հա | ≈100 հա | |
| | Արագածոտնի մարզ | | ≈60 հա | ≈60 հա | | |
| | **Ընդամենը** | **≈10 հա** | **≈75 հա** | **≈180 հա** | **≈100 հա** | **≈365 հա** |
| | Բերքի տակ մտնելու տարիները | 2009 | 2010 | 2011 | 2012 | - |
| Սալոր | Արարատի մարզ | ≈10 հա | ≈10 հա | ≈12 հա | | |
| | Արմավիրի մարզ | | | ≈150 հա | ≈150 հա | |

[20] Նրանք հայտնել են իրենց անձնական կարծիքը եւ հանդես չեն եկել որպես պետական պաշտոնյաներ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Արագածոտնի մարզ | | ≈140 հա | ≈140 հա | | |
| | **Ընդամենը** | **≈10 հա** | **≈150 հա** | **≈302 հա** | **≈150 հա** | **≈612 հա** |
| | Բերքի տակ մտնելու տարիները | 2010 | 2011 | 2012 | 2013 | - |
| Կեռաս | Արարատի մարզ | ≈5 հա | | | | |
| | Արմավիրի մարզ | | | ≈150 հա | ≈150 հա | |
| | Արագածոտնի մարզ | | ≈60 հա | ≈60 հա | | |
| | **Ընդամենը** | **≈5 հա** | **≈60 հա** | **≈210 հա** | **≈150 հա** | **≈425 հա** |
| | Բերքի տակ մտնելու տարիները | 2009 | 2010 | 2011 | 2012 | - |

Աղբյուր՝ *ոչ պաշտոնական տվյալներ* Տվյալների հավաստիությունը՝ *շատ մոտավոր*

Բացի մրգերի նշված տեսակներից, չհաշվառված այգիներում առկա են նաեւ խնձորի այգետարածքներ (հիմնականում՝ Արարատի եւ Արմավիրի մարզերում): Դրանց չափերի վերաբերյալ տվյալները խիստ կցկտուր են եւ հավանաբար կազմում են 50-100 հա: Առաջիկա տարիներին մրգերի արտադրության քանակները գնահատելիս հարկ կլինի չհաշվառված այգետարածքներից ստացվելիք բերքը եւս հաշվի առնել: Խոսքը գնում է առնվազն 1-1.5 հազ տոննա խաղողի եւ 20-25 հազ. տոննա պտղի հավելյալ բերքի մասին:

### *2.1.1.2 Բանջարեղենի ցանքատարածությունները*

2010թ. հունիսի 1-ի տվյալներով, բանջարեղենի (այդ թվում՝ կարտոֆիլի) տակ կատարված ցանքատարածությունները կազմել են 51,918 հա, որի 94.8%-ը կազմել են մեր կողմից դիտարկված 7 անուն ապրանքները: Ցանքատարածությունների մնացած մասը բաժին է ընկնում գազարին, սեղանի ճակնդեղին, սխտորին, կանաչ ոլոռին: Վերջին 6 տարիներին մեր կողմից դիտարկված բանջարեղենի ցանքատարածությունների դինամիկան հետեւյալն է.

**Աղյուսակ 7 - Բանջարեղենի ցանքատարածությունների բաշխվածքն ըստ տեսակների, 2005-2010թթ.**

| Բանջարեղեն | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 |
|---|---|---|---|---|---|---|
| Կարտոֆիլ | 34,440 | 33,045 | 31,674 | 34,298 | 31,998 | 28,314 |
| Լոլիկ | 6,291 | 7,212 | 7,375 | 6,257 | 6,231 | 6,533 |
| Վարունգ | 2,368 | 2,364 | 2,412 | 2,339 | 2,549 | 2,248 |
| Կաղամբ | 3,687 | 3,813 | 3,844 | 3,668 | 3,376 | 3,585 |
| Գլուխ սոխ | 2,079 | 2,397 | 2,229 | 2,487 | 2,085 | 1,868 |
| Պղպեղ<br>Սմբուկ<br>Կանաչեղեն | 5,681 | 5,834 | 7,000 | 6,829 | 7,056 | 6,649 |
| Այլ բանջարեղեն | 2,433 | 2,744 | 2,747 | 2,639 | 2,617 | 2,721 |
| **Ընդամենը** | **56,979** | **57,409** | **57,281** | **58,517** | **55,912** | **51,918** |

Աղբյուրներ՝
1. «2010թ.-ի բերքի տակ կատարված ցանքատարած.-ների համատարած հաշվառման հանրագումարները», ԱՎԾ, 2010
2. «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը», ԱՎԾ, 2006-2009

2006-2010թթ.-ին բանջարեղենի ցանքատարածությունները նվազել են 9.6%-ով, որը գլխավորապես պայմանավորված է կարտոֆիլի ցանքատարածությունների նվազմամբ (նույն ժամանակահատվածում նվազել են 14.3%-ով): Մյուս ապրանքների գծով առկա է ցանքատարածությունների հարաբերական կայունություն. տարբեր տարիների դրանք կարող են ավելանալ կամ նվազել 200-300 հա-ով, սակայն ընդհանուր պատկերը կայուն է:

Ապրանքների վերը թվարկված ցանկում **կարտոֆիլն** ունի առանձնահատուկ նշանակություն: Հայաստանում այն մեծ պահանջարկ եւ սպառում ունեցող ապրանք է եւ մտնում է պարենային զամբյուղի մեջ: Կարտոֆիլն այն մթերքներից է, որն արտադրվում է Հայաստանի ներքին պահանջարկից շատ ավելի քանակությամբ: Մասնավորապես, կարտոֆիլի գծով Հայաստանի պահանջարկը կազմում է տարեկան 290-300 հազ. տոննա, որը բնակչության թվաքանակի հարաբերական կայունության պարագայում եւս մնում է անփոփոխ: Տարեկան մոտ 100-120 հազ. տոննա էլ կազմում է սերմացուի գծով պահանջարկը: Մինչդեռ 2001թ.-ից սկսած արձանագրվել է կարտոֆիլի արտադրության շարունակական աճ եւ 2008թ.-ին հասել ռեկորդային քանակի՝ 648 հազ. տոննայի, որը 1.5 անգամ ավելին է, քան ներքին սպառման պահանջարկը (տես Նկար 9): Այս փոփոխությունների մեջ ուշագրավն այն է, որ **կարտոֆիլի արտադրության քանակներն ավելացել է ինտենսիվ աճի՝ բերքատվության բարձրացման միջոցով**: Մինչդեռ ցանքատարածությունները ընդհանրապես չեն ավելացել. 2000թ.-ին դրանք կազմել են 34 հազ. հա՝ 2009թ.-ի 32 հազ. հա-ի դիմաց: **Այս ամենը**, անշուշտ, **տնտեսական արդյունավետության բարձրացման փայլուն օրինակ է**: Սակայն այն իր հետ բերել է նաեւ խնդիրներ, որոնք սովորաբար առաջանում են ապրանքների գերարտադրության պայմաններում՝ իրացման դժվարություններ, ցանքատարածությունների կրճատում եւ գնանկում: Այս խնդիրներն իրենց պիկին հասել են 2008-2009թթ., երբ կարտոֆիլի մի մասը պարզապես փչացել եւ թափվել է՝ իրացման որեւէ հնարավորություն չունենալու պատճառով (կարտոֆիլը վերամշակման նպատակով չի մթերվում, արտահանումն էլ շատ փոքր է): Դրա հետեւանքը եղել է ցանքատարածությունների կրճատումը 2008-2010թթ. ընթացքում. 2010թ.-ին կարտոֆիլի ցանքատարածությունները եղել են ամենափոքրը՝ վերջին 10 տարիների ընթացքում: Չնայած դրան, 2010թ.-ին կրկին կարտադրվի ներքին պահանջարկը զգալիորեն գերազանցող չափով կարտոֆիլ (անշուշտ, ոչ 2007-2008թթ.-ի չափով), եւ թվում էր, թե նախորդ տարիներին եղած խնդիրները պետք է կրկին հիշեցնեն իրենց մասին: Սակայն այս տարի կարտոֆիլի գները գտնվում են այնպիսի մակարդակի վրա, որ թվում է, թե շուկայում առաջացել է դեֆիցիտ: Անգամ փորձագետները դժվարանում են բացատրություն տալ իրավիճակին, իսկ ոմանք էլ որ դա անում են՝ համոզիչ չեն թվում: Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաեւ **«ԻՐԱՑՄԱՆ ԳՆԵՐԸ» բաժնում** (տես էջ 96):

**Նկար 9 - Հայաստանում կարտոֆիլի արտադրության եւ սպառման քանակները, 2000-2009թթ.**




Հայաստանում արտադրվող բանջարեղենի տեսականու մեջ իր քանակներով երկրորդը **լոլիկն** է: Ցանքատարածությունների հարաբերական կայունության պայմաններում ամեն տարի լոլիկի տակ կատարվում են 6.5-7.5 հազ. հա (+/- 0.5 հազ. հա) ցանքեր: Բանջարեղենի տեսականու մեջ լոլիկն ունի մոտավորապես նույն դերը, ինչ մրգերի մեջ խաղողը. այն վերամշակման նպատակներով ամենից մեծ քանակներով մթերվող բանջարեղենն է: Սակայն այդ հանգամանքը բավարար խթան չի հանդիսանում լոլիկի ցանքատարածությունները եւ արտադրության քանակները ավելացնելու համար: Խնդիրը կայանում է նրանում, որ վերջին 6-7 տարիներին, երբ նկատվում է առաջին անհրաժեշտության ապրանքների թանկացում, վերամշակման լոլիկի մթերման գները շարունակում են մնալ բավականին ցածր մակարդակի վրա՝ 25-35 դրամ/կգ: Արտադրողները ստիպված առանձնացնում են որակյալ ապրանքը՝

շուկայում ավելի թանկ իրացնելու համար, ինչը ժամանակատար եւ աշխատատար գործընթաց է: Այնպես որ լոլիկի ցանքատարածությունների ավելացման իրական խթանները բավականին սահմանափակ են:

Բանջարեղենի տեսականու մեջ լոլիկն, ի թիվս վարունգի եւ պղպեղի, ունի մի առավելություն, որը չունեն մյուս ապրանքները. այն արտադրվում է նաեւ ջերմոցներում: Ընդ որում լոլիկն արտադրվում է ինչպես ապակեպատ ջերմատներում, այնպես էլ պոլիէթիլենային ծածկով ինքնաշեն ջերմոցներում: Ներկայումս 114 հա կազմող ապակեպատ ջերմատների եւ միայն Արմավիրի մարզում 446 հա կազմող պոլիէթիլենային ծածկով ինքնաշեն ջերմոցների 30-40%-ը զբաղված է լոլիկի տակ, որը կազմում է 224 հա: Ապակեպատ ջերմատներում արտադրվող լոլիկը նախատեսված է հիմնականում գարնանը իրացնելու համար, որի բերքը կազմում է մոտ 8.2 հազ. տոննա լոլիկ: Պոլիէթիլենային ծածկով ինքնաշեն ջերմոցներում կազմակերպվում է հիմնականում **վաղահաս լոլիկի** արտադրություն: Այս գործով հատկապես ինտենսիվորեն են զբաղվում Արմավիրի մարզում (հատկապես Էջմիածնի տարածաշրջանի գյուղերում), որտեղ ավելի քան 6,600 տնտեսություններ միասին ունեն 446 հա ջերմոցներ: Այս տարածքներից ամեն տարի ստացվում է մինչեւ 1.5 հազ. տոննա լոլիկ: Վաղահաս լոլիկի եւ ջերմատներում արտադրված լոլիկի առավելությունն այն է, որ **դրանք սեզոնային դեֆիցիտի պատճառով վաճառվում են համեմատաբար թանկ գներով**:

Բանջարեղենի մյուս տեսակների գծով եւս բացակայում են ցանքատարածությունները ավելացնելու խթանները: Մասնագետների գնահատականներով, առաջիկա տարիներին այդ հարցում էական փոփոխություններ չեն սպասվում: Հիմնական պատճառն այն է, որ մյուս ապրանքները՝ **վարունգը**, **պղպեղը**, **սմբուկը**, **կաղամբը** եւ **գլուխ սոխը** արտադրվում են մոտավորապես այնքան, որքան կազմում է Հայաստանի ներքին սպառման պահանջարկը: Այս ապրանքներից վերամշակողները մթերում են միայն առաջին երեքը՝ այն էլ շատ փոքր քանակներով: Արտահանման հնարավորությունները եւ քանակները առայժմ շատ փոքր են: Այս ապրանքների գծով առկա է նաեւ ներմուծում, սակայն դա եւս շատ փոքր է եւ կատարվում է հիմնականում սեզոնային դեֆիցիտի ամիսներին կամ էլ խոշոր առեւտրի ցանցերում որպես տեսականի ներկայացնելու համար:

### 2.1.2 Արտադրության քանակներ

#### *2.1.2.1 Մրգերի արտադրության քանակները*

Ինչպես արդեն նշվել է, 2000-ական թթ.-ին արձանագրվել է մրգերի այգետարածքների ավելացում: Բնականաբար, այդ գործընթացներով պայմանավորված, ավելանում է նաեւ մրգերի արտադրության քանակները: Անգամ խնձորի դեպքում, որտեղ այգետարածքները չեն ավելացել, նկատվում է արտադրության քանակների աճ՝ կապված բերքատվության ցուցանիշի աճի հետ:

**Խաղողի** արտադրության քանակների հարցում առկա են հստակ միտումներ. դրա արտադրությունը գտնվում է վերելքի վրա: 2000-ական թթ.-ին միակ անկումային տարին եղել է 2003թ.-ը, երբ ստացվել է խաղողի աննախադեպ ցածր բերք՝ 81.6 հազ. տ, որը պայմանավորված էր 2002/2003թթ. ձմռան ցրտահարություններով: Դրանից հետո սկսվել է խաղողագործության վերելքի ժամանակաշրջան, որը պահպանվում է առ այսօր (տես Նկար 10):

**Նկար 10 - Խաղողի արտադրության քանակները 2000-2010թթ.**




Աղբյուրներ՝
1. «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2000-2004թթ.», ԱՎԾ, 2005
2. «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը», ԱՎԾ, 2006-2009
3. ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն

Ըստ սորտային կազմի, **արտադրվող խաղողի շուրջ 70%-ը կազմում են տեխնիկական սորտերը**: 2010թ.-ի գնահատված քանակների մեջ դա կազմում է շուրջ 147 հազ. տոննա: 45-50 հազ. տոննա կազմում է սեղանի սորտերը եւ 13-18 հազ. տոննա՝ այսպես կոչված ունիվերսալ սորտերը (որոնք վերամշակվում են եւ միեւնույն ժամանակ կարող են սպառվել բնակչության կողմից): Մշակվող խաղողի սորտային կազմում ընդգծված տարանջատում է առաջանում Արարատի եւ Արմավիրի մարզերում: Վերջինում ավելանում են սեղանի սորտերը: Արմավիրում վերջին տարիներին սկսել են կիրառել վազերի ձեւավորման եւ մշակության նոր տեխնոլոգիա, որը բերքի արտադրության լավ պայմաններ է ստեղծում եւ ապահովում հեկտարից 40-60 տոննա բերք: Համայնքներ կան (օրինակ՝ գ. Արեւիկը), որտեղ տնամերձերում խաղող է մշակվում միայն այս տեխնոլոգիայով:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը լուրջ վտանգներ է ստեղծել խաղողի արտադրության բնագավառի համար: Մասնավորապես 2009-2010թթ.-ին վերամշակող ընկերությունները կրճատել են մթերումների քանակը, ինչն առաջացրել է տեխնիկական սորտերի խաղողի ավելցուկ: Դա իր հերթին իրացման դժվարություններ է ստեղծել արտադրող գյուղացիական տնտեսությունների համար: Վտանգ կա, որ եթե այդ իրավիճակը առաջիկա 1-2 տարիներին չփոխվի, ապա խաղողի տնկարկները, հետեւաբար նաեւ բերքը կարող են նվազել: Բայց դա առայժմ չի սպառնում սեղանի սորտերին: Խաղողի արտահանումների աճի տեմպը չի ընկել, ինչը հույս է ներշնչում, որ ճգնաժամով պայմանավորված դժվարություններն արդեն եռեւում են: Հիմնական արտահանվող սորտերն են. «Քիշմիշ», «Սեւ քիշմիշ», «Շահումյան», «Իծապտուկ»: Խաղողի սորտային կազմի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են Հավելվածներում (տես **Բաժին 8.1. - «ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐՆ ԸՍՏ ՍՈՐՏԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԵՒ ՄԱՐԶԵՐԻ», էջ 129**)

Իրավիճակը բավականին երկակի է **<u>ծիրանի</u>** դեպքում: Մի կողմից արտահանման ծավալների աճը խթանում է բարձրորակ ծիրանի արտադրության զարգացումը, մյուս կողմից եղանակային պայմանների նկատմամբ խիստ զգայունությունը շատ հաճախ պատճառ է դառնում բերքի գրեթե իսպառ վերացման: Դա են վկայում 2000-2010թթ.-ին ծիրանի արտադրության քանակների դինամիկան.

**Նկար 11 - Ծիրանի արտադրության քանակները 2000-2010թթ.**




Աղբյուրներ՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն եւ ԱՎԾ

Վերջին 10 տարվա ընթացքում եղանակային պայմանների (հիմնականում՝ վաղ գարնանային ցրտահարությունների, գարնանը գրանցվող նորմայից ավել անձրեւների, գերխոնավ եղանակի) պատճառով ծիրանի այգիները տուժել են առնվազն 3 տարին մեկ անգամ, որն արդեն նմանվում է օրինաչափության: Մասնավորապես ծիրանի բերքի առումով խիստ ճգնաժամային տարիներ են եղել 2004թ., 2007թ. եւ 2010թ.: Միեւնույն ժամանակ անգամ այդ տարիներին արտահանողները չեն թուլացրել իրենց ակտիվությունը. միգուցե նրանք չեն կարողացել մթերել իրենց անհրաժեշտ քանակությունը, սակայն նրանք մթերումներ են արել աննախադեպ բարձր գներով, որոնք 4-5 անգամ բարձր են, քան բերքի նորմալ քանակությամբ տարիների գները: Այս իրավիճակը պատճառ է դառնում, որպեսզի բազմաթիվ ֆերմերների, այնուամենայնիվ, կայացնեն ծիրանի նոր այգիներ հիմնելու որոշումներ: Համաձայն մասնագետների գնահատականների, առաջիկա տարիներին ծիրանի արտադրության բնագավառում արձանագրվելու են հետեւյալ իրադարձությունները.

1. Ծիրանի արտադրության ծավալները շարունակելու են ընդլայնվել երկու պատճառներով.
   - Բերքի տակ են մտնելու 2006-2009թթ.-ին տնկված մոտ 3 հազ. հա կազմող երիտասարդ այգիներ (մոտ 2.2 հազ. հա հաշվառված եւ ավելի քան 0.8 հազ. հա չհաշվառված), որոնք 1 հա-ից միջինը 8-10 տոննա բերքատվության պայմաններում կապահովեն բերքի 25-30 հազ. տոննա հավելաճ;
   - Նոր տնկված այգիներում կիրառվում են որոշակի տեխնոլոգիական նորամուծություններ, ինչը ապագայում բարձրացնելու է ծիրանի բերքատվության ցուցանիշը: Որոշ ֆերմերներ եկել են այն մտքին, որ ավելի լավ է 1 հա-ի վրա ունենալ ավելի մեծ թվով ծառեր՝ ավելի փոքր չափերով (ինչպես խնձորի դեպքում), քան փոքր թվով ծառեր՝ հետագայում (10-15 տարի հետո) դրանք մինչ 10-12 մ բարձրության հասցնելու ակնկալիքով: Տարբերությունն այն է, որ առաջին դեպքում էապես հեշտանում են բերքահավաքի եւ տեսակավորման գործընթացները, հնարավոր է դառնում ընդհանուր բերքից ավելի շատ բարձրորակ ապրանք առանձնացնել եւ փոքրացնել բերքի ցածրորակ կամ փչացվող (թափվող) մասի քանակները:
2. Շարունակվելու է ծիրանի արտահանման ծավալների աճը: Ըստ արտահանողների տվյալների, եթե նախկինում (10-15 տարի առաջ) իրենք ծիրանը հասցնում էին Ռուսաստանի 2-3 խոշոր քաղաքներ՝ Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Դոնի Ռոստով, ապա ներկայումս այդ աշխարհագրությունը ընդլայնվել է եւ Հայաստանից ուղղակի առաքումներ են կատարվում նաեւ Կրասնոդար, Սամարա, Նոբոսիբիրսկ: Հայկական ծիրանն արդեն մուտք է գործել Ուկրաինա եւ Բելոռուս:

3. Ելնելով վերջին տարիներին եղանակային կտրուկ փոփոխությունների դինամիկայից, մասնագետները կարծում են, որ մեր արտադրողները պետք է պատրաստ լինեն 3-4 տարին մեկ անգամ ծիրանի իրենց բերքը կորցնելու վտանգին: Չնայած այս կարծիքը պաշտպանություն չի գտնում օդերեւութաբանների շրջանում, այնուամենայնիվ վերջին 10 տարիների փորձը մարդկանց մոտ արդեն ձեւավորել է այդպիսի սպասումներ:

Ըստ սորտային կազմի, ծիրանի բերքը կարելի է բաժանել 3 մասի: Բերքի մինչեւ 75%-ը (միջին բարենպաստ տարում 60 հազ. տոննա) բաժին է ընկնում «Երեւանի» սորտին, որը հանրության շրջանում առավել հայտնի է «Շալախ» անվամբ: Սա է արտահանվող եւ Ռուսաստանում հռչակ վայելող տեսակը: Մոտ 20% է կազմում (միջին բարենպաստ տարում 15 հազ. տոննա) «Սաթենի» սորտը, որը պահանջարկ է վայելում ներքին շուկայում. վերամշակողների եւ չորացրած մթերքի արտադրողների շրջանում, ինչպես նաեւ տնային տնտեսուհիների շրջանում՝ տնային պայմաններում պահածոյացման համար: Մոտ 5% կազմում են այլ սորտերը:

2008թ.-ին եւ 2010թ.-ին գրանցվել է դեղձի բերքի շատ մեծ կորուստներ (տես Նկար 12): Դեղձի արտադրության գծով խոշորագույն տարածաշրջաններից մեկում՝ Արմավիրի մարզում, 2008թ. ցրտահարությունների արդյունքում ստացվել է ընդամենը 6.6 հազ. տոննա դեղձ, այն դեպքում, երբ սովորական տարում այդ մարզում ստացվում է մինչեւ 30 հազ. տոննա բերք:

**Նկար 12 - Դեղձի, սալորի, կեռասի, խնձորի եւ տանձի արտադրության քանակները 2006-2009թթ.**




Աղբյուրներ՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն եւ ԱՎԾ

**<u>Սալորի</u>** եւ **<u>կեռասի</u>** արտադրության ծավալները փոքր են: Անգամ արտահանման բացակայության պայմաններում դրանք կարող են ամբողջությամբ սպառվել Հայաստանում: Սակայն արտաքին շուկաներում իրացման առկա հնարավորությունների եւ արտահանման տեսանկյունից փոխադրունակ լինելու պատճառով առանց այն էլ փոքր քանակներ կազմող բերքի մի մասը արտահանվում է: Դա լուրջ խթան է հանդիսանում սալորի (հիմնական սորտը՝

«Վիկտորիա») եւ կեռասի այգետարածքների ընդլայնման համար: Այսօր սալորի եւ կեռասի երիտասարդ այգիների տարածքները կազմում են համապատասխանաբար 1,000 հա եւ 500 հա, որոնք առաջիկա 2-3 տարիներին սալորի եւ կեռասի քանակները կավելացնեն առնվազն 50%-ով, դրանք հասցնելով մոտավորապես 17 հազ. տոննայի (սալոր) եւ 12 հազ. տոննայի (կեռաս):

Մասնագետների գնահատականներով, առաջիկա տարիներին **<u>խնձորի</u>** արտադրությունը շատ դանդաղ՝ սակայն կաճի: Խնձորի գլխավոր առավելությունը մնում է նրա երկարատեւ պահպանման հնարավորությունը եւ սպառման/իրացման երկար ժամանակահատվածը: Ելնելով ներկայումս խնձորի երիտասարդ այգիների մեծությունից (մոտ 900 հա) եւ նոր այգիների հիմնման միտումներից, կանխատեսվում է, որ առաջիկա 2-3 տարիներին խնձորի բերքը կավելանա շուրջ 20 հազ. տոննայով (մոտ 15-16%-ով):

**<u>Տանձի</u>** դեպքում կանխատեսումներ անելը շատ դժվար է: Չի նկատվում տանձենու նոր այգիների հիմնման գործընթաց: Արտահանումը շատ փոքր է եւ անկայուն: Աճեցվող սորտերի մի զգալի մասը արտահանման տեսանկյունից փոխադրունակ չեն: Հիմնական կանխատեսումն այն է, որ հայկական տանձի սպառման վայրը շարունակելու է մնալ ներքին շուկան, իսկ արտադրության քանակները կմնան նույնը (տարեկան 25-30 հազ. տոննա) կամ կավելանան՝ սակայն շատ փոքր քանակներով (երիտասարդ այգիների տարածքը կազմում է ընդամենը մոտ 200 հա):

Այսպիսով, ելնելով մրգերի արտադրության եւ իրացման ներկայիս իրողություններից, հիմնվելով մասնագետների գնահատականների վրա, կարելի է ամփոփել մրգերի արտադրության քանակների թեման եւ ներկայացնել դրա հետ կապված սպասումները.

**Նկար 13 - Մրգերի արտադրության քանակների գնահատականը առաջիկա 3-4 տարիների համար**




Աղբյուր՝ Փորձագիտական գնահատական

### *2.1.2.2 Բանջարեղենի արտադրության քանակները*

Արդեն նշվել է, որ վերջին 5 տարիներին բանջարեղենի ցանքատարածություններ առանձնապես մեծ փոփոխություններ չեն կրել: Կարտոֆիլի 2009թ.-ի ցանքատարածությունները 2005թ.-ի համեմատությամբ նվազել են 7.1%-ով, իսկ բանջարեղենի նույն ցուցանիշը աճել է 6.1%-ով: Սակայն կարտոֆիլի եւ բանջարեղենի արտադրության քանակների փոփոխությունը 2005-2009թթ. ժամանակահատվածում ցույց է տալիս միանգամայն այլ դինամիկա: Կարտոֆիլի դեպքում, չնայած ցանքատարածությունների նվազմանը, արձանագրվել է արտադրության քանակների 5.2% աճ, իսկ բանջարեղենի դեպքում արտադրության քանակներն ավելացել է 23.5%-ով: Այս ամենը վկայում է այն մասին, որ **կարտոֆիլի եւ բանջարեղենի արտադրության քանակների աճը հիմնականում ապահովվել է բերքատվության ցուցանիշների աճի հաշվին** (տես Նկար 14): Սա շատ ուրախալի հանգամանք է եւ վկայում է այն մասին, որ արտադրող գյուղացիական տնտեսությունները աստիճանաբար բարելավում են իրենց գործունեության *արդյունավետության* ցուցանիշները: Ուրախալի է, որ կարտոֆիլի եւ բանջարեղենի *արտադրության քանակներն ավելացել են* հիմնականում *ինտենսիվ եղանակով*: Դա կապված է օգտագործվող սերմացուի որակի բարձրացման եւ ագրոտեխնիկական միջոցառումների բարելավման հետ: Սակայն դա չի ազատում գյուղացիական տնտեսություններին իրենց արտադրանքն իրացնելու դժվարություններից, որոնք էլ վերջին 3 տարիներին բացասաբար է ազդում արտադրության ցուցանիշների վրա:

**Նկար 14 - Կարտոֆիլի եւ բանջարեղենի բերքատվության ցուցանիշները 2005-2009թթ., տոննա/հա**




Աղբյուր՝ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը», ԱՎԾ, 2006-2009

Հիմնական խնդիրներն առկա են **<u>կարտոֆիլի</u>** արտադրության բնագավառում: Արդեն նշվել է, որ 2000-ական թթ.-ին տեղի է ունեցել կարտոֆիլի ցանքատարածությունների փոքր եւ բերքատվության ցուցանիշների մեծ աճ: Արդյունքում 10 տարվա մեջ կարտոֆիլի արտադրության քանակները կրկնապատկվել են: Ստացված բերքի առումով ռեկորդային է եղել 2008թ.-ը, երբ արտադրվել է Հայաստանի անկախության տարիների համար կարտոֆիլի ամենամեծ քանակությունը՝ 648.6 հազ. տոննա (տես Նկար 15): Դա ավելի քան 2 անգամ գերազանցում է Հայաստանի բնակչության սպառման ծավալները: Եթե դրան ավելացնենք այն, որ Հայաստանում կարտոֆիլը վերամշակման նպատակներով չի մթերվում, իսկ արտահանման քանակն էլ կազմում է բերքի ընդամենը 1%-ը, ապա պարզ կդառնա, որ կարտոֆիլի գծով Հայաստանում առկա է գերարտադրություն: Եթե անգամ նկատի ունենանք այն, որ կարտոֆիլի բերքի մի մասն առանձնացվում է որպես սերմացու (մոտ 100-120 հազ. տոննա), իսկ մի մասն էլ օգտագործվում է որպես անասնակեր, միեւնույն է, ներկայիս արտադրության ծավալների եւ արտահանման փոքր քանակների պայմաններում Հայաստանում կարտոֆիլի բերքն ավելանում է:

**Նկար 15 - Կարտոֆիլի արտադրության քանակները 2000-2010թթ., տոննա**




Աղբյուրներ՝
1. «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2000-2004թթ.», ԱՎԾ, 2005
2. «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը», ԱՎԾ, 2006-2009
3. Փորձագիտական գնահատական (2010թ.-ի համար)

Իրացման խնդիրների պատճառով 2008թ.-ից նկատվում է կարտոֆիլի ցանքատարածությունների եւ արտադրության քանակների կրճատում: 2010թ.-ին բերքի կանխատեսվող քանակը մոտավորապես 500 հազ. տոննա է: 2010թ.-ին բերքի համեմատաբար փոքր քանակը, վաղահաս կարտոֆիլի բերքի չնչին քանակները եւ արտահանման մի քանի հաջող գործարքները որոշակի աշխուժություն են առաջացրել կարտոֆիլի շուկայում, որն արտահայտվում է բավականին բարձր գներով:

Մինչճգնաժամային տարիներին գրանցված տնտեսական աճի բարձր տեմպերն իրենց դրական ազդեցությունն են ունեցել Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի եւ գյուղմթերքների վերամշակման բնագավառի համար: Դա արտահայտվել է բնակչության շրջանում բանջարեղենի սպառման ծավալների դանդաղ աճով: Սակայն առավել մեծ է եղել վերամշակման բնագավառի զարգացման ազդեցությունը: Վերամշակող ձեռնարկությունների կողմից **<u>բանջարեղենի</u>** մթերումների շարունակական աճն իր բարձրակետին է հասել 2006թ.-ին: Այդ տարում վերամշակման համար մթերված բանջարեղենի քանակը կազմել է 67.6 հազ. տոննա, որը կազմել է բանջարեղենի (առանց կարտոֆիլի) համախառն բերքի 8.7%-ը: Զգալով պահանջարկի աճը եւ ունենալով այդ պահանջարկին անմիջապես արձագանքելու հնարավորություն[21], ֆերմերները 2007թ.-ին ավելացրել են բանջարեղենի ցանքատարածությունները[22] եւ բերքի քանակները՝ այն հասցնելով 845.3 հազ. տոննայի (տես Աղյուսակ 8):

[21] Բանջարեղենի բոլոր տեսակները ներկայացված են միամյա բույսերով: Այդ պատճառով բանջարեղենի արտադրության մեջ ներգրավված ֆերմերները հեշտությամբ կարող են «վերապրոֆիլավորվել» եւ կոնկրետ տարում արտադրել այն տեսակները, որոնք նախորդ տարում մեծ պահանջարկ են վայելել

[22] Հասցնելով 25.6 հազ. հա-ի, որը ամենամեծ ցուցանիշն է վերջին 10 տարվա ընթացքում

**Աղյուսակ 8 - Բանջարեղենի արտադրության քանակները, 2005-2009թթ., տոննա**

| | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|
| Բանջարեղեն | 663,770 | 780,026 | 845,285 | 825,338 | 819,804 |

Աղբյուր՝ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը», ԱՎԾ, 2005-2009

Սակայն 2007թ.-ին վերամշակողները մթերել են ավելի քիչ, քան 2006թ.-ին՝ 57.1 հազ. տոննա (բանջարեղենի բերքի 6.8%-ը), ինչը ֆերմերների մոտ արտադրանքի ավելցուկ է առաջացրել: Որպես հետեւանք՝ արտադրանքի իրացման հետ կապված բարդությունները եւ 2008թ.-ի աշնանը բռնկված ֆինանսատնտեսական ճգնաժամը կրճատել են բանջարեղենի ցանքատարածությունները եւ բերքի քանակը: Դա առաջին հերթին արտահայտվել է լոլիկի, կաղամբի, գլուխ սոխի արտադրության քանակների նվազմամբ (տես Նկար 16):

**Նկար 16 - Բանջարեղենի արտադրության քանակները 2005-2009թթ., տոննա**




Աղբյուր՝ «Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները եւ համախառն բերքը», ԱՎԾ, 2005-2009

Առաջիկա տարիներին բանջարեղենի արտադրության քանակների համար գնահատականներ տալը գրեթե անհնար է: Ցանքատարածությունները կառավարելի գործոն են[23] եւ դրանց

[23] Ի տարբերություն մրգերի, որոնց այգիները *բազմամյա տնկարկներ* են, բանջարեղենի ցանքատարածությունները հեշտությամբ կարելի է արագորեն ընդլայնել կամ նվազեցնել

մեծությունը կախված կլինի բազմաթիվ արտաքին գործոններից: Այդպիսի գործոններ են վերամշակման եւ արտահանման հնարավորությունների հետագա փոփոխությունները, բնակչության շրջանում աղքատության նվազումը եւ գնողունակության բարձրացումը: Վերամշակողների եւ արտահանողների սպասումները առայժմ դրական չեն, իսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո երկրի տնտեսական իրավիճակը շատ դժվարությամբ է շտկվում: Ըստ բնագավառի մասնագետների եւ փորձագետների գնահատականների, առավել հավանական է կարծել, որ առաջիկա տարիներին 2-3 տարիներին բանջարեղենի արտադրության քանակները կտրուկ փոփոխություններ չեն կրի եւ կմնան հարաբերականորեն կայուն:

## 2.2 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

### 2.2.1 <u>Արտադրության աշխարհագրությունը</u>

Հայաստանում մրգերի եւ բանջարեղենի արտադրության աշխարհագրությունը եւ սեզոնայնությունը պայմանավորված են Հայաստանի ռելիեֆի ուղղահայաց գոտիականությամբ: Սույն հետազոտության կողմից թիրախված ապրանքների արտադրության աշխարհագրությունն ունի մի շարք առանձնահատկություններ: Օբյեկտիվորեն՝ ապրանքների արտադրության գլխավոր տարածաշրջանն է հանդիսանում Արարատյան դաշտավայրը, որը համընկնում է Արմավիրի եւ Արարատի մարզերի հետ (տես Նկար 17): Այստեղ են գտնվում Հայաստանի լավագույն հողերը (ըստ բերրիության), համեմատաբար զարգացած են գյուղատնտեսական ենթակառուցվածքները, տարածաշրջանը ցածրադիր է եւ ունի առավել բարենպաստ եղանակային պայմաններ:

Նկար 17 - Հայաստանի ֆիզիկական քարտեզը




Որպեսզի հասկանալի լինի, թե ինչ դեր ունի Արարատյան դաշտավայրը Հայաստանի մրգերի եւ բանջարեղենի արտադրության բնագավառում, պետք է դիտարկել այդ տարածաշրջանում առկա տնկարկների/ցանքատարածությունների եւ բերքի մասնաբաժնի ցուցանիշները.

**Աղյուսակ 9 - Արարատյան դաշտավայրում (Արմավիրի եւ Արարատի մարզերում) թողարկվող մրգերի եւ բանջարեղենի մասնաբաժինը Հայաստանի ընդհանուր ցուցանիշներում 2009թ.**

| Մրգեր | | | Բանջարեղեն | | |
|---|---|---|---|---|---|
| | Տնկարկների մասնաբաժինը | Բերքի մասնաբաժինը | | Տնկարկների մասնաբաժինը | Բերքի մասնաբաժինը |
| Խաղող | 69.6% | 86.2% | Կարտոֆիլ | 7.3% | 13.9% |
| Ծիրան | 68.1% | 91.2% | Լոլիկ | 83.7% | 94.6% |
| Դեղձ | 73.3% | 85.9% | Վարունգ | 69.3% | 87.0% |
| Սալոր | 41.9% | 70.7% | Կաղամբ | 22.0% | 29.9% |
| Կեռաս | 43.3% | 65.4% | Պղպեղ | 88.0% | 88.2% |
| Խնձոր | 13.9% | 23.3% | Սմբուկ | | |
| Տանձ | 21.2% | 32.8% | Գլուխ սոխ | 67.2% | 84.9% |

Աղբյուրներ՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն, ԱՎԾ եւ Մարզպետարանների Գյուղատնտեսության վարչություններ

Աղյուսակ 9-ի տվյալներից երեւում է, որ Արարատյան դաշտավայրում հետազոտված 14 ապրանքներից 9-ի գծով առկա է խիստ կենտրոնացում: Սա Ազատ Տնտեսական Գոտու գործունեության տեսանկյունից դրական պատկեր է, քանի որ արտադրության մեծ քանակներ եւ արտահանման հեռանկարներ ունեցող ապրանքների մեծ մասն արտադրվում է մոտակայքում՝ max 40-50 կմ շառավղով տարածքում:

Արարատյան դաշտավայրից դուրս արտադրվող մրգերի եւ բանջարեղենի դեպքում եւս առկա են արտադրության կենտրոնացման տարբեր աստիճաններ: Դրա պատճառը կրկին Հայաստանի ռելիեֆի եւ բնակլիմայական պայմանների առանձնահատկություններն են: Մասնավորապես, Շիրակի եւ Գեղարքունիքի մարզերում մրգերի եւ բանջարեղենի որոշ տեսակների (լոլիկ, վարունգ) արտադրությունը չնչին է կամ ընդհանրապես բացակայում է, սակայն այստեղ է արտադրվում Հայաստանի կարտոֆիլի բերքի կեսից ավելին: Կան մարզեր, ինչպես օրինակ Լոռին եւ Կոտայքը, որտեղ մշակվող հողերը հարաբերականորեն հավասար են բաժանված տարբեր մշակաբույսերի միջեւ: Այդ իսկ պատճառով մրգերի եւ բանջարեղենի արտադրության աշխարհագրությունը թելադրում է, որ այդ ապրանքները պետք է բաժանել երկու խմբի.

1) Ապրանքներ, որոնց **արտադրությունն ըստ մարզերի սփռված է հավասարապես** կամ **արտադրվում են բոլոր մարզերում՝ նշանակալից քանակներով**: Ապրանքների այս ցանկի մեջ մտնում են՝ խնձորը, տանձը, կարտոֆիլը, կաղամբը: Ինչպես կարելի է հասկանալ՝ սրանք այնպիսի ապրանքներ են, որոնք հնարավոր է արտադրել տարբեր բարձրություններում (գոտիներում)՝ ցածրադիր գոտուց մինչեւ լեռնային գոտի: Տարբերությունը կայանում է միայն տարբեր գոտիներում բերքատվության ցուցանիշների տատանումների կամ ապրանքների սորտային կազմի ոչ նույնության մեջ:

2) Ապրանքներ, որոնց **արտադրությունն ունի հստակ կենտրոնացում**: Ապրանքների այս ցանկի մեջ մտնում են խաղողը, ծիրանը, դեղձը, սալորը, կեռասը, լոլիկը, վարունգը, պղպեղը, սմբուկը, գլուխ սոխը: Այս ապրանքները խիստ զգայուն են բնակլիմայական պայմանների նկատմամբ եւ արտադրվում են միայն առանձին գոտիներում:

Հաշվի առնելով հետազոտության առարկա ապրանքների վերը բերված առանձնահատկությունները, նրանց արտադրության աշխարհագրական բաշխվածքը կներկայացվի երկու եղանակով.

ա) արտադրության տեսանկյունից բոլոր մարզերում տարածված ապրանքների աշխարհագրական բաշխվածքը կներկայացվի ըստ մարզերի,

բ) արտադրության կենտրոնացում ունեցող ապրանքների արտադրության աշխարհագրական բաշխվածքը կներկայացվի ըստ արտադրության հիմնական տարածքների:

### *2.2.1.1 Մրգերի արտադրության աշխարհագրությունը*

**Խաղողի** արտադրությունը խիստ կենտրոնացված է եւ իրականացվում է Հայաստանի 3 ռեգիոններում (տես Նկար 18).

1) *Արարատյան դաշտավայր, Արագածոտնի եւ Կոտայքի մարզի ցածրադիր գոտիներ*, որտեղ գտնվում է խաղողի տնկարկների 81%-ը եւ ստացվում է խաղողի բերքի 92%-ը:
2) *Տավուշի մարզ*, որտեղ գտնվում են խաղողի տնկարկների 8%-ը եւ ստացվում է խաղողի բերքի 5%-ը:
3) *Վայոց Ձորի մարզ*, որտեղ գտնվում են խաղողի տնկարկների 6%-ը եւ ստացվում է խաղողի բերքի 1.5%-ը:

**Նկար 18 - Խաղողի արտադրության աշխարհագրությունը**




Արարատյան դաշտավայրում կենտրոնացած է խաղողի ինչպես տեխնիկական, այնպես էլ սեղանի սորտերի արտադրությունը: Սեղանի սորտերից առավել մեծ քանակներով արտադրվում են «Շահումյան», «Արարատի», «Կարդինալ», «Լալվար», «Քիշմիշ» սորտերը (տես **Բաժին 8.1. «ԽԱՂՈՂԻ ՏՆԿԱՐԿՆԵՐՆ ԸՍՏ ՍՈՐՏԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԵՒ ՄԱՐԶԵՐԻ», էջ 129**): Տավուշի եւ Վայոց Ձորի մարզերում ստացվող խաղողը գրեթե ամբողջությամբ տեխնիկական սորտեր են: Մյուս մարզերից խաղող է աճում միայն Լոռիի եւ Սյունիքի մարզերի ցածրադիր գոտիներում, սակայն դրանք կազմում են չնչին քանակություն եւ արդյունաբերական հետաքրքրություն չեն ներկայացնում:

**Նկար 19 - Ծիրանի արտադրության աշխարհագրությունը**




**Ծիրանի** արտադրությունն ամբողջությամբ կենտրոնացած է Արարատյան դաշտավայրում, Արագածոտնի եւ Կոտայքի մարզերի ցածրադիր գոտիներում (տես )՝ 600-

1,500 մ բարձրությունների վրա: Նշված տարածաշրջաններում է արտադրվում Հայաստանի գրեթե ամբողջ ծիրանը՝ շուրջ 96%-ը: Բերքի առաջարկի տեսանկյունից այս ռեգիոնը հստակ բաժանվում է երկու մասի: Ծիրանը նախապես հասունանում է ցածրադիր գոտում (Արարատյան դաշտավայր՝ մինչեւ 1,000 մ), որտեղ բերքահավաքը սկսվում է հունիս ամսին: Նախալեռնային գոտում (Արագածոտնի եւ Կոտայքի մարզերի ցածրադիր հատվածներ՝ 1,000-1,500 մ) ծիրանի բերքահավաքը սկսվում է 1-1.5 ամիս հետո: Ծիրանի շատ փոքր քանակություն է արտադրվում նաեւ Վայոց Ձորի մի քանի ցածրադիր գյուղերում, որոնք տեղակայված են Արփա գետի հովտում: Այս տարածաշրջանի ծիրանը աչքի է ընկնում բավականին բարձր որակով: Ըստ արտահա-նողների, բերքի մթերումների ժամանակ իրենք շատ հաճախ են հասնում մինչեւ Եղեգնաձոր: Դա հատկապես ակնառու է այն տարի-ներին, երբ Արարատյան դաշտա-վայրում ծիրանի բերքը քիչ է լինում:

| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **125,000** | **100%** | | | | | **1%** | **1%** | **2%** | **3%** | **2%** | **1%** | **1%** | **1%** | **15%** | **23%** | **29%** | **20%** | **3%** | | | | | **100%** |
| *Քանակներ, տոննա* | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արարատյան դաշտավայր | 37,770 | 30% | | | | | 755 | 1,133 | 1,889 | 3,777 | 1,889 | 1,133 | 755 | 755 | 5,666 | 6,799 | 5,666 | 3,777 | 3,777 | | | | | 37,770 |
| Ցածրադիր գոտիներ | 826 | 1% | | | | | | | 124 | 248 | 289 | 165 | | | | | | | | | | | | 826 |
| Նախալեռնային գոտիներ | 86,404 | 69% | | | | | | | | | | | | | 12,961 | 21,601 | 30,241 | 21,601 | | | | | | 86,404 |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **125,000** | **100%** | | | | | **755** | **1,133** | **2,012** | **4,025** | **2,177** | **1,298** | **755** | **755** | **18,626** | **28,400** | **35,907** | **25,378** | **3,777** | | | | | **125,000** |

## ՊՂՊԵՂ*

| Արտադրության գոտիներ | Արտադրության պոտենցիալ | | Ամիսներն ըստ տասնօրյակների | | | | | | | | | | | | | | | | | | | | | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մայիս | | | Հունիս | | | Հուլիս | | | Օգոստոս | | | Սեպտեմբեր | | | Հոկտեմբեր | | | Նոյեմբեր | | | |
| | տոննա | % | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | |
| *Մասնաբաժիններ, %* | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արարատյան դաշտավայր | 57,908 | 89% | | | | | | | | 4% | 8% | 10% | 12% | 16% | 25% | 15% | 10% | | | | | | | **100%** |
| Ցածրադիր գոտիներ | 119 | 0% | | | | | | | | 4% | 8% | 10% | 12% | 16% | 25% | 15% | 10% | | | | | | | **100%** |
| Նախալեռնային գոտիներ | 6,972 | 11% | | | | | | | | | | | 15% | 25% | 40% | 20% | | | | | | | | **100%** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **65,000** | **100%** | | | | | | | | **4%** | **7%** | **9%** | **12%** | **17%** | **27%** | **16%** | **9%** | | | | | | | **100%** |
| *Քանակներ, տոննա* | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արարատյան դաշտավայր | 57,908 | 89% | | | | | | | | 2,316 | 4,633 | 5,791 | 6,949 | 9,265 | 14,477 | 8,686 | 5,791 | | | | | | | 57,908 |
| Ցածրադիր գոտիներ | 119 | 0% | | | | | | | | 5 | 10 | 12 | 14 | 19 | 30 | 18 | 12 | | | | | | | 119 |
| Նախալեռնային գոտիներ | 6,972 | 11% | | | | | | | | | | | 1,046 | 1,743 | 2,789 | 1,394 | | | | | | | | 6,972 |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **65,000** | **100%** | | | | | | | | **2,321** | **4,642** | **5,803** | **8,009** | **11,028** | **17,296** | **10,099** | **5,803** | | | | | | | **65,000** |

* - Այս աղյուսակում ներկայացված է միայն ***բաց գրունտի*** վրա աճեցվող պղպեղի արտադրության քանակներն ու սեզոնայնությունը: Պղպեղը, ի թիվս լոլիկի եւ վարունգի, աճեցվում է նաեւ ջերմատներում եւ ջերմոցներում (փակ գրունտ): Փակ գրունտի վրա աճեցված բանջարեղենի քանակում (1,300 տոննա՝ 2009թ.-ին) պղպեղը կազմում է ընդամենը 35 տոննա: Ըստ ցանքաշրջանառության հիմնական ցիկլի, փակ գրունտի վրա աճեցվող պղպեղը ցանվում է օգոստոսին եւ բերք է տալիս դեկտեմբեր-մայիս ամիսներին:

## ՍՄԲՈՒԿ

| Արտադրության գոտիներ | Արտադրության պոտենցիալ | | Ամիսներն ըստ տասնօրյակների | | | | | | | | | | | | | | | | | | | | | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մայիս | | | Հունիս | | | Հուլիս | | | Օգոստոս | | | Սեպտեմբեր | | | Հոկտեմբեր | | | Նոյեմբեր | | | |
| | տոննա | % | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | |
| *Մասնաբաժիններ, %* | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արարատյան դաշտավայր | 57,908 | 89% | | | | | | | | 4% | 5% | 10% | 12% | 13% | 13% | 13% | 13% | 12% | 5% | | | | | **100%** |
| Ցածրադիր գոտիներ | 119 | 0% | | | | | | | | | | 10% | 15% | 20% | 20% | 20% | 15% | | | | | | | **100%** |
| Նախալեռնային գոտիներ | 6,972 | 11% | | | | | | | | | | | | 15% | 25% | 35% | 25% | | | | | | | **100%** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **65,000** | **100%** | | | | | | | | **4%** | **4%** | **9%** | **11%** | **13%** | **14%** | **15%** | **14%** | **11%** | **4%** | | | | | **100%** |
| *Քանակներ, տոննա* | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արարատյան դաշտավայր | 57,908 | 89% | | | | | | | | 2,316 | 2,895 | 5,791 | 6,949 | 7,528 | 7,528 | 7,528 | 7,528 | 6,949 | 2,895 | | | | | 57,908 |
| Ցածրադիր գոտիներ | 119 | 0% | | | | | | | | | | 12 | 18 | 24 | 24 | 24 | 18 | | | | | | | 119 |
| Նախալեռնային գոտիներ | 6,972 | 11% | | | | | | | | | | | | 1,046 | 1,743 | 2,440 | 1,743 | | | | | | | 6,972 |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **65,000** | **100%** | | | | | | | | **2,316** | **2,895** | **5,803** | **6,967** | **8,598** | **9,295** | **9,992** | **9,289** | **6,949** | **2,895** | | | | | **65,000** |

### ԳԼՈՒԽ ՍՈԽ

| Արտադրության գոտիներ | Արտադրության պոտենցիալ | | Ամիսներն ըստ տասնօրյակների | | | | | | | | | | | | | | | | | | | | | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մայիս | | | Հունիս | | | Հուլիս | | | Օգոստոս | | | Սեպտեմբեր | | | Հոկտեմբեր | | | Նոյեմբեր | | | |
| | տոննա | % | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | |
| *Մասնաբաժիններ, %* | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արարատյան դաշտավայր | 48,999 | 89% | | | | | | | | 25% | 45% | 30% | | | | | | | | | | | | **100%** |
| Ցածրադիր գոտիներ | 101 | 0% | | | | | | | | 25% | 45% | 30% | | | | | | | | | | | | **100%** |
| Նախալեռնային գոտիներ | 5,900 | 11% | | | | | | | | | | | 15% | 25% | 35% | 25% | | | | | | | | **100%** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **55,000** | **100%** | | | | | | | | **22%** | **40%** | **27%** | **2%** | **3%** | **4%** | **3%** | | | | | | | | **100%** |
| *Քանակներ, տոննա* | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արարատյան դաշտավայր | 48,999 | 89% | | | | | | | | 12,250 | 22,050 | 14,700 | | | | | | | | | | | | 48,999 |
| Ցածրադիր գոտիներ | 101 | 0% | | | | | | | | 25 | 45 | 30 | | | | | | | | | | | | 101 |
| Նախալեռնային գոտիներ | 5,900 | 11% | | | | | | | | | | | 885 | 1,475 | 2,065 | 1,475 | | | | | | | | 5,900 |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **55,000** | **100%** | | | | | | | | **12,275** | **22,095** | **14,730** | **885** | **1,475** | **2,065** | **1,475** | | | | | | | | **55,000** |

### ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԲՈԼՈՐ 7 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՏԵՍԱԿՆԵՐԸ

| Արտադրության գոտիներ | Արտադրության պոտենցիալ | | Ամիսներն ըստ տասնօրյակների | | | | | | | | | | | | | | | | | | | | | Ընդա-մենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մայիս | | | Հունիս | | | Հուլիս | | | Օգոստոս | | | Սեպտեմբեր | | | Հոկտեմբեր | | | Նոյեմբեր | | | |
| | տոննա | % | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | I | II | III | |
| *Քանակներ, տոննա* | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արարատյան դաշտավայր | 617,630 | 49.2% | | | | 2,118 | 3,580 | 29,553 | 45,832 | 67,217 | 48,070 | 53,562 | 52,385 | 63,830 | 73,952 | 70,000 | 53,604 | 36,586 | 17,341 | | | | | **617,630** |
| Ցածրադիր գոտիներ | 26,073 | 2.1% | | | | | | | 124 | 278 | 344 | 488 | 893 | 5,831 | 5,994 | 5,695 | 5,548 | 611 | 267 | | | | | **26,073** |
| Նախալեռնային գոտիներ | 611,297 | 48.7% | | | | | | | | 635 | 635 | 952 | 4,826 | 32,094 | 47,070 | 79,041 | 81,854 | 95,539 | 97,898 | 97,573 | 73,179 | | | **611,297** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **1,255,000** | **100%** | | | | **2,118** | **3,580** | **29,553** | **45,955** | **68,130** | **49,049** | **55,003** | **58,103** | **101,755** | **127,016** | **154,736** | **141,007** | **132,736** | **115,505** | **97,573** | **73,179** | | | **1,255,000** |
| **Մասնաբաժիններ, %** | | | | | | **0%** | **0%** | **2%** | **4%** | **5%** | **4%** | **4%** | **5%** | **8%** | **10%** | **12%** | **11%** | **11%** | **9%** | **8%** | **6%** | | | **100%** |

Աղյուսակ 13-ի եւ Աղյուսակ 14-ի տվյալները հաշվի առնելու համար **պետք է անել 2 վերապահումներ**.

1. Մրգերի եւ բանջարեղենի հասունացման ժամկետները կարող են տարբեր լինել անգամ նույն գոտիականության պայմաններում: Օրինակ կարող է լինել ծիրանի դեպքը. Արարատյան դաշտավայրում, որը տեղակայված է Արարատի, Արտաշատի, Արմավիրի եւ Բաղրամյանի տարածաշրջանների վրա (ծիրանի արտադրության հիմնական օջախները), ծիրանի բերքահավաքը սկսվում է 4 տարբեր ժամկետներում (տես Նկար 25): Այս հանգամանքը պայմանավորված է տարբեր պտուղների ֆիզիկական հատկություններով, երբ ռելիեֆի 50-100 մ տարբերությունը կարող է հասունացման ժամկետը փոփոխել 5-10 օրով:

**Նկար 25 - Ծիրանի բերքահավաքի ժամկետներն ըստ արտադրության հիմնական օջախների**




Բերքահավաքի ժամկետների մեջ իր ճշգրտումները կարող է մտցնել նաեւ մրգերի եւ բանջարեղենի սորտային կազմը, որոնց մեջ կարող են լինել բազմաթիվ սորտեր՝ հասունացման տարբեր ժամկետներով (խնձորի, տանձի դեպքը):

2. Որպես վերապահում պետք է նշել նաեւ, որ մրգերի եւ բանջարեղենի արտադրության սեզոնայնության նշված ցուցանիշները «անշարժ» չեն: Առանձին տարիների, երբ ջերմաստիճանը նորմայից բարձր է լինում, բերքահավաքի սեզոնը կարող է սկսվել ավելի շուտ: Եվ ընդհակառակը, նորմայից ցածր ջերմաստիճանով կամ տեղումների բարձր հաճախությամբ տարիներին բերքահավաքի սեզոնը կարող է ետ ընկնել մինչեւ 10-15 օր: Մրգերի եւ բանջարեղենի արտադրության սեզոնայնության ներկայացված տվյալները կարելի է հիմք ընդունել միջին բարենպաստ տարվա համար:

## 2.3 ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԸ

Հայաստանի անկախության առաջին տարիներին, երբ սեփականաշնորհվեցին նաեւ հողային ռեսուրսները, առաջ եկան հազարավոր հողագործական գյուղացիական տնտեսություններ,

որոնց գլխավոր թերությունը նրանց հողերի փոքր չափերն էին: Փոքր հողակտորները ի սկզբանե անարդյունավետ դարձրեցին դրանց վրա գյուղատնտեսության վարումը. առկա գյուղատնտեսական ենթակառուցվածքները՝ ոռոգման ցանցը, մեխանիզացիայի պարկը, պարարտանյութերի եւ բուժանյութերի մատակարարման համակարգը ի վիճակի չէին ապահովել նոր իրողության պահանջները:

Հետագա տարիներին, եւ հատկապես 2000-ական թթ.-ին, երբ Հայաստանը թեւակոխեց տնտեսական զարգացման փուլ, տնտեսությունների խոշորացման եւ մասնագիտացման բարձրացման (խորացման) որոշակի գործընթացներ սկսվեցին մրգերի եւ բանջարեղենի արտադրությամբ զբաղված գյուղացիական տնտեսությունների շրջանում: Որոշ տնտեսություններ, չկարողանալով գտնել սեփական գործունեության արդյունավետ կազմակերպման եղանակներ, վաճառեցին իրենց հողերն ամբողջությամբ կամ մասամբ: Փոխարենը, որոշ տնտեսություններ, հաջողություններ ունենալով արտադրության եւ իրացման գործում, սկսեցին ընդլայնել իրենց գործունեության չափերը՝ ավելացնելով իրենց կողմից մշակվող հողատարածքները: Դա իրականացվում էր նոր հողատարածքների ձեռքբերման միջոցով կամ պետական եւ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության միջոցով:

Այդպես սկսեցին ձեւավորվել տնտեսություններ, որոնք ունեին ավելի մեծ հողեր: Այսօր հատկապես այդպիսի տնտեսություններում է նկատվում գործունեության արդյունավետության բարձրացման ներդրումների ձգտումները: Պետք է նշել, որ առանձին մշակաբույսերի դեպքում եւ առանձին տարածաշրջաններում այդ գործընթացներն ունեն որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես Արարատյան դաշտավայրում նկատվում է համեմատաբար խոշոր տնտեսությունների գործունեության դիվերսիֆիկացիա: Ելնելով վերջին տարիներին հաճախակի արձանագրվող եղանակային կատակլիզմներից, գյուղացիական տնտեսությունները փորձում են մի քանի մշակաբույսերի աճեցմամբ ապահովագրել սեփական ռիսկերը՝ զբաղվելով միաժամանակ ծիրանի, դեղձի, սալորի եւ խաղողի մշակմամբ:

Ավելի բարձրադիր գոտիներում, որտեղ եւս առկա են հողագործության զարգացման հնարավորություններ (Շիրակ, Գեղարքունիք, Սյունիք), շեշտը դրվում է մասշտաբի էֆեկտի վրա: Այս գոտիներում գերակայում է կարտոֆիլի եւ կաղամբի մշակությունը, որոնց տակ զբաղված հողատարածքները համեմատաբար խոշոր չափերի են:

Որպեսզի հասկանալի լինի, թե ներկայումս Հայաստանում ինչ չափերի հողեր ունեցող գյուղացիական տնտեսություններին կարելի անվանել խոշոր, սույն հաշվետվության վերջում ներկայացված են հետազոտության կողմից թիրախված 14 ապրանքների խոշոր արտադրողների անուններ՝ նրանց կողմից մշակվող հողատարածքների ցուցադրմամբ (տես **Բաժին 8.2, «ՄՐԳԵՐԻ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԸ», էջ 131):

# 3 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

## 3.1 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՔԱՆԱԿՆԵՐԸ

Մրգերի եւ բանջարեղենի արտահանման վերլուծությունը վկայում է, որ այն գտնվում է վերելքի վրա: Արտահանման զարգացումն արտահայտվում է արտահանման քանակների եւ արտահանողների թվի աճով, իրացման շուկաների դիվերսիֆիկացիայի փոքր աճով, նոր՝ այսպես կոչված «փորձնական» շուկաների թվի աճով: Սակայն նախքան արտահանման ցուցանիշներին անդրադառնալը, նախ պետք է դիտարկել մի կարեւոր հանգամանք:

Մրգերի եւ բանջարեղենի արտահանման քանակների վերաբերյալ գոյություն ունի 2 տիպի վիճակագրություն, որոնք ստացվում են հետեւյալ աղբյուրներից՝ ա) Մաքսային ծառայությունից, եւ բ) Գյուղատնտեսության Նախարարությունից՝ ի դեմս Բուսասանիտարիայի պետական տեսչության (այսուհետ՝ ԲՍՊՏ): Որպես կանոն, վերջինիս ցուցանիշները գերազանցում են Մաքսային ծառայության ցուցանիշներին (Մաքսային ծառայության տվյալներն են ընկած Հայաստանի արտաքին առեւտրի պաշտոնական վիճակագրության հիմքում): Այս երեւույթն ունի 2 հնարավոր բացատրություն.

1) Հայաստանի սահմանը հատող բազմաթիվ ֆիզիկական անձինք իրենց հետ Հայաստանից դուրս են հանում մրգեր եւ բանջարեղեն՝ շատ փոքր քանակներով: Այսպիսի «միկրոարտահանումները» (50-100 կգ) կարող են ԲՍՊՏ-ի կողմից ստանալ ուղեկցող փաստաթուղթ, սակայն հնարավոր է, որ չարձանագրվեն Մաքսային ծառայության կողմից: Ուստի, հնարավոր է, որ Մաքսային ծառայության կողմից չհաշվառված ապրանքի շատ փոքր խմբաքանակները գումարվեն իրար եւ առաջացնեն նկատելի տարբերություններ՝ հաշվառող այդ երկու մարմինների տվյալներում:
2) Հնարավոր է, որ արտահանողները ԲՍՊՏ-ից ուղեկցող փաստաթուղթ ստանան մրգերի եւ բանջարեղենի արտահանման մեծ խմբաքանակի համար (ինչ-որ պայմանագրի հիման վրա), սակայն չարտահանեն հայտարարագրված քանակությունը: Այդ դեպքում փաստացի արտահանված քանակությունը կհաշվառվի Մաքսային ծառայության կողմից, իսկ ԲՍՊՏ-ի թվերում կարող է արտացոլվել նախապես դուրս գրված ուղեկցող փաստաթղթում նշված թիվը:

Բոլոր դեպքերում **խելամիտ կլինի կարծել, որ Հայաստանի մրգերի եւ բանջարեղենի արտահանման ճիշտ քանակներն ընկած են Մաքսային ծառայության եւ ԲՍՊՏ-ի թվերի միջեւ**:

### 3.1.1 Մրգերի արտահանման քանակները

Մրգերի արտահանման գործընթացն աչքի է ընկնում իր դինամիկ եւ կայուն զարգացման տեմպերով: **Համաձայն ԱՎԾ-ի տվյալների (որի հիմքում Մաքսային ծառայության թվերն են)**, եթե 2004թ.-ին Հայաստանի մրգերի արտահանումը կազմել է 2.4 հազ. տոննա՝ 580 հազ. ԱՄՆ դոլար արժեքով, ապա 2010թ. 10 ամիսների արդյունքներով այդ նույն ցուցանիշը կազմել է 9.4 հազ. տոննա՝ ավելի քան 5 մլն ԱՄՆ դոլար արժեքով: Եվ դա այն դեպքում, երբ 2010թ.-ին անբարենպաստ գյուղատնտեսական տարվա եւ բերքի փոքր քանակների պատճառով շատ արտահանողներ չեն կարողացել արտահանել իրենց պլանավորած քանակները: Ստորեւ ներկայացված են 2006-2010թթ.-ին մրգերի արտահանման ցուցանիշները.

**Նկար 26 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալները 2006-2010թթ.**




Աղբյուրներ՝
1. «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009
2. Մաքսային ծառայություն

Պետք է նկատի ունենալ, որ արտահանման քանակները ուղղակի կախվածության մեջ են արտադրության քանակներից. որպեսզի որեւէ միրգ արտահանվի, նախ այն պետք է արտադրվի: Իսկ, ինչպես արդեն մենք հասկացանք, արտադրության քանակները միայն մեկ գործոնի՝ եղանակային կտրուկ տատանումների պատճառով եւս կարող են կտրուկ տատանվել: Հենց այդ դեպքն է արձանագրվել 2010թ.-ին, երբ անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով ստացվել է ծիրանի եւ դեղձի շատ փոքր քանակի բերք (պոտենցիալից 7-8 անգամ պակաս): Այս իրավիճակում 2010թ.-ի 10 ամիսներին արտահանված 9.4 հազ. տոննա քանակությունը պետք է համարել շատ լավ ցուցանիշ: Վստահաբար կարելի է ասել, որ եթե 2010թ.-ին ստացվեր մրգերի սովորական քանակությամբ բերք, ապա միանշանակորեն կգերազանցվեր 2009թ.-ի արտահանման ցուցանիշը: Արտահանման ամենամեծ հզորություններ ունեցող «Սպայկա» ընկերությունը բերքի անբավարարության պատճառով չի կարողացել մթերել իր պլանավորած 10 հազ. տոննա քանակի անգամ կեսը: Նման խնդիրներ են ունեցել նաեւ մյուս արտահանողները:

Առաջիկա տարիներին մրգերի արտադրության եւ արտահանման քանակները եւս կտատանվեն: Սակայն մի բան ակնհայտ է. արտահանման աճի միտումները կպահպանվեն, քանի որ դրանց համար առկա են մի շարք նախադրյալներ: Այդ մասին խոսվել է **Գլուխ 6-ում** (տես **«ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ»**, էջ 115):

Ինչպես արդեն նշվել է այս հաշվետվության սկզբում, նշանակալից քանակներով եւ կայուն կերպով Հայաստանից արտահանվող մրգերի անվանացանկը ներառում է 5 անուն ապրանքներ: Դրանք են խաղողը (սեղանի սորտերի), ծիրանը, դեղձը, սալորը, կեռասը: Առանձին տարիների Հայաստանից արտահանվել է նաեւ խնձոր, տանձ, ընկուզապտուղներ (հիմնականում հունական ընկույզ), հատապտուղներ եւ նուռ, սակայն այդ արտահանումները կրել են խիստ անկայուն բնույթ եւ ծավալներով եղել են շատ փոքր: Ստորեւ ներկայացված են 2006-2010թթ. Հայաստանի մրգերի արտահանման ցուցանիշները.

**Աղյուսակ 15 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ.**

| Մրգեր | Ցուցանիշ | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 I-X |
|---|---|---|---|---|---|---|
| Խաղող սեղանի սորտերի | Քանակ, տոննա | 219 | 1,349 | 2,182 | 3,501 | 3,948 |
| | Արժեք, $ | 201,090 | 531,362 | 917,935 | 2,000,248 | 2,426,500 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ծիրան | Քանակ, տոննա | 1,929 | 905 | 5,280 | 9,082 | 4,627 |
| | Արժեք, $ | 771,129 | 264,589 | 2,002,784 | 3,691,311 | 2,039,700 |
| Դեղձ | Քանակ, տոննա | 135 | 315 | 271 | 654 | 194 |
| | Արժեք, $ | 39,577 | 137,957 | 161,248 | 338,445 | 113,000 |
| Սալոր | Քանակ, տոննա | 91 | 214 | 270 | 314 | 351 |
| | Արժեք, $ | 35,913 | 69,015 | 89,788 | 130,095 | 151,300 |
| Կեռաս | Քանակ, տոննա | 264 | 96 | 201 | 599 | 267 |
| | Արժեք, $ | 171,550 | 93,598 | 184,169 | 687,486 | 314,100 |
| Խնձոր | Քանակ, տոննա | - | - | 34 | 2.3 | 34 |
| | Արժեք, $ | - | - | 8,546 | 794 | 8,500 |
| Տանձ | Քանակ, տոննա | - | - | 0.1 | 0.6 | - |
| | Արժեք, $ | - | - | 98 | 2,162 | - |
| Ընկուզապտուղներ | Քանակ, տոննա | 11.7 | 0.1 | 3.1 | 3.5 | - |
| | Արժեք, $ | 29,280 | 1,029 | 18,985 | 12,035 | - |
| Հատապտուղներ, նուռ | Քանակ, տոննա | 124 | 24 | - | 55 | - |
| | Արժեք, $ | 63,096 | 15,309 | - | 26,675 | - |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **Քանակ, տոննա** | **2,774** | **2,901** | **8,241** | **14,213** | **9,420** |
| | **Արժեք, $** | **1,311,635** | **1,112,859** | **3,383,553** | **6,889,251** | **5,053,100** |

Աղբյուրներ՝
1. «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009
2. Մաքսային ծառայություն (2010թ.-ի համար)

Աղյուսակ 15-ից օգտվելու համար պետք է նկատի ունենալ հետեւյալը: Արտահանման գումարային մեծությունները կառուցված են ապրանքների մաքսային արժեքների վրա եւ ճիշտ պատկերացում չեն տալիս դրանց իրական ձեռքբերման գների մասին: Ուստի մրգերի արտահանման գումարային մեծությունները պետք է ընդունել ի գիտություն, սակայն դրանց վրա չպետք է կառուցել դատողություններ:

**Համաձայն ԲՍՊՏ-ի** տվյալների, Հայաստանի մրգերի արտահանման ցուցանիշները 2008-2010թթ.-ին հետեւյալն են.

**Աղյուսակ 16 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2008-2010թթ., տոննա**

| Մրգեր | 2008 | 2009 | 2010 I-X |
|---|---|---|---|
| Խաղող սեղանի սորտերի | 3,015 | 3,939 | 4,284 |
| Ծիրան | 7,519 | 13,418 | 1,970 |
| Դեղձ | 527 | 993 | 195 |
| Սալոր | 402 | 326 | 154 |
| Կեռաս | 232 | 638 | 283 |
| Խնձոր | 463 | 1,594 | - |
| Տանձ | | | - |
| Հատապտուղներ | - | 15 | - |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **12,157** | **20,923** | **6,885** |

Աղբյուր՝ Բուսասանիտարիայի պետական տեսչություն

Մաքսային ծառայության եւ Բուսասանիտարիայի պետական տեսչության տվյալների միջեւ առավել նշանակալից տարբերությունը կայանում է 2008-2009թթ.-ին խնձորի եւ տանձի արտահանման քանակների հարցում: Ենթադրում ենք, որ այդ ամբողջ տարբերությունը արտահանվել է Վրաստան, ֆիզիկական անձանց կողմից եւ շատ փոքր խմբաքանակներով:

Հայաստանի մրգերի արտահանման կառուցվածքում իրենց ծավալներով առանձնանում են երկու տեսակներ՝ ծիրանը եւ խաղողը: **Ծիրանը** արտաքին շուկաներում հայկական մրգերից ամենամեծ հռչակ վայելող ապրանքն է: ***«Հայկական ծիրան»*** **կապակցությունը արդեն վերափոխվել է բրենդի**: Ըստ արտահանողների, շատ են դեպքերը, երբ Մոսկվայի շուկաներում Ուզբեկստանից կամ Դաղստանից բերված ծիրանը հաջող իրացնելու համար առեւտրականները դրանք ներկայացնում են որպես «Հայկական ծիրան»: Այս ճանաչումը ծիրանին ապահովել է լուրջ մրցակցային առավելություններ, որն էլ վերջին տարիներին բարեհաջող ձեւով օգտագործվում է արտահանողների կողմից: Այն ըմբռնումը, որ ծիրանը հանդիսանում է արտահանման ամենամեծ հեռանկարներ ունեցող միրգը, գյուղացիական տնտեսություններին եւ ներդրողներին ստիպում է իրենց հիմնական ներդրումները կատարել հենց ծիրանի այգիների հիմնման մեջ: Արտաքին շուկաներում ծիրանի հարցում Հայաստանի հիմնական մրցակիցը կարող էր լինել Թուրքիան (որը ծիրանի արտադրության գծով աշխարհում 1-ին երկիրն է), սակայն Թուրքիայում հիմնական շեշտը դրվում է ծիրանի վերամշակման, ավելի ստույգ՝ չորացման վրա: Այս պատճառով հայկական ծիրանը մասամբ «ազատվել է» մի լուրջ մրցակցից:

Հայկական **խաղողն** ի դեմս իր արտահանվող 5-6 սեղանի սորտերի (Սեւ եւ Կարմիր քիշմիշներ, Շահումյան, Իծապտուկ, եւ այլն) արտաքին շուկաներում հանդիպում է ավելի մեծ մրցակցության, քան ծիրանը: Հիմնական մրցակցությունը ներկայացվում է Մոլդովայից եւ Ուզբեկստանից: Սակայն իրացման շուկան (Ռուսաստան) այնքան մեծ է, որ ներկա արտահանման քանակները ամբողջությամբ սպառում է:

Ըստ արտահանողների, արտահանման ընդլայնման հնարավորություններ կան նաեւ **դեղձով**, **սալորով** եւ **կեռասով**: Վերջին երկուսը քիչ են արտահանվում՝ իրենց արտադրության փոքր քանակների պատճառով: Փոխադրունակ եւ բավարար ապրանքային տեսք ունեցող սալորը մթերվում է միայն Արմավիրի մարզից, իսկ կեռասը՝ միայն Արարատի մարզի Արտաշատի, Արմավիրի մարզի Արմավիրի, Արագածոտնի մարզի Աշտարակի եւ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջաններից: Հայաստանի մյուս ռեգիոններն առայժմ սալորի եւ կեռասի լուրջ առաջարկ չեն ներկայացնում: Ինչ վերաբերվում է դեղձին, ապա այստեղ առկա են փոքր-փոքր խնդիրներ, որոնք բոլորով միասին ստեղծում են արտահանման ծավալների ընդլայնման խոչընդոտներ: Դեղձը շատ ավելի զգայուն է փոխադրման պայմանների եւ ջերմային ռեժիմի նկատմամբ, աչքի է ընկնում սորտային կազմի եւ բերքահավաքի սեզոնայնության բազմազանությամբ: Հիմնականում այս պատճառներով է, որ համեմատաբար մեծ քանակներով արտադրվող դեղձը արտահանվում է փոքր քանակներով:

Առավել ուշագրավ է խնձորի եւ տանձի արտահանման վիճակագրությունը: Այն խնդիրները, որոնք ներկայացվել էին **տանձի** դեպքում՝ խոշոր արտադրողների բացակայություն, սորտային եւ սեզոնային բազմազանություն, կենտրոնացման բացակայություն, փոխադրունակ սորտերի սակավություն, ապրանքային տեսքի ցածր մակարդակ, վերջին հաշվով իրենց արտահայտումն են գտել արտահանման բացակայության ձեւով: Իսկ ահա **խնձորի** արտահանման բացակայությունը (կամ շատ փոքր քանակները) խիստ ուշագրավ է, եթե նկատի ունենանք այն, որ **խնձորը ամենից մեծ քանակներով արտադրվող միրգն է**: Խնդիրն ունի հետեւյալ բացատրությունը; ըստ արտահանողների, Հայաստանում արտադրվում է խնձոր, որն իր ապրանքային տեսքով եւ փոխադրունակ լինելու հատկությամբ կարելի է դուրս բերել արտաքին շուկաներ: Սակայն դրան խանգարում են երկու հանգամանքներ.

- Ռուսաստանը, որը հանդիսանում է արտահանողների գլխավոր թիրախային շուկան, ինքը եւս խնձորի խոշոր արտադրող է: Չնայած դրան, Ռուսաստանը խնձոր է ներմուծում: Այդ շուկայում գլխավոր մասնակիցներ են խնձորի արտադրության այնպիսի առաջատար երկրներ, ինչպիսիք են Չինաստանը, Լեհաստանը, Գերմանիան: Այս երկրների առաջարկը կայունության, քանակների եւ գների առումով լուրջ մրցակցային դժվարություններ է ներկայացնում հայկական խնձորի համար:
- Հայաստանում արտադրվող խնձորն ունի արտադրության (առաջարկի) եւ սպառման ամենաերկար ժամանակահատվածը: Այն իր հատկություններով երկարաժամկետ պահպանվող միրգ է, ինչը թույլ է տալիս նրա իրացումը կազմակերպել բերքահավաքի ավարտից հետո 6 ամիսների ընթացքում: Իրացման/սպառման այսպիսի դիվերսիֆիկացիան թույլ է տալիս լուծել խնձորի իրացման խնդիրը ամբողջությամբ ներքին շուկայում: Ուստի անգամ խոշոր արտադրողները չունեն իրենց ապրանքն իրացնելու լուրջ խնդիրներ:

### 3.1.2 Բանջարեղենի արտահանման քանակները

Հայաստանի բանջարեղենի արտահանման տվյալների հարցում Մաքսային ծառայության եւ ԲՍՊՏ-ի տվյալների միջեւ առկա են էլ ավելի մեծ տարբերություններ: **Համաձայն ԱՎԾ-ի տվյալների (որի հիմքում Մաքսային ծառայության թվերն են)** մինչեւ 2010թ.-ը բանջարեղենի արտահանման քանակները եղել են բավականին փոքր: Ընդ որում՝ արտահանման հիմնական մասը բաժին է ընկել կարտոֆիլին: Արտահանումը հիմնականում միտված է եղել դեպի Վրաստանի շուկա: Այն բանից հետո, երբ 2004-2005թթ.-ին տարբեր պատճառներով խաթարվեց (հմա՝ արգելվեց) դեպի Վրաստան կարտոֆիլի արտահանումը, դրա հետ միասին բանջարեղենի արտահանման ցուցանիշները մոտեցել են գրեթե զրոյի: 2006-2007թթ.-ին բանջարեղեն գրեթե չի արտահանվել: Ստորեւ ներկայացված են 2006-2010թթ.-ին բանջարեղենի արտահանման ցուցանիշները.

**Նկար 27 - Հայաստանի բանջարեղենի արտահանման ծավալները 2006-2010թթ.**




Աղբյուրներ՝
1. «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009
2. Մաքսային ծառայություն

Մեծ հաշվով, բանջարեղենի արտահանման փոքր քանակները վկայում են ոչ թե խնդրի գոյության, այլ օրինաչափ իրավիճակի մասին: Այսպես, Հայաստանում թողարկվող բանջարեղենի անվանացանկում մեծ քանակներով արտադրվում են միայն կարտոֆիլը եւ լոլիկը: Այս երկու մշակաբույսերին բաժին է ընկնում բանջարեղենի ամբողջ բերքի ավելի քան

60%-ը: Միայն այս երկու մշակաբույսերն են, որ արտադրվում են Հայաստանի պահանջարկը գերազանցող քանակությամբ: Մյուս մշակաբույսերի արտադրության քանակներն այնպիսին են, որ ամբողջությամբ ուղղվում են ներքին պահանջարկի բավարարմանը: Ավելին, բանջարեղենի որոշ տեսակների գծով չբավարարվող պահանջարկը կամ սեզոնային դեֆիցիտը լրացնելու համար Հայաստանը ներմուծում է լոլիկ, վարունգ, պղպեղ, բադրջան, գլուխ սոխ, սխտոր, գազար (այդ մասին տես **Գլուխ 4, «ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ», էջ 75**): Ուստի այն հանգամանքը, որ բանջարեղենը չի արտահանվում եւ ուղղվում է ներքին պահանջարկի բավարարմանը, պետք է համարել օրինաչափ երեւույթ: Հայաստանի բանջարեղենի արտահանման բաշխվածքն ըստ տեսակների ներկայացված է ստորեւ.

**Աղյուսակ 17 - Հայաստանի բանջարեղենի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ.**

| Բանջարեղեն | Ցուցանիշ | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 I-X |
|---|---|---|---|---|---|---|
| Կարտոֆիլ պարենի | Քանակ, տոննա | - | - | 484 | 614 | 2,332 |
| | Արժեք, $ | - | - | 102,495 | 80,122 | 465,000 |
| Լոլիկ | Քանակ, տոննա | 0.2 | - | 7.2 | 8.4 | 358 |
| | Արժեք, $ | 147 | - | 5,638 | 18,379 | 235,400 |
| Վարունգ | Քանակ, տոննա | 0.1 | - | 7.4 | 5.5 | 5.8 |
| | Արժեք, $ | 80 | - | 5,785 | 7,929 | 4,900 |
| Կաղամբ | Քանակ, տոննա | - | - | - | - | 172 |
| | Արժեք, $ | - | - | - | - | 24,000 |
| Պղպեղ | Քանակ, տոննա | 14.2 | 15.9 | 12.6 | 15.5 | 41.4 |
| | Արժեք, $ | 4,451 | 6,616 | 10,726 | 24,207 | 30,300 |
| Սմբուկ | Քանակ, տոննա | - | - | - | 0.9 | - |
| | Արժեք, $ | - | - | - | 1,627 | - |
| Գլուխ սոխ | Քանակ, տոննա | - | - | 0.1 | 20 | - |
| | Արժեք, $ | - | - | 126 | 50,500 | - |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **Քանակ, տոննա** | **15** | **16** | **511** | **665** | **2,909** |
| | **Արժեք, $** | **4,678** | **6,616** | **124,770** | **182,764** | **759,600** |

Աղբյուրներ՝
1. «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009
2. Մաքսային ծառայություն (2010թ.-ի համար)

2010թ.-ին արձանագրված արտահանման ծավալների կտրուկ աճը պայմանավորված է երկու հանգամանքներով.

- 2009թ.-ին ստացված եւ պահեստավորված կարտոֆիլի բերքի մի մասը 2010թ.-ի սկզբին հնարավոր է եղել արտահանել Վրաստան:
- 2010թ.-ին Ռուսաստանում արձանագրված աննախադեպ երաշտը մեծ վնաս է հասցրել այդ երկրի գյուղատնտեսությանը: Հատկապես տուժել են հացահատիկային եւ բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները: Արդյունքում առաջացել է բանջարեղենի դեֆիցիտ, որը փակելու համար Ռուսաստանն այս տարի իրականացնում է լոլիկի, վարունգի, կաղամբի, եւ այլ բանջարեղենի մեծածավալ ներկրումներ:

Այս հնարավորության առաջացման պայմաններում հայկական արտահանողները 2010թ.-ին Ռուսաստան են առաքել լոլիկի զգալի քանակություն, իսկ մինչեւ տարվա վերջ ռեկորդային քանակների (3-4 հազ. տոննա) կհասնի կաղամբի արտահանումը:

**ԲՍՊՏ-ի տվյալները** նկատելի եւ էական տարբերություններ ունեն Մաքսային ծառայության թվերից (տես Աղյուսակ 18).

**Աղյուսակ 18 - Հայաստանի բանջարեղենի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ., տոննա**

| Բանջարեղեն | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 I-X |
|---|---|---|---|---|---|
| Կարտոֆիլ պարենի | 22 | 50 | 4,468 | 7,039 | 3,724 |
| Լոլիկ | - | - | - | 2,169 | n/a |
| Վարունգ | - | - | - | 213 | n/a |
| Կաղամբ, սեղանի ճակնդեղ | - | - | 804 | 299 | n/a |
| Գազար, շաղգամ, բողկ | - | - | 619 | 317 | n/a |
| Պղպեղ, սմբուկ, կանաչեղեն | 57 | 21 | 364 | 1,160 | n/a |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **79** | **71** | **6,255** | **11,196** | **-** |

Աղբյուր՝ Ռուսաստանի ֆեդերացիայի պետական տեսչություն

Ինչպես կարելի է նկատել Աղյուսակ 17-ի եւ Աղյուսակ 18-ի տվյալների համեմատությունից, բանջարեղենի գրեթե բոլոր անուններով առկա է արտահանման ծավալների զգալի տարբերություններ: Մենք կրկին հանգել ենք այն ենթադրությանը, որ այդ տարբերությունների չափով քանակներն արտահանվել են ֆիզիկական անձանց կողմից՝ փոքր խմբաքանակներով: Այս ենթադրության օգտին խոսում է նաեւ հետեւյալ հանգամանքը: Սույն հետազոտության շրջանակներում մեր խորհրդատուները հանդիպումներ են ունեցել մրգերի եւ բանջարեղենի մեկ տասնյակից ավել արտահանողների հետ, այդ թվում հիմնական խոշոր գործարարների հետ: Նրանցից եւ ոչ մեկը 2008-2009թթ.-ին լոլիկ, վարունգ, կաղամբ կամ գազար չի արտահանել:

## 3.2 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ

Հայկական մրգերի եւ բանջարեղենի **արտահանման շուկաների աշխարհագրությունը բավականին փոքր է**: Այն սահմանափակվում է նախկին խորհրդային մի քանի պետություններով՝ Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա, Բելառուս: Բացի փոքր աշխարհագրությունը, հայկական մրգերի **արտահանումն ունի դիվերսիֆիկացիայի շատ ցածր աստիճան**: Կարելի է ասել, որ **այն ամբողջապես կախված է մեկ շուկայից**, որն է Ռուսաստանը: Եթե չհաշվենք ֆիզիկական անձանց միջոցով եւ շատ փոքր խմբաքանակներով Վրաստան արտահանվող **<u>մրգերի</u>** քանակը, ապա մեծածավալ **<u>արտահանումների</u>** ավելի քան 90%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին: Դրա համար եղել են եւ առ այսօր մնում են մի շարք պատճառներ.

- Անկախության տարվանից (1991թ.) ի վեր Ռուսաստանը եղել եւ մնում է Հայաստանի գլխավոր քաղաքական եւ տնտեսական գործընկերը;
- Հայաստանի համար Ռուսաստանը հանդիսանում է ամենամոտ գտնվող խոշորագույն շուկան, որի հետ կարգավորված են տրանսպորտային հաղորդակցության խնդիրները;
- Աշխարհագրական տեղադիրքի եւ բնակլիմայական պայմանների պատճառով Ռուսաստանում չեն արտադրվում այն մրգերը, որոնցով Հայաստանը մտնում է այդ շուկա: Ռուսաստանում հայկական մրգերը մրցակցում են այլ երկրներից (Մոլդովա, Ռումինիա, Թուրքիա, Հունաստան, Ադրբեջան, Ուզբեկստան) ներմուծված մրգերի հետ;
- Հայ արտահանողները Ռուսաստանում գործելու համար չունեն լեզվական խոչընդոտներ: Դա թույլ է տալիս շփվել ինչպես սպառողների, այնպես էլ վերահսկող եւ կարգավորող պետական մարմինների հետ;
- Ռուսաստանում բնակվում է հայկական սփյուռքի ամենախոշոր խումբը (շուրջ 2 մլն. հայեր), որը եւս հանդիսանում է Ռուսաստանում հայկական մրգերի (ինչպես նաեւ այլ ապրանքների) նկատմամբ պահանջարկ ձեւավորող գործոն;

- Դեռեւս խորհրդային տարիներից հայկական մրգերը Ռուսաստանի տարածքում ունեցել են ճանաչում, ինչը մինչ այսօր նպաստում է այդ երկրում հայկական մրգերի առաջխաղացմանը:

Ստորեւ ներկայացված են 2009-2010թթ. հայկական մրգերի արտահանման շուկաները՝ իրենց քանակներով եւ մասնաբաժիններով, որտեղ հստակ երեւում է Ռուսաստանի շուկայի նշանակությունը հայ արտահանողների համար:

**Աղյուսակ 19 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալներն ըստ իրացման շուկաների, 2009-2010թթ.**

**2009թ.**

| Մրգեր | Երկրներ | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսաստան | Վրաստան | Ուկրաինա | Բելառուս | Բելգիա | տոննա | % |
| Խաղող | 3,883.2 | | 18.0 | 37.6 | | **3,938.8** | **18.8%** |
| Ծիրան | 8,303.3 | 4,023.4 | 1,036.8 | 54.2 | 0.2 | **13,417.9** | **64.1%** |
| Դեղձ | 724.8 | 268.0 | | | | **992.8** | **4.7%** |
| Սալոր | 187.0 | 26.9 | 76.2 | 36.1 | | **326.2** | **1.6%** |
| Կեռաս | 566.2 | 34.3 | 38.4 | | | **638.9** | **3.1%** |
| Հատապտուղներ | | 15 | | | | **15.0** | **0.1%** |
| Խնձոր, տանձ | | 1,594 | | | | **1,594.0** | **7.6%** |
| **Ընդամենը, տոննա** | **13,664.5** | **5,961.6** | **1,169.4** | **127.9** | **0.2** | **20,923.6** | |
| **Ընդամենը, %** | **65.3%** | **28.5%** | **5.6%** | **0.6%** | **0.0%** | | **100.0%** |

**2010թ. (I-X)**

| Մրգեր | Երկրներ | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ռուսաստան | Վրաստան | Ուկրաինա | Բելառուս | Չինաստան | տոննա | % |
| Խաղող | 4,283.9 | | | | | **4,283.9** | **62.2%** |
| Ծիրան | 1,739.4 | 17.9 | 211.6 | | 0.6 | **1,969.5** | **28.6%** |
| Դեղձ | 195.2 | | | | | **195.2** | **2.8%** |
| Սալոր | 153.9 | | | | | **153.9** | **2.2%** |
| Կեռաս | 276.3 | 6.4 | | | | **282.7** | **4.1%** |
| **Ընդամենը, տոննա** | **6,648.7** | **24.3** | **211.6** | **0.0** | **0.6** | **6,885.2** | |
| **Ընդամենը, %** | **96.6%** | **0.4%** | **3.1%** | **0.0%** | **0.0%** | | **100.0%** |

Աղբյուր՝ Բուսասանիտարիայի պետական տեսչություն

Երկրորդ շուկան, որտեղ մշտապես ներկայացված են հայկական մրգերը, դա Վրաստանն է: Դա օբյեկտիվորեն այդպես է, քանի որ Վրաստանը Հայաստանի մերձավոր հարեւանն է եւ նրա շուկան բաց է հայկական մրգերի առաջ (ի տարբերություն մյուս երկու հարեւանների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի): Վրաստան հայկական մրգերը առաքում են ինչպես հայկական արտահանողները, այնպես էլ ֆիզիկական անձինք՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ Վրաստանից:

Մյուս շուկաներում հայկական մրգերն առայժմ չունեն նույն դիրքերը, ինչ Ռուսաստանում: Դա են վկայում դեպի Ուկրաինա եւ Բելառուս մրգերի արտահանման փոքր եւ անկայուն քանակները: 2010թ.-ին հայկական արտահանողները մեծ շեշտադրություն են արել այդ շուկաների վրա: Սակայն թիրախվել են ոչ թե կոնկրետ այդ երկրները, այլ **խնդիր է դրվել**

**ընդլայնել մրգերի արտահանման աշխարհագրությունը**: Դա այսօր հայկական արտահանողների համար ռազմավարական նշանակության խնդիր է: Վերջին 1-2 տարիներին Ռուսաստանում տեղի ունեցող որոշ իրադարձություններ հայկական արտահանողներին ստիպում են փնտրել իրենց իրացման շուկաները դիվերսիֆիկացնելու ուղիներ: Չնայած հայկական արտահանողները Ռուսաստան մրգեր են արտահանում 1990-ական թթ.-ի կեսերից, սակայն առ այսօր նրանք աշխատում են նույն մեթոդով. **ամբողջ ապրանքն իրացվում է խոշոր քաղաքների բացօդյա շուկաներում:** Բոլոր խոշոր քաղաքների մեջ, որտեղ իրացվում են հայկական մրգերը, անառարկելի առաջատարը Մոսկվան է: Այստեղ իրացումները կազմակերպվել են 2 խոշոր բացօդյա շուկաներում, որոնք են «Չերքիզովսկի» եւ «Պակրովսկի» շուկաները: 2 տարի առաջ «Չերքիզովսկի» շուկան փակվել է եւ մրգերի մեծածախ իրացման խոշորագույն կետ է դարձել «Պակրովսկի» շուկան: Հիմա էլ խոսակցություններ կան վերջինսի տեղափոխման մասին: Սա լուրջ հարված կհասցնի հայկական մրգերի արտահանման գործին, եթե մինչ այդ չգտնվեն այլընտրանքային շուկաներ: Բացի դա, վերջին տարիներին Ռուսաստանում մրգերի եւ բանջարեղենի իրացումն աստիճանաբար տեղափոխվում է խոշոր առեւտրային ցանցեր, որտեղ հայկական արտահանողները դեռեւս փորձ չունեն: 2010թ.-ին հայկական մրգերի իրացման ավանդական քաղաքներին՝ Մոսկվային, Սանկտ-Պետերբուրգին, Դոնի Ռոստովին, Պյատիգորսկին, Խարկովին, Մինսկին ավելացել են նաեւ Սամարան, Նովոսիբիրսկը: Նկատի ունենալով վերջիններիս հեռավորությունը, կարելի է ենթադրել, որ հայկական արտահանողներն ունեն լուրջ մտադրություններ: Արտահանողների հետ կայացած զրույցներից, սակայն, մեր տպավորությունն այն է, որ նրանք դեռեւս չեն մտածում Եվրոպական շուկա դուրս գալու ուղղությամբ քայլեր անելու մասին: Դա պայմանավորված չէ Եվրոպական շուկայական կոնյունկտուրայով կամ շուկայի հեռավորությամբ: Այդ խնդիրն ունի այլ հիմքեր, որոնք հասկանալու համար պետք է ծանոթանալ մրգերի արտահանմամբ զբաղվող սուբյեկտներին (տես **Բաժին 3.4, «ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԸ», էջ 68**):

**Բանջարեղենի արտահանման** շուկաներն էլ ավելի սահմանափակ են, քան մրգերի դեպքում: Մինչեւ 2010թ.-ը արտահանումների գլխավոր ուղղությունը եղել է Վրաստանը, իսկ հիմնական ապրանքը, ինչպես նշվել է վերեւում, եղել է կարտոֆիլը: Վերջին տարիներին բանջարեղենի արտահանման հարցում եղած դժվարությունները հարթելու համար պետական մակարդակով լուրջ ջանքեր են գործադրվում: Այդ քայլերը հատկապես ինտենսիվացել են 2008-2009թթ., երբ կարտոֆիլի բերքի մեծ քանակների պատճառով դրա իրացման դժվարությունները սկսել են կրել մշտական բնույթ: Պետական միջամտության ջանքերը արդեն 2010թ.-ին նկատելի են դարձել: 2010թ.-ին կարտոֆիլն արտահանվել է 6 ուղղություններով (տես Նկար 28):

**Նկար 28 - Կարտոֆիլի արտահանման բաշխվածքն ըստ շուկաների, 2010թ. (I-X)**




2010թ.-ին արտահանված բանջարեղենի մնացած քանակությունը՝ լոլիկ, վարունգ, կաղամբ, պղպեղ (տես Աղյուսակ 17, էջ 63), արտահանվել է Ռուսաստան: Այդ արտահանումներն իրականացվել է նույն սուբյեկտների կողմից, ովքեր իրականացրել են նաեւ մրգերի արտահանումը: Դեպի Ռուսաստան բանջարեղենի արտահանումները 2010թ.-ին դեռեւս կավելանան՝ առնվազն խոշորագույն արտահանողի՝ «Սպայկա» ընկերության կողմից կաղամբի խոշորածավալ առաքումների հաշվին: Սակայն, ինչպես նշվել է վերեւում, Հայաստանից բանջարեղենի արտահանումները 2010թ.-ին կտրուկ ավելացել են Ռուսաստանում արձանագրված աննախադեպ երաշտի եւ բերքի սակավության արդյունքում:

Այդ իսկ պատճառով արտահանողները առայժմ չգիտեն, թե հնարավոր կլինի՞ արդյոք մյուս տարի ապահովել արտահանման նույն քանակները, եթե Ռուսաստանում լինի բերքառատ տարի: Բացի «Սպայկայից», մյուս արտահանողները այդ հարցում ավելի շուտ թերահավատ են:

## 3.3 ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հայաստանից մրգերի եւ բանջարեղենի արտահանումն իրականացվում է երկու եղանակով. ա) ցամաքային բեռնափոխադրումների միջոցով, եւ բ) օդային բեռնափոխադրումների միջոցով: Ցամաքային բեռնափոխադրումներն իրականացվում են **բացառապես բեռնատարներով**: Այն քանակները, որքանով արտահանվում են հայկական մրգերը եւ այն տեխնիկական պայմանները (ջերմային ռեժիմ, տեղափոխման արագություն), որոնք անհրաժեշտ են թարմ մրգերի տեղափոխման համար, հնարավոր է ապահովել միայն բեռնատարներով տեղափոխման դեպքում, երկաթուղային բեռնափոխադրումները դրա համար հարմար չեն: Մրգերի տեղափոխումն իրականացվում է 20 տոննա տարողությամբ սառնարանային կցորդներով բեռնատարներով (մրգերի արդյունավետ բարձման քաշը (նետտո)՝ միջինը 18 տոննա):

Նախքան Վրաց-ռուսական սահմանին գտնվող Վերին Լարսի անցակետի բացումը հայկական մրգերի տեղափոխման ուղին եղել է հետեւյալը. բեռնատարներով ցամաքային բեռնափոխադրում մինչեւ Փոթի նավահանգիստ (Վրաստան), ապա լաստանավով փոխադրում դեպի Իլիչեւսկ (Ուկրաինա) կամ Նովոռոսիյսկ (Ռուսաստան), ապա՝ բեռնատարներով ցամաքային բեռնափոխադրում մինչեւ նշանակման վայր (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ եւ այլն): Այս ձեւով բեռնափոխադրումները տեւել են լավագույն դեպքում 5-10 օր: Արտահանողների վրա բեռների տեղափոխումն արժեցել է միջին հաշվով 15 հազ. ԱՄՆ դոլար (Երեւան-Մոսկվա), որը ներառում է ապրանքների մաքսավճարները, բեռնափոխադրման ծախսերը եւ կաշառքները (սահմանային անցակետերում, Ռուսաստանի սննդի անվտանգության ստուգող մարմիններին եւ այլն): Քիչ չեն դեպքերը, երբ լաստանավային փոխադրումների ուշացման հետ կապված արտահանողների ապրանքը փչացել է, այդպես էլ տեղ չհասնելով:

Վերին Լարսի սահմանային անցակետի բացումից հետո արտահանումների գործը տեխնիկապես զգալիորեն բարելավվել է: Երեւան-Մոսկվա երթուղով ապրանքները տեղ են հասնում 3 օրում, մոտ 2 հազ. ԱՄՆ դոլարով կրճատվել են բեռնափոխադրումների ծախսերը:

Օգտվելով թարմ մրգերի Ռուսաստանի շուկայի առանձնահատկություններից, որոշ արտահանողներ մրգերի արտահանումը կազմակերպում են **ինքնաթիռներով**: Դա սովորաբար արվում է բերքահավաքի ամենասկզբում, երբ դեռ իրացման շուկայում չկան մրգեր, կամ էլ՝ շուկայում որոշ պահերի առաջացող ապրանքային դեֆիցիտի ժամանակ: Ինքնաթիռային բեռնափոխադրումների ժամանակ ուղարկվող ապրանքների քանակները փոքր են, սակայն դրանք իրացվում են շատ ավելի թանկ գներով, ինչի արդյունքում այդպիսի գործարքները, որպես կանոն, լինում են շատ շահութաբեր: Դրա պատճառով որոշ արտահանողներ մրգեր են արտահանում միայն ինքնաթիռային բեռնափոխադրումների միջոցով:

Ստորեւ ներկայացված է 2009-2010թթ.-ին արտահանված մրգերի քանակների բաշխվածքն ըստ բեռնափոխադրման ձեւերի.

**Աղյուսակ 20 - Հայաստանի մրգերի արտահանման ծավալներն ըստ բեռնափոխադրումների ձեւերի, 2009-2010թթ.**

**2009թ.**

| Մրգեր | | Բեռնափոխադրումների ձեւեր | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ցամաքային բեռնափոխադրումներ՝ բեռնատարներով | | Օդային բեռնափոխադրումներ՝ ինքնաթիռներով | | | |
| | | տոննա | % | տոննա | % | տոննա | % |
| Խաղող | | 3,912.4 | 99.3% | 26.4 | 0.7% | **3,938.8** | **18.8%** |
| Ծիրան | | 12,824.9 | 95.6% | 593.0 | 4.4% | **13,417.9** | **64.1%** |
| Դեղձ | | 850.7 | 85.7% | 142.1 | 14.3% | **992.8** | **4.7%** |
| Սալոր | | 325.5 | 99.8% | 0.7 | 0.2% | **326.2** | **1.6%** |
| Կեռաս | | 344.5 | 53.9% | 294.4 | 46.1% | **638.9** | **3.1%** |
| Հատապտուղներ | | 15.0 | 100.0% | - | 0.0% | **15.0** | **0.1%** |
| Խնձոր, տանձ | | 1,594.0 | 100.0% | - | 0.0% | **1,594.0** | **7.6%** |
| **Ընդամենը** | **տոննա** | **19,867.0** | | **1,056.6** | | **20,923.6** | |
| | **%** | | **95.0%** | | **5.0%** | | **100.0%** |

**2010թ. (I-X)**

| Մրգեր | | Բեռնափոխադրումների ձեւեր | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ցամաքային բեռնափոխադրումներ՝ բեռնատարներով | | Օդային բեռնափոխադրումներ՝ ինքնաթիռներով | | | |
| | | տոննա | % | տոննա | % | տոննա | % |
| Խաղող | | 4,268.9 | 99.6% | 15.0 | 0.4% | **4,283.9** | **62.2%** |
| Ծիրան | | 1,745.4 | 88.6% | 224.1 | 11.4% | **1,969.5** | **28.6%** |
| Դեղձ | | 130.8 | 67.0% | 64.4 | 33.0% | **195.2** | **2.8%** |
| Սալոր | | 149.2 | 96.9% | 4.7 | 3.1% | **153.9** | **2.2%** |
| Կեռաս | | 168.8 | 59.7% | 113.9 | 40.3% | **282.7** | **4.1%** |
| **Ընդամենը** | **տոննա** | **6,463.1** | | **422.1** | | **6,885.2** | |
| | **%** | | **93.9%** | | **6.1%** | | **100.0%** |

Աղբյուր՝ Բուսասանիտարիայի պետական տեսչություն

## 3.4 ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԸ

Հայաստանում մրգերի եւ բանջարեղենի արտահանման գործընթացում *այս կամ այն գործառույթով* ներգրավված են ավելի քան 30 սուբյեկտներ: Մենք նշում ենք «այս կամ այն գործառույթով», քանի որ արտահանող սուբյեկտների հանրությունն ունի բացառիկ կառուցվածք: Դժվար է գտնել որեւէ այլ բնագավառ, որտեղ գործում են ապրանքների արտահանման տեսանկյունից մի քանի ֆունկցիոնալ նշանակությամբ արտահանողների խմբեր: Բնագավառի վերլուծության հիման վրա կարելի նշել, որ Հայաստանում գործում են արտահանողների 3 տեսակի խմբեր.

| ԽՈՒՄԲ 1 | ԽՈՒՄԲ 2 | ԽՈՒՄԲ 3 |
|---|---|---|
| Այս խումբը բաղկացած է մոտ 2 տասնյակ արտահանողներից: Սրանք մրգերի եւ բանջարեղենի արտահանման մեջ մասնագիտացած **ֆիզիկական անձինք են**: Բերքահավաքի սեզոնին նրանք գյուղացիական տնտեսություններից գնում են մրգերի եւ բանջարեղենի իրենց անհրաժեշտ քանակությունը, կազմակերպում են դրա նախնական սառեցումը, ապրանքի խմբաքանակի առաքումը նշանակման վայր եւ տեղում դրա իրացումը: Արտահանման գործընթացում այս խմբի սուբյեկտները աշխատում են սեփական կամ ներգրավված ռեսուրսներով, **կրում են բոլոր ֆինանսական ռիսկերը**, այդ թվում՝ արտադրող տնտեսություններին վճարելու, արտահանման բոլոր ծախսերը հոգալու, ինչպես նաեւ արտահանման գործարքի հնարավոր վնասների ստանձնման պատասխանատվությունը: Չնայած արտահանման գործընթացում իրենց ուղղակի կամ փաստացի ներգրավվածությանը, այս խմբի արտահանողները **իրավաբանորեն ոչ մի ձեւով չեն երեւում**, նրանց ապրանքների մաքսազերծումը կատարվում է ոչ իրենց անունից: | Այս խումբը բաղկացած է **իրավաբանորեն գրանցված** 4-5 տնտեսվարող սուբյեկտներից: Սրանք բացի այն, որ իրականացնում են 1-ին խմբի արտահանողների բոլոր գործառույթները (կազմակերպում են մրգերի եւ բանջարեղենի մթերում, սառեցում, տեղափոխում եւ իրացում), նաեւ ապրանքների մաքսային ձեւակերպման եւ/կամ բեռնափոխադրման ծառայություններ են մատուցում 1-ին խմբի արտահանողներին: | Այս խումբը բաղկացած է **իրավաբանորեն գրանցված** մոտ 1 տասնյակից ավել տնտեսվարող սուբյեկտներից: Սրանք **մասնագիտացած են ապրանքների մաքսային ձեւակերպման գործառույթներում**: Այլ կերպ ասած՝ սրանք սուբյեկտներ են, որոնք համատեղում են բեռնափոխադրողի եւ մաքսային բրոքերի գործառույթները: Այս խմբի սուբյեկտները որեւէ մասնակցություն չունեն բերքի հավաքման, գնման, նախնական պահպանման/սառեցման աշխատանքներում, ինչպես նաեւ ապրանքների իրացման հարցերում: Սրանք միայն ֆինանսական պատասխանատվություն են կրում ապրանքը անվնաս եւ ժամկետին իր նշանակման վայր հասցնելու համար: |

Ինչպես կարելի է հասկանալ արտահանողների վերոհիշյալ ներկայացումից, իրական արտահանողները ներկայացված են 1-ին եւ 2-րդ խմբերում: 3-րդ խմբի սուբյեկտները ապահովում են արտահանման լոգիստիկան: Չնայած դրան, Մաքսային ծառայությունում որպես արտահանողներ են նշվում միայն 2-րդ եւ 3-րդ խմբերի սուբյեկտները:

Առաջին հայացքից **1-ին խմբի արտահանողների** գործընթացի կենտրոնում լինելը եւ անվանապես չերեւալը նրանց հաղորդում է խորհրդավորություն: Սակայն իրականում ոչ մի խորհրդավոր գործարարներ կամ արտահանման բացառիկ մեխանիզմներ չկան: Այս խումբը բաղկացած է մրգերի եւ բանջարեղենի մեծածախ առեւտրով զբաղված ֆիզիկական անձանցից: Նրանք բոլորը բնակվում են Արարատյան դաշտավայրի տարբեր գյուղերում, նրանցից շատերը հանդիսանում են արտադրող գյուղացիական տնտեսություններ: Նրանց մեծ մասը մրգերի եւ բանջարեղենի արտահանման բնագավառում գործում է արդեն 15-20 տարի, առեւտրի շրջանառության մեջ ունեն 100-150 հազ. ԱՄՆ դոլար եւ տարեկան կարողանում են արտահանել յուրաքանչյուրը 500-1,500 տոննա միրգ եւ բանջարեղեն: Ըստ տարբեր աղբյուրներից եւ «ձնագնդի» մեթոդով հավաքված տեղեկատվության, 1-ին խմբի արտահանողների կազմը բաղկացած է հետեւյալ սուբյեկտներից.

**ԽՈՒՄԲ 1**

| Անուն | Մարզ | Տարածաշրջան | Համայնք | Տեղեկություններ արտահանման քանակների մասին** |
|---|---|---|---|---|
| 1. Չկալով Մուրադյան | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | 2009թ. → ≈ 1,000 տոննա |
| 2. Ոսկան Մարկոսյան | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | 2009թ. → > 450 տոննա<br>2010թ. → > 170 տոննա |
| 3. Տարոն Երեմյան | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | 2009թ. → > 500 տոննա |
| 4. Ժիրայր* . . . | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | 2009թ. → > 500 տոննա |
| 5. Մահար (Սայիդ) Միոյան | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | 2009թ. → > 600 տոննա |
| 6. Քյարամ* . . . | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | |
| 7. Քյարամ* . . . (մեկ ուրիշը) | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | |
| 8. Համիկ* . . . | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | |
| 9. Բագրատ Մկրտչյան | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | 2009թ. → ≈ 55 տոննա |
| 10. Քաջիկ Դավթյան | Արմավիր | Արմավիր | գ. Արեւիկ | |
| 11. Արմեն Սարգսյան | Արմավիր | Արմավիր | գ. Արմավիր | 2009թ. → > 500 տոննա |
| 12. Ռուբեն Հովհաննիսյան | Արմավիր | Արմավիր | գ. Արմավիր | |
| 13. Արտուշ Սարգսյան | Արմավիր | Արմավիր | գ. Մրգաշատ | 2009թ. → ≈ 350 տոննա |
| 14. Բաղդասար Մնացականյան | Արմավիր | Բաղրամյան | գ. Քարակերտ | |
| 15. Սպարտակ Էքիզյան | Արմավիր | Արմավիր | գ. Այգեւան | |
| 16. Յուրա Հակոբյան | Արարատ | Արտաշատ | գ. Քաղցրաշեն | 2009թ. → > 410 տոննա<br>2010թ. → > 330 տոննա |
| 17. Աշոտ Ավետյան | Արարատ | Մասիս | գ. Մարմարաշեն | |

* - Հետազոտության անցկացման ժամանակահատվածը համընկել է մրգերի եւ բանջարեղենի արտահանման սեզոնի հետ: Ոչ բոլոր արտահանողների հետ է հնարավոր եղել հանդիպել, քանի որ նրանց շատերը գտնվել են Ռուսաստանում եւ զբաղված են եղել իրենց ապրանքի իրացման հարցերով: Այդ իսկ պատճառով նրանց մասին տվյալները ստացվել են նրանց ծանոթներից՝ շատ հաճախ ոչ լիարժեք ձեւով: Նշված սուբյեկտների ազգանունների բացակայությունը այդ խնդրի հետեւանքն է:

** - Այս տվյալները հաղորդել են հենց իրենք՝ արտահանողները եւ հնարավոր է, որ դրանք նվազեցված են: Դրանք նշվել են՝ պարզապես արտահանողների գործունեության մասշտաբների մասին մոտավոր պատկերացում կազմելու համար:

1-ին խմբի արտահանողները գտնվում են արտահանման գործընթացների կենտրոնում եւ միեւնույն ժամանակ գրանցված չեն որպես տնտեսվարող սուբյեկտներ եւ իրավաբանորեն արտահանման շղթայում գոյություն չունեն: Դրա համար նրանք կիրառում են գործունեության կազմակերպման շատ պարզ մեխանիզմ. **Արտահանման գործընթացը մինչեւ մաքսային ձեւակերպումների փուլը չի պահանջում որեւէ փաստաթղթաշրջանառություն: Հետեւաբար՝ չի երեւում, թե ով ում ապրանքն է ձեռք բերել, ինչ քանակներով: Մաքսային ձեւակերպումների գործը փաստացի արտահանողը հանձնարարում է 2-րդ կամ 3-րդ խմբի արտահանողներին (վերջիններս իրենց անունով Մաքսային ծառայությունում ունեն բացված արտահանողի փաթեթ, ինչը որ չունի փաստացի արտահանողը): Որպեսզի այդ սուբյեկտները կարողանան ապրանքն արտահանել, նրանք պետք է ցույց տան, որ այն գնել են: Մի քանի գյուղացիների անունից գնման ակտով ապրանքի խմբաքանակը հաշվապահորեն վաճառվում է մաքսային ձեւակերպումներ իրականացնող ընկերությանը: Ընդ որում հատուկ հոգ է տարվում, որ ոչ մի գյուղացու մասով «իրացումները» չհասնեն ԱԱՀ-ով հարկման շեմին (58.35 մլն դրամ): Այն բանից հետո, երբ մաքսային ձեւակերպումներ իրականացնող ընկերությունը հաշվապահորեն դառնում է ապրանքի սեփականատերը, կատարում է իր ձեւակերպումները եւ ապրանքն արտահանվում է: Այս ամբողջ շղթայում փաստացի արտահանողի անունը որեւէ տեղ չի**

**շոշափվում: Դժվար չէ կռահել, որ փաստացի արտահանողը, որպես իրավաբանորեն գոյություն չունեցող տնտեսվարող սուբյեկտ, իր գործունեությունից չի վճարում որեւէ հարկ:**

Այս մեխանիզմն այնքան անթերի է գործում եւ ֆինանսապես այնքան գրավիչ է, որ 1-ին խմբի արտահանողները որեւէ պատճառ չունեն փոխել իրենց գործունեության ձեւը:

> ! Այս տեսանկյունից հատկապես կարեւոր է այն հարցը, թե **որքանո՞վ կարող է Ազատ Տնտեսական Գոտին (ԱՏԳ) հետաքրքիր լինել 1-ին խմբի արտահանողների համար**: Վերջիններիս հետ մեր զրույցներից մենք *եզրակացնում ենք, որ գոնե այս փուլում, երբ ԱՏԳ-ն դեռեւս չի գործում, նրա նկատմամբ 1-ին խմբի արտահանողների հետաքրքրությունը շատ փոքր է: Նաեւ միանշանակ չէ, որ 1-ին խմբի արտահանողները որեւէ ձգտում կունենան օգտվել ԱՏԳ-ի ծառայություններից, երբ այն սկսի գործել*:

**2-րդ խմբի արտահանողները** թվով փոքր են եւ ունեն առաջացման տարբեր նախապատմություններ: Նրանցից մեկը («Սպայկա» ընկերությունը) նախկինում զբաղվել է միայն բեռնափոխադրումներով, այդ թվում այդպիսի ծառայություններ մատուցելով 1-ին խմբի արտահանողներին: 2009թ.-ից ընկերությունն ինքնուրույն սկսել է իրականացնել մրգերի եւ բանջարեղենի գնումներ՝ արտահանման նպատակով: Դրա հետ մեկտեղ «Սպայկան» շարունակում է մաքսային ձեւակերպման եւ բեռնափոխադրման ծառայություններ մատուցել 1-ին խմբի արտահանողներին, այդ պատճառով էլ հայտնվել է արտահանողների 2-րդ խմբում: Այս խմբում կան 2-3 այլ ընկերություններ, որոնց սեփականատերերը մի քանի տարի առաջ գտնվում էին 1-ին խմբի արտահանողների շարքում: Վերջիններս ժամանակի ընթացքում ստեղծել են սեփական ընկերությունները, իրենց անունով արտահանողի փաթեթ են բացել Մաքսային ծառայությունում եւ սկսել են սպասարկել ինչպես սեփական արտահանումները, այնպես էլ 1-ին խմբի արտահանողների գործերը: Արտահանողների 2-րդ խումբը ներկայացված է հետեւյալ սուբյեկտներով.

**ԽՈՒՄԲ 2**

| Անուն | Մարզ | Տարածաշրջան | Համայնք | Այլ տեղեկություններ |
|---|---|---|---|---|
| 1. «Սպայկա» ՍՊԸ | Երեւան | Երեւան | ք. Երեւան | |
| 2. «Գեղթամ-Ագրո» ՍՊԸ | Արարատ | Արտաշատ | ք. Արտաշատ | |
| 3. «Արմեն-Ֆրութ» ԱԿ | | | | |

Բացի «Սպայկայից», 2-րդ խմբի արտահանողների գործունեության մասշտաբները շատ չեն տարբերվում 1-ին խմբի արտահանողների մասշտաբներից: Ուստի այս խմբում հատուկ ուշադրության է արժանի միայն «Սպայկան», որի իրականացրած քայլերը **հեղափոխական նորարարություններ եւ փոփոխություններ են առաջացրել հայկական մրգերի եւ բանջարեղենի արտահանման բնագավառում:** Որպեսզի հասկանալի լինի, թե ինչում է կայանում «Սպայկայի» գործունեության բացառիկությունը, պետք է ծանոթանալ նրա իրականացրած ներդրումային ծրագրի հիմնական միջոցառումներին:

**ՏԵՂԵԿԱՆՔ 1 - «Սպայկա» ՍՊԸ**

| | | | |
|---|---|---|---|
| **Հիմնադրումը** | ▶ 2001թ. | | |
| **Գործունեությունը** | ▶ Միջազգային բեռնափոխադրումներ | | |
| **Հզորությունների տեղակայման վայրը** | ▶ Երեւան, Հայաստան | | |
| **Գործունեության նոր ուղղության հիմնում** | ▶ 2009թ.՝ մրգերի եւ բանջարեղենի արտահանման նպատակով տեխնիկական վերազինման ներդրումային ծրագրի իրականացման որոշում | | |
| **Ներդրումային ծրագրի հիմնական տարրերը** | ▶ Ծրագրի արժեքը | ▶ 12.5 մլն ԱՄՆ դոլար | |
| | ▶ Ներդրումների ուղղությունները | ▶ Շրջանառու միջոցների մոբիլիզացում՝ մրգերի եւ բանջարեղենի գնման նպատակով: Ապրանքի արժեքի 50% կանխավճարների հատկացում 3 մարզերի (Արմավիր, Արարատ, Արագածոտն) 30 գյուղերի 600 ֆերմերների;<br>▶ Մրգերի տեսակավորման հոսքագծի ձեռքբերում: Հզորությունը՝ ժամում 10 տոննա: Արտադրությունը՝ Ser.mac (Իտալիա);<br>▶ Volvo եւ Iveco մակնիշի 60 բեռնատարների ձեռքբերում՝ սառնարանային կցորդներով;<br>▶ Պոլիստիրոլից եւ պոլիպրոպիլենից արկղերի եւ եվրոպալլետների սեփական արտադրության հիմնում: Սարքավորումները՝ Kurtz Group (Գերմանիա);<br>▶ Մրգերի եւ բանջարեղենի պահպանման սառնարանային համալիրի կառուցում: Սարքավորումները՝ Carrier Transicold (ԱՄՆ);<br>▶ Մարկետինգային միջոցառումների իրականացում, որը կառուցված է արտաքին շուկաներում (հիմնականում՝ Ռուսաստանում) սեփական ապրանքանշանի՝ «ԱրարատՖրութ» բրենդի առաջխաղացման եւ ճանաչման բարձրացման վրա: | |

«Սպայկա» ընկերության ներդրումները աննախադեպ են հայկական մրգերի եւ բանջարեղենի արտահանման բնագավառում: Դրանց իրականացման արդյունքում այսօր «Սպայկան» դարձել է արտահանման հզորություններ ունեցող խոշորագույն ընկերությունը, ընդ որում միայնակ ավելի հզոր՝ քան բոլոր արտահանողները միասին վերցրած: Այսօր «Սպայկան» իր համալիր տեխնիկական զինվածության մակարդակով միակն է Հայաստանում, բեռնափոխադրող սեփական մեքենաների պարկով՝ խոշորագույնը տարածաշրջանում: «Սպայկան» ներդրել է բեռնափոխադրումների կառավարման ավտոմատ համակարգեր, այդ թվում ապրանքների կոդավորման համակարգեր, մեքենաների արբանյակային նավիգացիայի GPS համակարգեր եւ այլն:

Ներդրումային ծրագրով ստեղծված պոլիստիրոլից եւ պոլիպրոպիլենից արկղերի եւ եվրոպալլետների սեփական արտադրության հիմնումը ինովացիոն գաղափարների կյանքի կոչման փայլուն օրինակ է: Առ այսօր հայկական արտադրողներն իրենց ապրանքը տեղափոխել են փայտե արկղերով: Ի տարբերություն դրանց, «Սպայկայի» արկղերը պատրաստվում են գերթեթեւ եւ սննդի փաթեթավորման համար նախատեսված նյութերից, որոնք իրենց թեթեւ քաշի պատճառով թույլ են տալիս 4-10%-ով ավելացնել տեղափոխվող ապրանքի քաշը: Պոլիստիրոլից եւ պոլիպրոպիլենից արկղերը նաեւ չեն պահանջում սննդի անվտանգ տեղափոխման հատուկ սերտիֆիկատներ, ինչը պահանջվում է փայտե արկղերի դեպքում:

Ի տարբերություն մյուս բոլոր արտահանողների, ապրանքի իրացման հարցում «Սպայկան» կողմնորոշվում է դեպի խոշոր առեւտրային ցանցերը (սուպերմարկետները): Դրա համար ընկերությունը լուրջ ներդրումներ է արել փաթեթավորման եւ բրենդինգի ուղղությունների մեջ:

«Սպայկա» ընկերության ներդրումային ծրագրի սոցիալական էֆեկտը բնութագրվում է 450 մշտական եւ 1,500 սեզոնային աշխատատեղերի հիմնմամբ:

«Սպայկայի» բիզնես պլանով նախատեսված էր, որ գործունեության առաջին իսկ տարում արտահանման նպատակով մրգերի եւ բանջարեղենի մթերումները պետք է կազմեին 10 հազ. տոննա, ինչը հնարավոր չի եղել ապահովել բերքի քանակների սակավության պատճառով.

«Սպայկայի» մթերումները դրա անգամ կեսն էլ չեն կազմել: Սակայն եթե նկատի ունենանք այն, որ միջին բարենպաստ տարում դա միանգամայն իրագործելի խնդիր է, ապա պարզ է դառնում, որ «Սպայկան» հայտ է ներկայացնում արտահանել այնքան, որքան բոլոր արտահանողները միասին վերցրած:

«Սպայկայի» մուտքը Հայաստանի մրգերի եւ բանջարեղենի արտահանման շուկա լուրջ խթան է արտահանման քանակների ավելացման համար: Միեւնույն ժամանակ «Սպայկայի» մեծ ներդրումները եւ տեխնիկական զինվածության բարձր մակարդակը հազիվ թե խանգարեն 1-ին խմբի արտահանողների գործունեությանը: Հաշվի առնելով 1-ին խմբի արտահանողների եւ «Սպայկայի» գործունեության բնույթը, նրանց շահերը հատվում են միայն մրգերի եւ բանջարեղենի մթերման հարցում: Այստեղ միակ խնդիրը, որ մտահոգության տեղիք է տալիս, դա «Սպայկայի» շրջանառու միջոցների մեծ ծավալն է: Կարծիք կա, որ այն կարող է օգտագործվել կանխավճարների եւ ապրանքների մթերման գների արհեստական թանկացման միջոցով 1-ին խմբի արտահանողներին հումքի բազայից «զրկելու» եւ շուկայից դուրս մղելու նպատակներով: Սակայն պետք է հաշվի առնել, որ «Սպայկան» իր ներդրումային ծրագիրը հիմնականում իրականացրել է վարկային միջոցների հաշվին եւ սպասարկում է ոչ փոքր տոկոսներ: Բացի այդ, 2010թ.-ին ընկերությունը չի կարողացել ապահովել շրջանառության այն ծավալները, որոնք պլանավորվել էին եւ, հետեւաբար, զրկվել է իր հնարավոր շահույթների մի մասից: Ավելին, ընկերությունը 2010թ.-ի սկզբին ֆերմերներին իրականացրել է ապրանքի կանխավճարներ, սակայն ֆորս-մաժորային հանգամանքների (բերքի սակավության) պատճառով հնարավոր չի եղել դրանց համարժեք ապրանք մթերել. այդ գումարները մնացել են ֆերմերների մոտ, իսկ «Սպայկան» դրանք ետ չի պահանջել: Հետեւաբար՝ նոր ֆինանսական ռիսկեր ստանձնելու «Սպայկայի» հնարավորությունները շատ մեծ չեն թվում: Այս գիտակցությամբ էլ 1-ին խմբի արտահանողները առայժմ իրենց հանգիստ են զգում:

**Արտահանողների 3-րդ խմբին կարելի է անվանել «կեղծ արտահանողներ»**: Դրանք իրականում մաքսային ձեւակերպմամբ եւ բեռնափոխադրումների կազմակերպմամբ զբաղված գրասենյակներ են եւ արտահանման բուն պրոցեսին առնչվում են միայն այդքանով: Ուստի նրանց գործունեությունը մրգերի եւ բանջարեղենի արտահանման բնագավառում խիստ տեխնիկական է: Ստորեւ ներկայացված է նրանց ցանկը.

| | **ԽՈՒՄԲ 3** |
|---|---|
| 1. «Սոլիդարմ» ՍՊԸ | 2. «Արամ Գեւորգյան» Ա/Ձ |
| 3. «Արմեն Ավետիսյան» Ա/Ձ | 4. «Տաքսի Նանավալս» ՍՊԸ |
| 5. «Սոֆիա Խուրշուդյան» Ա/Ձ | 6. «ՄադարՄար» ՍՊԸ |
| 7. «Գոհար Վլասյան» Ա/Ձ | 8. «Կառլեն-գործընկեր» ՍՊԸ |
| 9. «Ահարոն Խլղաթյան» Ա/Ձ | 10. «Վարդգես Գրիգորյան» Ա/Ձ |

Եթե երբեւէ Մաքսային ծառայությունը հրապարակի մրգերի եւ բանջարեղենի հայկական արտահանողների ցանկը, ապա այնտեղ տեղ կգտնեն միայն այս ընկերությունները (ինչպես նաեւ արտահանողների 2-րդ խումբը): Սակայն դա չի բնութագրում իրերի իրական վիճակը: Այս ընկերությունները բոլորով միասին սպասարկում են 1-ին խմբի արտահանողներին եւ վերջիններիս լեքսիկոնում կոչվում են «օֆիսներ» կամ «կանտորաներ»: 1-ին խմբի արտահանողներն իրենց ապրանքի տարբեր խմբաքանակները կարող են ձեւակերպել տարբեր «օֆիսներով»՝ կախված նրանից, թե ով ավելի ձեռնտու պայմաններ կարող է առաջարկել (ձեւակերպման կամ բեռնափոխադրման էժան ծախսեր): Այսքանով 3-րդ խմբի արտահանողների կարեւորությունն ավարտվում է:

! Ծանոթանալով 2-րդ եւ 3-րդ խմբի արտահանողների գործունեության բնույթին, մենք եկել ենք այն եզրահանգմանը, որ **հենց նրանք են հանդիսանում Ազատ**

**Տնտեսական Գոտու (ԱՏԳ) ծառայությունների պոտենցիալ սպառողները**: Մրգերի եւ բանջարեղենի արտահանման գործընթացում հարկերն առաջանում են միայն այս սուբյեկտների հաշվապահության մեջ: Ուստի հարկային արտոնությունների ռեժիմից օգտվելու համար հենց նրանք շահագրգռվածություն կունենան իրենց գործունեությունը տեղափոխել ԱՏԳ-ի տարածք: Սակայն մենք չենք կարծում, որ ԱՏԳ-ն ստեղծվում է «կեղծ արտահանողների» շահերը պաշտպանելու համար: Այն ավելի շուտ պետք է գրավի 2-րդ խմբի արտահանողներին, իսկ ավելի հստակ՝ «Սպայկայի» նման ընկերություններին: Սակայն այստեղ իրավիճակը այնքան էլ միանշանակ չէ: «Սպայկան» իր ներկայիս սառնարանային, փաթեթավորման եւ տեսակավորման հզորություններով կլինի ավելի մեծ, քան ԱՏԳ-ի ենթակառուցվածքները[24]: Հարցեր են ծագում. *ինչպե՞ս է «Սպայկան» «տեղավորվելու» ԱՏԳ-ում, հնարավո՞ր է արդյոք, որ այդ ընկերությունը գրանցված լինի ԱՏԳ-ում, սակայն օգտագործի ոչ թե ԱՏԳ-ի, այլ ուրիշ վայրում գտնվող իր հզորությունները*: Այս խնդիրները պետք է լինեն ԱՏԳ-ի ստեղծման պատասխանատուների ուշադրության կենտրոնում:

Միակ ապրանքը, որի արտահանման բնագավառում գործում են այլ արտահանողներ՝ կարտոֆիլն է: Վերջին 3 տարիներին այս դաշտում ներկայացված են պարենի եւ սերմացուի կարտոֆիլի արտադրության այնպիսի ճանաչված ընկերություններ, ինչպիսիք են.

- «Մուլտի-Ագրո» ՍՊԸ (Կոտայքի մարզ, գ. Առինջ)
- «Սերմնաբույծ» ՍՊԸ-ն (Լոռիի մարզ, գ. Վարդաբլուր)
- «Բենիկ Աբգարյան» Ա/Ձ (Կոտայքի մարզ, ք. Հրազդան)
- «Ագրոսերվիզ Վ եւ Մ» ՍՊԸ (Շիրակի մարզ, գ. Բենիամին)
- «Գագարին ՍՍ» սպառողական կոոպերատիվ (Գեղարքունիքի մարզ, ք. Գագարին)
- «Ասադ» ՍՊԸ:

**Նկար 29 - Կարտոֆիլի արտահանման բաշխվածքն ըստ արտահանողների, 2010թ.**




2010թ.-ին կարտոֆիլի արտահանումներ են իրականացրել 4 սուբյեկտներ, որոնց մասնաբաժինները ներկայացված են Նկար 29-ում:

[24] Այս ենթադրությունը կառուցված է Ազատ Տնտեսական Գոտու ստեղծման պատասխանատուների եւ ներդրումներ իրականացնողների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա

# 4 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ

## 4.1 ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՔԱՆԱԿՆԵՐԸ

Հայաստանի մրգերի եւ բանջարեղենի արտաքին առեւտրի հաշվեկշիռը (արտահանում vs ներմուծում) բացասական է. Հայաստանը ավելի շատ ներմուծում է, քան արտահանում: 2 դեպքում էլ ներմուծումը զգալիորեն գերազանցում է արտահանմանը: Առանձին վերցրած մրգերի եւ բանջարեղենի արտաքին առեւտուրներն ունեն խիստ տարբեր առանձնահատկություններ, որոնք ներկայացված են ստորեւ:

### 4.1.1 Մրգերի ներմուծման քանակները

Նկար 30 - Հայաստանի մրգերի արտաքին առեւտրի հաշվեկշիռը 2006-2009թթ.




2006-2009թթ.-ի արդյունքներով, Հայաստանի մրգերի արտաքին առեւտրի հաշվեկշիռը եղել է բացասական՝ կազմելով քանակների մեջ 14 հազ. տոննա (տես Նկար 30), իսկ արժեքների մեջ՝ 21 մլն ԱՄՆ դոլար (ըստ մաքսային արժեքների տարբերության): Այս ցուցանիշները, սակայն, իրական պատկերացում չեն տալիս իրավիճակի մասին: Իսկ իրականությունն այն է, որ **Հայաստանը ներմուծում է այնպիսի մրգեր, որոնք չեն աճում այստեղ**: Այսինքն ներմուծվող մրգերը գալիս են լրացնելու սպառվող մրգերի տեսականին: 2006-2009թթ.-ի արդյունքներով Հայաստան է ներմուծվել միջին հաշվով տարեկան 21 հազ. տոննա միրգ, որի միայն 6%-ն են կազմել Հայաստանում աճող մրգերը (տես Նկար 31).

Նկար 31 - Հայաստանի մրգերի ներմուծման ծավալները 2006-2009թթ.




Աղբյուր՝ «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009

Այն մրգերը, որոնք **Հայաստանը ներմուծում է խոշոր քանակներով**, դրանք **տեղում չաճող տեսակներ** են՝ բանանը, ցիտրուսային (նարինջ, մանդարին, կիտրոն), մերձարեւադարձային եւ արեւադարձային (արմավ, անանաս, ավոկադո, գուայավա, մանգո, կիվի) պտուղները (տես Նկար 32): Շատ փոքր քանակներով ներմուծվում է նաեւ կոկոսենու ընկույզներ:

**Նկար 32 - Հայաստանում չաճող մրգերի ներմուծման ծավալներն ըստ տեսակների 2006-2009թթ.**




Աղբյուր՝ «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009

Նշված մրգերի ներմուծման առումով որեւէ արտառոց իրավիճակ չկա. Հայաստանը նման է իր գոտիականությունում եւ ավելի հյուսիս գտնվող երկրներին (Եվրոպական երկրներ, Ռուսաստան), որոնք բոլորն էլ իրականացնում են արեւադարձային եւ ցիտրուսային պտուղների խոշոր ներկրումներ: Նշված մրգերը շարունակելու են ներմուծվել Հայաստան՝ անկախ մեր երկրում մրգերի արտադրության քանակներից եւ դրանց փոփոխությունների միտումներից:

Մրգերի ներմուծման տեսականու վերլուծությունը ցույց է տալիս, որ **Հայաստանը ներմուծում է տեղում աճող այն մրգերը, որոնց արտադրությունը բավականին փոքր է**: Խոսքը գնում է սերկեւիլի, ընկուզապտուղների (հունական ընկույզ, պնդուկ, նուշ), հատապտուղների (ելակ, գետնամորի) եւ նռան մասին: Այս ապրանքները գալիս են ապահովելու տեղական արտադրությամբ չբավարարվող պահանջարկը: Իսկ այն մրգերը, որոնք Հայաստանում ունեն արտադրության մեծ քանակներ (կամ համեմատաբար մեծ քանակներ՝ ի տարբերություն ընկուզապտուղների եւ հատապտուղների), վայելում են մեծ եւ կայուն պահանջարկ եւ որոնք թիրախվել են որպես սույն հետազոտության ուսումնասիրության օբյեկտներ, տեղական շուկայում ունեն խիստ դոմինանտ դիրքեր, ինչի պատճառով դրանց ներմուծման քանակները շատ փոքր են: Ստորեւ ներկայացված են Հայաստանում աճող եւ միեւնույն ժամանակ ներմուծվող մրգերի ներմուծման ցուցանիշները.

**Աղյուսակ 21 - Հայաստանում աճող մրգերի ներմուծման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ.**

| Մրգեր | Ցուցանիշ | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 I-X |
|---|---|---|---|---|---|---|
| Խաղող | Քանակ, տոննա | 32.7 | 10.0 | 1.9 | 26.1 | 4.8 |
| | Արժեք, $ | 55,383.0 | 11,001.0 | 5,901.0 | 23,336.0 | 1,700.0 |
| Ծիրան | Քանակ, տոննա | - | 0.9 | 0.6 | 0.1 | 0.4 |
| | Արժեք, $ | - | 694.0 | 1,792.0 | 152.0 | 400.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Դեղձ | Քանակ, տոննա | - | 10.2 | 18.0 | - | 194.2 |
| | Արժեք, $ | - | 5,682.0 | 10,800.0 | - | 384,500.0 |
| Սալոր | Քանակ, տոննա | - | 4.5 | 3.8 | 1.2 | 20.8 |
| | Արժեք, $ | - | 3,391.0 | 11,360.0 | 4,452.0 | 31.7 |
| Կեռաս | Քանակ, տոննա | - | 0.1 | - | - | 0.6 |
| | Արժեք, $ | - | 115.0 | - | - | 600.0 |
| Խնձոր | Քանակ, տոննա | 37.0 | 169.9 | 83.5 | 148.6 | 192.3 |
| | Արժեք, $ | 19,938.0 | 158,047.0 | 152,070.0 | 199,381.0 | 194,600.0 |
| Տանձ | Քանակ, տոննա | 3.3 | 27.3 | 49.1 | 81.3 | 54.9 |
| | Արժեք, $ | 1,868.0 | 26,868.0 | 93,895.0 | 112,336.0 | 44,100.0 |
| **Ենթա-ընդամենը 1 (թիրախված մրգերի մասով)** | **Քանակ, տոննա** | **73.0** | **222.9** | **156.9** | **257.3** | **468.0** |
| | **Արժեք, $** | **77,189.0** | **205,798.0** | **275,818.0** | **339,657.0** | **625,931.7** |
| Սերկեւիլ | Քանակ, տոննա | 0.5 | 77.8 | 0.8 | 41.3 | n/a |
| | Արժեք, $ | 296.0 | 11,663.0 | 1,500.0 | 72,219.0 | n/a |
| Ընկուզապտուղներ | Քանակ, տոննա | 662.2 | 794.0 | 743.8 | 361.8 | n/a |
| | Արժեք, $ | 1,807,857.0 | 2,151,361.0 | 3,086,484.0 | 2,153,715.0 | n/a |
| Հատապտուղներ, նուռ | Քանակ, տոննա | 710.3 | 550.0 | 291.1 | 468.3 | n/a |
| | Արժեք, $ | 709,206.0 | 1,084,753.0 | 549,461.0 | 943,970.0 | n/a |
| **Ենթա-ընդամենը 2 (Հայաստանում աճող այլ մրգերի մասով)** | **Քանակ, տոննա** | **1,373.0** | **1,421.8** | **1,035.7** | **871.4** | **n/a** |
| | **Արժեք, $** | **2,517,359.0** | **3,247,777.0** | **3,637,445.0** | **3,169,904.0** | **n/a** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **Քանակ, տոննա** | **1,446.0** | **1,644.7** | **1,192.6** | **1,128.7** | **468.0** |
| | **Արժեք, $** | **2,594,548.0** | **3,453,575.0** | **3,913,263.0** | **3,509,561.0** | **625,931.7** |

Աղբյուրներ՝
1. «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009
2. Մաքսային ծառայություն (2010թ.-ի համար)

Սույն հետազոտության կողմից թիրախված ապրանքների ներմուծումն իրականացվում է հետեւյալ 3 նախադրյալների առկայության պատճառով.

1) Մինչեւ տեղական մրգերի հասունանալը եւ բերքահավաքի սեզոնի սկիզբը, օգտվելով շուկայում սպառողների մոտ կուտակված սպասումների առկայությունից, որոշ գործարարներ Հայաստան են ներկրում տեղում աճող մրգեր՝ խաղող (հիմնականում՝ հուլիս-օգոստոսին), ծիրան (մայիսին), դեղձ (հունիս-հուլիսին), սալոր (հունիսին): Դրանք ներմուծվում են այնպիսի երկրներից, որտեղ Հայաստանում աճող մրգերը հասունանում են մոտ 1 ամիս ավելի վաղ, մասնավորապես Ուզբեկստանից, Իրանից: Այս նախադրյալը միշտ էլ լինելու է եւ ամեն տարի Հայաստանում կարձանագրվի մրգերի «նախաբերքահավաքային» ներմուծում: Սակայն մի բան հստակ է. **մրգերի այդ խմբաքանակները Հայաստան են ներմուծվում թանկ գնով եւ մինչեւ 1 ամսում իրացնելու նկատառումով, ուստի դրանց քանակները միշտ էլ լինելու են շատ փոքր**:
2) **Տեղում աճող մրգերը Հայաստան են ներմուծվում շուկայական դեֆիցիտի առաջացման պատճառով**: Այն տարիներին, երբ այս կամ այն մրգատեսակի արտադրությունը ինչ-ինչ պատճառներով փոքր է ստացվել, արձանագրվում են դրանց ներմուծման առավել մեծ քանակներ: Մասնավորապես այդ նախադրյալով է պայմանավորված 2010թ.-ին դեղձի եւ խնձորի ներմուծման համեմատաբար մեծ քանակները: Պետք է սակայն նշել, որ որոշ մրգատեսակներ, ինչպիսիք են խաղողը եւ ծիրանը, որոնք բավականին զգայուն են հեռու տարածությունների տրանսպորտային բեռնափոխադրումների նկատմամբ, անգամ բերքի ամենավատ տարիներին ներմուծվում են չնչին քանակներով: Դա չի կարելի ասել դեղձի, խնձորի եւ տանձի դեպքում:

3) Որոշ մրգեր Հայաստան են ներմուծվում առեւտրային տաղավարներին հարուստ տեսականի ապահովելու շարժառիթով: Դա վերաբերվում է հիմնականում դեղձին, խնձորին, տանձին: Այս ներմուծումների նախաձեռնողներն են Հայաստանի խոշոր առեւտրային ցանցերը՝ ՍԱՍ-ը, Երեւան-Սիթին, Սթարը, Ֆրեշը: Այս նախադրյալն էլ, սակայն, բավարար պատճառ չէ խոշորածավալ ներմուծումների համար: Այս հարցում իրենց դերն են խաղում նաեւ հայ սպառողների նախասիրությունները, որոնք հիմնականում տեղական արտադրության մրգերի օգտին են:

### 4.1.2 Բանջարեղենի ներմուծման քանակները

Հայաստանի բանջարեղենի արտաքին առեւտրի հաշվեկշռի հարցում պատկերը երկակի է: Եթե արտահանման դեպքում հիմք ընդունվի ԱՎԾ-ի տվյալները, ապա առեւտրի հաշվեկշիռը շատ մեծ բացասական ցուցանիշ է, իսկ եթե հիմք ընդունվի Բուսասանիտարիայի պետական տեսչության տվյալները, ապա 2008թ.-ից հետո այն արդեն դրական է:

Ի տարբերություն մրգերի, բանջարեղենի դեպքում Հայաստանը հիմնականում ներմուծում է այն, ինչը որ նաեւ տեղում է արտադրվում: 2006-2009թթ. բանջարեղենի ներմուծման ցուցանիշները հետեւյալն են.

**Նկար 33 - Հայաստանի բանջարեղենի արտաքին առեւտրի հաշվեկշիռը 2006-2009թթ.***




* - Արտահանման դեպքում համեմատության համար հիմք են ընդունվել Բուսասանիտարիայի պետական տեսչության թվերը

**Նկար 34 - Հայաստանի բանջարեղենի ներմուծման ծավալները 2006-2009թթ.**




Աղբյուր՝ «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009

Ի տարբերություն մրգերի դեպքի, որտեղ Հայաստանը հիմնականում ներմուծում է տեղում չաճող տեսակներ, բանջարեղենի դեպքում ներմուծվող տեսականին ամբողջությամբ արտադրվում է նաեւ տեղում: Ինչու՞մ է կայանում խնդիրը: Հասկանալու համար նախ պետք է ծանոթանալ Հայաստան ներմուծվող բանջարեղենի տեսականուն.

**Աղյուսակ 22 - Հայաստանում աճող բանջարեղենի ներմուծման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ.**

| Բանջարեղեն | Ցուցանիշ | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2010 I-X |
|---|---|---|---|---|---|---|
| Կարտոֆիլ պարենի | Քանակ, տոննա | 74 | 2,226 | 146 | - | 717 |
| | Արժեք, $ | 16,783 | 359,033 | 49,060 | - | 111,300 |
| Լոլիկ | Քանակ, տոննա | 510 | 175 | 94 | 138 | 180 |
| | Արժեք, $ | 536,846 | 298,398 | 278,907 | 344,787 | 332,000 |
| Վարունգ | Քանակ, տոննա | 163 | 377 | 161 | 129 | - |
| | Արժեք, $ | 164,826 | 843,896 | 508,446 | 332,237 | - |
| Կաղամբ | Քանակ, տոննա | - | - | 21 | 208 | - |
| | Արժեք, $ | - | - | 4,984 | 42,857 | - |
| Պղպեղ | Քանակ, տոննա | 17 | 23 | 25 | 15 | 44 |
| | Արժեք, $ | 16,676 | 48,553 | 79,924 | 49,152 | 73,200 |
| Սմբուկ | Քանակ, տոննա | 16 | 22 | 20 | 7 | 125 |
| | Արժեք, $ | 17,990 | 36,178 | 50,557 | 13,443 | 127,200 |
| Գլուխ սոխ | Քանակ, տոննա | 5,353 | 6,403 | 4,555 | 5,339 | 8,258 |
| | Արժեք, $ | 1,193,611 | 1,992,099 | 2,413,939 | 2,476,412 | 2,264,600 |
| **Ենթա-ընդամենը 1 (թիրախված բանջարեղենի մասով)** | **Քանակ, տոննա** | **6,133** | **9,226** | **5,022** | **5,836** | **9,323** |
| | **Արժեք, $** | **1,946,732** | **3,578,157** | **3,385,817** | **3,258,888** | **2,908,300** |
| Կարտոֆիլի տնկանյութ | Քանակ, տոննա | 1,631 | 3,577 | 4,122 | 801 | n/a |
| | Արժեք, $ | 1,326,597 | 3,269,529 | 4,593,226 | 744,347 | n/a |
| Սխտոր | Քանակ, տոննա | 84 | 152 | 327 | 107 | 130 |
| | Արժեք, $ | 53,425 | 164,757 | 438,549 | 114,545 | 154,100 |
| Գազար | Քանակ, տոննա | 0 | 0 | 3 | 28 | n/a |
| | Արժեք, $ | 0 | 0 | 1,325 | 13,803 | n/a |
| **Ենթա-ընդամենը 2 (Հայաստանում աճող այլ բանջարեղենի մասով)** | **Քանակ, տոննա** | **1,715** | **3,729** | **4,452** | **936** | **n/a** |
| | **Արժեք, $** | **1,380,022** | **3,434,286** | **5,033,100** | **872,695** | **n/a** |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **Քանակ, տոննա** | **7,848** | **12,954** | **9,474** | **6,772** | **9,452** |
| | **Արժեք, $** | **3,326,754** | **7,012,443** | **8,418,917** | **4,131,583** | **3,062,400** |

Աղբյուրներ՝
1. «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱԿԾ, 2006-2009
2. Մաքսային ծառայություն (2010թ.-ի համար)

Ներկայացված տվյալներից ակնհայտ երեւում է, որ բանջարեղենի **ներմուծման գերակշիռ մասը բաժին է ընկնում գլուխ սոխին եւ կարտոֆիլին՝ ի դեմս տնկանյութի**: Գլուխ սոխի ներմուծման խոշոր քանակները պայմանավորված են 2 հանգամանքներով: Ըստ փորձագետների գնահատականների, դա առաջին հերթին պայմանավորված է *տեղական արտադրության հաշվին գլուխ սոխի պահանջարկի չբավարարմամբ եւ առաջարկի կտրուկ տատանումներով:* Մենք արդեն նշել ենք, որ բանջարեղենի դեպքում (քանի որ դրանք միամյա բույսեր են) ֆերմերները կարողանում են շատ արագ փոփոխել իրենց արտադրանքի տեսականին: Եթե ինչ-որ տարում արտադրանքի քիչ քանակների պատճառով սոխի գները բարձր են, դրա հաջորդ տարում ֆերմերները սկսում են զանգվածաբար աճեցնել սոխ: Դրա հետեւանքը, որպես կանոն,

լինում է գերարտադրությունը եւ գների անկումը: Դրա հաջորդ տարում էլ նույն ֆերմերների մի զգալի մասը հրաժարվում է սոխի աճեցումից, ինչն էլ պատճառ է դառնում արտադրանքի քանակների նվազման եւ գների թանկացման: Երկար տարիներ է, որ այս ցիկլը կանոնավոր կերպով կրկնվում է եւ պատճառ է դառնում առաջարկի անկայունության (այս երեւույթը առկա է նաեւ լոլիկի, պղպեղի, սմբուկի դեպքում): Արդյունքում հաճախ է ստացվում, որ շուկայում առաջանում գլուխ սոխի անբավարարություն, ինչն էլ առաջացնում է դրա ներմուծման անհրաժեշտություն: Սոխի ներմուծման մեկ այլ բացատրություն են ներկայացնում առեւտրի ցանցերի գնումների պատասխանատուները: Ըստ վերջիններիս, Հայաստան ներմուծվող գլուխ սոխը բերվում է Թուրքիայից եւ այն քաղցրահամ է՝ ի տարբերություն տեղական սորտերի (որոնք ազոտական պարարտանյութերով մշակության արդյունքում ստացվում են հիմնականում կծու): Դրանց թերությունն այն է, որ դրանք բարակ կեղեւով են եւ դժվար է երկար պահպանել, սակայն շատ հարմար է մեծ քանակներով օգտագործման համար (հասարակական սննդի վայրերի խոհանոցներում): Բացի դա, քաղցրահամ գլուխ սոխն էլ ունի իր սպառողների առանձին բանակը:

Ինչ վերաբերվում է կարտոֆիլի տնկանյութին, ապա երկար տարիներ է, ինչ Հայաստանն ամեն տարի իրականացնում է *բարձր վերարտադրության կարտոֆիլի սերմացուի* ներմուծում: Սերմացուն ներմուծվում է Նիդեռլանդներից, Ֆրանսիայից, Գերմանիայից: Դրա քանակը առանձին տարիների տատանվում է 1,000-4,000 տոննայի սահմաններում: Այդ սերմացուն բաշխվում է սերմարտադրող տնտեսությունների միջեւ, որոնք արդեն հաջորդ տարի ստանում են առաջին վերարտադրության բարձր բերքատու սերմացու (մոտ 100-120 հազ. տոննա), ինչն էլ ուղղվում է կարտոֆիլի մշակությամբ զբաղված տնտեսությունների սերմացուի պահանջարկի բավարարմանը:

Բանջարեղենի մյուս տեսակների ներմուծման քանակների եւ կառուցվածքի հարցում իրավիճակը շատ նման է մրգերի դեպքին: Դրանք ներմուծվում են հիմնականում սեզոնային դեֆիցիտի ծածկման նպատակով եւ ոչ մեծ քանակներով:

# 5 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՍՊԱՌՈՒՄԸ

## 5.1 ՄՐԳԵՐԻ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՈՒՄ

### 5.1.1 Իրացման (սպառման) կառուցվածքը

Նախորդ երկու գլուխներում անդրադարձ կատարվեց մրգերի եւ բանջարեղենի արտահանման եւ ներմուծման քանակներին: Արտադրանքի առաջարկի ձեւավորման եւ բաշխման համակարգում դրանք շատ կարեւոր օղակներ են: Սակայն մրգերի եւ բանջարեղենի արտադրության քանակներից արտահանումը հանելուց եւ ներմուծումը գումարելուց հետո մենք, միեւնույն է, չենք ստանա այն մնացորդը, որը սպառվում է բնակչության կողմից: Արտադրանքի բաշխման համակարգում կան եւս մի քանի օղակներ, որոնք պետք է անպայմանորեն հաշվի առնվեն: Դրանք են **արտադրող տնտեսությունների ներքին սպառումը** եւ **վերամշակողների մթերումները:** Որպեսզի հասկանանք արտադրանքի բաշխման համակարգի կառուցվածքը, պետք է պատկերացնենք, թե ինչ հերթականությամբ եւ տրամաբանությամբ են մրգերի եւ բանջարեղենի արտադրության քանակները բաշխվում տարբեր օղակների միջեւ: Մրգերի եւ բանջարեղենի իրացման (սպառման) կառուցվածքը ներկայացված է Նկար 35-ում: Այն ցույց է տալիս, որ ցանկացած ապրանքի շուկայում առաջարկը ձեւավորվում է արտադրության եւ ներմուծման հանրագումարից: Այն իր հետագա բաշխման տարբեր փուլերում կիսվում է 4 մասերի՝ «բաժին հասնելով» արտադրող տնտեսություններին, արտահանողներին, վերամշակողներին եւ մնացած բնակչությանը (ամբողջից հանած արտադրող տնտեսություններին): Սույն հաշվետվության մեջ մինչեւ այս պահը ներկայացվել է առաջարկի ձեւավորման երկու բաղադրիչները՝ արտադրության եւ ներմուծման քանակները, ինչպես նաեւ արտադրանքի բաշխման 4 օղակներից մեկը՝ արտահանումը: Բնակչության սպառումը ստանալու համար պետք է տեսնենք, թե արտադրանքի ո՞ր մասն է սպառվում արտադրող տնտեսություններում եւ վերամշակող ձեռնարկությունների կողմից:

**Նկար 35 - Մրգերի եւ բանջարեղենի իրացման / սպառման կառուցվածքը Հայաստանում**




### 5.1.2 Արտադրող տնտեսությունների ներքին սպառումը

1990-ական թթ.-ի սկզբին, երբ պետական սեփականության մասնավորեցման արդյունքում սեփականաշնորհվեցին նաեւ գյուղատնտեսական ակտիվները, Հայաստանում առաջացան տասնյակ հազարավոր **մանր գյուղացիական տնտեսություններ**: Այսօր շուրջ 338 հազ. հաշվող

այդպիսի տնտեսություններում թողարկվում է Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի 97-98%-ը: Գյուղատնտեսական ակտիվների սեփականաշնորհումը մեծապես օգնեց, որպեսզի մեղմվեն անկախության առաջին տարիների պարենային ճգնաժամի հետեւանքները, սակայն ակտիվների մասնատումը նաեւ խիստ բացասաբար է անդրադարձել գյուղատնտեսության վարման արդյունավետության վրա: Փոքր եւ մասնատված հողակտորների վրա խիստ դժվար է կազմակերպել արդյունավետ տնտեսություն: Արդյունքում հազարավոր գյուղացիական տնտեսություններ հնարավորություն չունեն մասշտաբի էֆեկտի կամ արդյունավետության բարձրացման հաշվին ապահովել սեփական բարեկեցության նվազագույն պայմաններ: Դրա վկայությունն է Հայաստանի գյուղացիական բնակչության շրջանում աղքատության մակարդակի ավելի բարձր ցուցանիշը: Աղքատ գյուղացիական տնտեսությունները, որպես կանոն, հիմնականում **սպառող տնտեսություններ** են, այսինքն իրենց արտադրանքի մեծ մասն ուղղում են սեփական կարիքների բավարարմանը: Նման տնտեսություններում նաեւ խախտված է սպառվող սննդամթերքի կառուցվածքը. սեփական արտադրանքը նրանք գերսպառում են, իսկ շատ մթերքներ, որ իրենք չեն արտադրում՝ թերսպառում են: Այս կարեւոր հանգամանքները մեծապես ազդում են ապրանքների իրական առաջարկի ձեւավորման վրա: Ուստի դրանք հաշվի առնելով՝ մենք կանդրադառնանք գյուղացիական տնտեսությունների արտադրանքի ապրանքայնության ցուցանիշին:

Կազմակերպելով բնամթերային արտադրություն, գյուղացիական տնտեսությունները մի շարք սննդամթերքի գծով իրենք են դառնում իրենց իսկ ապահովողը: Մասնավորապես մրգերի եւ բանջարեղենի արտադրության մեջ զբաղված ֆերմերներն իրենց բերքից առանձնացնում են այն քանակությունը, որն անհրաժեշտ է որոշակի ժամանակահատվածում (կախված է մթերքների պահպանման ժամկետներից) իրենց տնտեսության կարիքները բավարարելու համար: Նոր միայն դրանից զատ մնացած ապրանքը նախատեսված է շուկայում իրացման համար (վաճառք արտահանողներին, վերամշակողներին կամ բնակչությանը): *Գյուղացիական տնտեսությունների ընդհանուր արտադրանքի մեջ այն մասը, որը արտադրողներն իրացնում են շուկայում, բնութագրում է արտադրող տնտեսությունների* ***ապրանքայնության մակարդակը***: Հետեւաբար, արտադրանքի որքան մեծ մասն իրացնեն արտադրողները, այնքան բարձր կլինի ապրանքայնության մակարդակը: Սույն հետազոտության ընթացքում թիրախված **մրգերի ապրանքայնության ցուցանիշներն** ըստ մարզերի ներկայացված են ստորեւ.

**Աղյուսակ 23 - Մրգերի ապրանքայնության մակարդակը Հայաստանում 2006-2009թթ.**

| Մարզեր | ԽԱՂՈՂ | | | | ԱՅԼ ՄՐԳԵՐ* | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
| Արագածոտն | 69.5% | 66.6% | 76.3% | 92.7% | 56.7% | 32.7% | 23.2% | 44.0% |
| Արարատ | 91.7% | 89.3% | 83.6% | 79.9% | 84.8% | 79.9% | 85.3% | 83.9% |
| Արմավիր | 91.7% | 92.6% | 91.5% | 91.6% | 83.4% | 90.8% | 82.2% | 91.1% |
| Գեղարքունիք | - | - | - | - | 51.0% | 33.3% | 13.2% | 10.5% |
| Լոռի | 0.0% | 0.0% | 3.9% | 39.7% | 23.4% | 19.7% | 19.4% | 8.1% |
| Կոտայք | 51.9% | 51.9% | 21.3% | 81.2% | 58.4% | 78.8% | 52.7% | 36.3% |
| Շիրակ | - | - | - | - | 38.5% | 18.7% | 21.2% | 13.8% |
| Սյունիք | 32.3% | 28.8% | 10.3% | 51.6% | 55.1% | 54.3% | 49.0% | 46.4% |
| Վայոց Ձոր | 62.9% | 87.4% | 86.6% | 87.8% | 34.7% | 25.3% | 49.5% | 47.4% |
| Տավուշ | 65.7% | 58.0% | 49.5% | 58.4% | 36.9% | 14.6% | 19.0% | 39.4% |
| **ՀԱՅԱՍՏԱՆ (կշռվ. միջին)** | **85.9%** | **85.3%** | **83.7%** | **83.9%** | **63.2%** | **48.7%** | **53.1%** | **58.0%** |

* - Ծիրան, դեղձ, սալոր, կեռաս, խնձոր, տանձ

Աղբյուր՝ «Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից», ԱՎԾ, 2006-2009

Ներկայացված տվյալներն ունեն հետեւյալ բացատրությունները եւ թույլ են տալիս կատարել հետեւյալ եզրահանգումները.

1. Մրգերի կազմում **ապրանքայնության ամենաբարձր ցուցանիշն ունի խաղողը**: Այդ ցուցանիշով խաղողն առաջատար դիրքեր ունի ընդհանրապես բուսաբուծության բոլոր ապրանքների շարքում (զիջում է միայն բոստանային մշակաբույսերին): Խաղողի ապրանքայնության բարձր ցուցանիշը պայմանավորված է նրանով, որ ամբողջ արտադրանքի 70%-ը կազմում են տեխնիկական սորտերը, որոնց նկատմամբ վերամշակողների կողմից ներկայացվում է գրեթե համարժեք պահանջարկ: Դրան գումարվում է նաեւ տեղական շուկայում իրացվող եւ արտահանողների կողմից մթերված սեղանի սորտերի խաղողի քանակությունը, որի արդյունքում խաղողի ապրանքայնությունը կազմում է ավելի քան 83%: Արտադրող տնտեսություններում օգտագործվող 15-17%-ը բաղկացած է մասամբ՝
   - տեխնիկական սորտերից, որոնք վերամշակվում են նույն արտադրողներից կողմից; տնայնագործ պայմաններում խաղողի վերամշակումը գինու եւ օղու արտադրության նպատակով հատկապես տարածված է Տավուշի, Վայոց Ձորի եւ Արարատի մարզերում;
   - սեղանի սորտերից, որոնք արտադրողներն օգտագործում են իրենց տնտեսությունների սպառման կարիքները բավարարելու համար:
2. Խաղողի ապրանքայնությունը հատկապես բարձր է այն մարզերում, որտեղ տեղակայված են վերամշակող ձեռնարկությունները կամ նրանց մթերման կետերը: Դրանք են Արմավիրի, Արարատի, Արագածոտնի եւ Վայոց Ձորի մարզերը: Այս մարզերի արտադրողներն իրենց արտադրած խաղողն իրացնելու հարցում ունեն ավելի մեծ հնարավորություններ: Բացառություն է կազմում թերեւս միայն Տավուշի մարզը, որտեղ աճող խաղողի 75%-ը տեխնիկական սորտեր են, սակայն ապրանքայնությունը կազմում է ընդամենը 58% (2009թ.):
3. Մյուս մրգերի ապրանքայնության մակարդակն ավելի ցածր է, քան խաղողինը: Պատճառն այն է, որ մյուս մրգերի դեպքում չկա «տեխնիկական/սեղանի» սորտերի տարանջատում եւ բնակչության շրջանում դրանց սպառման ծավալներն ավելի մեծ են, քան խաղողինը:
4. Մրգերի դեպքում ապրանքայնության բարձր ցուցանիշներով աչքի են ընկնում այն մարզերը, որտեղ գտնվում են մրգերի հիմնական այգետարածքները: Դրանք են Արմավիրի եւ Արարատի մարզերը: Այս մարզերում են գործունեություն ծավալում մրգերի արտադրությամբ զբաղված խոշոր ֆերմերները: Վերջիններիս համար մրգերի արտադրությունը գործունեության հիմնական ուղղություն է, նրանք դա դիտում են որպես իրենց մասնավոր բիզնեսը, հետեւաբար արտադրվող ապրանքներն են էլ (մրգերը) նախատեսված են գլխավորապես վաճառքի համար: Այլ կերպ ասած՝ **որքան մեծ են տնտեսությունները** (իրենց թողարկած արտադրանքով), **այնքան բարձր է նրանց ապրանքայնության մակարդակը**: Առաջիկա տարիներին նշված մարզերի շարքում կհայտնվի նաեւ Արագածոտնի մարզը:

Արտադրող տնտեսությունների կողմից մրգերի իրացումն իրականացվում է 3 եղանակով. ա) ուղղակի վաճառք, բ) ապրանքափոխանակություն, եւ գ) ծառայությունների դիմաց բնամթերքով վճարում: Խաղողի դեպքում իրացումը գրեթե 99%-ով իրականացվում է ուղղակի վաճառքի միջոցով: Մյուս մրգերի դեպքում եւս իրացումներում գերակշռում է ուղղակի վաճառքի եղանակը, սակայն 2009թ.-ին արտադրանքի 58% կազմող իրացման ծավալից 6.4%-ը կազմել են ապրանքափոխանակության գործարքները: Այդ պրակտիկան հատկապես տարածված է Վայոց Ձորի (36%), Սյունիքի (17%) եւ Արարատի (9%) մարզերում:

Սույն հետազոտության ընթացքում թիրախված **բանջարեղենի ապրանքայնության ցուցանիշներն** ըստ մարզերի ներկայացված են ստորեւ.

**Աղյուսակ 24 - Բանջարեղենի ապրանքայնության մակարդակը Հայաստանում 2006-2009թթ.**

| Մարզեր | ԿԱՐՏՈՖԻԼ | | | | ԱՅԼ ԲԱՆՋԱՐԵՂԵՆ* | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
| Արագածոտն | 45.1% | 45.9% | 37.0% | 29.5% | 73.1% | 72.0% | 49.8% | 45.4% |
| Արարատ | 71.6% | 77.1% | 73.4% | 79.3% | 82.3% | 82.7% | 78.2% | 73.8% |
| Արմավիր | 78.9% | 84.1% | 88.8% | 91.0% | 85.4% | 90.5% | 93.0% | 91.9% |
| Գեղարքունիք | 45.6% | 46.7% | 44.5% | 42.7% | 44.7% | 31.5% | 30.1% | 46.6% |
| Լոռի | 24.1% | 26.3% | 12.5% | 12.4% | 41.7% | 52.3% | 63.3% | 35.0% |
| Կոտայք | 54.6% | 52.4% | 52.6% | 38.0% | 75.4% | 71.9% | 70.4% | 43.2% |
| Շիրակ | 32.1% | 33.5% | 31.7% | 28.9% | 42.2% | 39.2% | 36.9% | 36.3% |
| Սյունիք | 32.0% | 37.9% | 35.3% | 27.8% | 52.5% | 52.4% | 42.9% | 33.5% |
| Վայոց Ձոր | 14.9% | 14.0% | 6.1% | 26.0% | 11.4% | 12.5% | 13.4% | 10.8% |
| Տավուշ | 11.9% | 14.7% | 12.5% | 10.7% | 18.8% | 18.8% | 15.3% | 16.3% |
| **ՀԱՅԱՍՏԱՆ (կշռվ. միջին)** | **43.0%** | **45.5%** | **42.3%** | **38.4%** | **74.8%** | **76.9%** | **75.0%** | **74.1%** |

* - Լոլիկ, վարունգ, կաղամբ, պղպեղ, սմբուկ, գլուխ սոխ
Աղբյուր՝ «Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից», ԱՎԾ, 2006-2009

Բանջարեղենի դեպքում եւս նկատելի է, որ արտադրության խոշոր կենտրոններ հանդիսացող մարզերում՝ Արմավիրում եւ Արարատում ապրանքայնության ցուցանիշները բարձր են: Բացի այն, որ այս մարզերի արտադրողներին օգնում է նրանց գործունեության համեմատաբար մեծ մասշտաբները (մշակության մեծ տարածքներ եւ մեծ քանակությամբ բերք), նրանք նաեւ շահում են բանջարեղենի իրացման հիմնական շուկային՝ Երեւանին մոտ գտնվելու պատճառով: Հենց այս երկու մարզերն են հանդիսանում Հայաստանում թարմ մրգի եւ բանջարեղենի խոշորագույն մանրամեծածախ շուկայի («Մալաթիա») հիմնական մատակարարները:

Աղյուսակ 24-ի տվյալներից ուշադրության են արժանի կարտոֆիլի ապրանքայնության ցուցանիշները: Այն, որ կարտոֆիլի արտադրության խոշորագույն ռեգիոնում՝ Գեղարքունիքի մարզում ապրանքայնությունը կազմում է 43-47%, կարող է հարցերի տեղիք տալ: Այս երեւույթն ունի 2 բացատրություն.

- Գեղարքունիքի մարզում, ինչպես եւ ամբողջ Հայաստանում, կարտոֆիլի բերքի մի մասն առանձնացվում է՝ հաջորդ տարվա ցանքսի համար որպես սերմացու օգտագործելու համար: Աղյուսակ 24-ի տվյալներում այդ քանակությունը ներառված է տնտեսությունների կողմից օգտագործված քանակների մեջ, հետեւաբար այդ չափով ապրանքայնությունը ցածր է ստացվում;
- Կարտոֆիլի ապրանքայնության ցածր մակարդակը պայմանավորված է նրա իրացման առանձնահատկություններով: Կարտոֆիլի իրացումը տեղի է ունենում նրա բերքահավաքին հաջորդող 5-6 ամիսների ընթացքում: Իրացման այդպիսի երկար ժամանակահատվածը ենթադրում է, որ բերքահավաքից (հոկտեմբերից) հետո մինչեւ կոնկրետ տարվա ավարտը իրացվում է կարտոֆիլի բերքի մի մասը: Արտադրողի պահեստներում մնացած բերքի մնացած մասն իրացվում է արդեն հաջորդ տարվա հունվար-մարտ ամիսներին: Այդ իսկ պատճառով կարտոֆիլագործների մեծ մասը տարին փակում է կարտոֆիլի բերքի զգալի մնացորդով: Հատկապես բերքառատ տարիներին այդ մնացորդն էլ ավելի մեծ է լինում: Օրինակ՝ 2009թ. արտադրված կարտոֆիլի բերքի 34%-ը այդ տարում չի իրացվել: Նշենք նաեւ, որ 2010թ.-ին արտահանված ավելի քան 3 հազ. տոննա կարտոֆիլն իրացվել է տարվա սկզբին՝ հենց 2009թ.-ի բերքի մնացորդից: Այս տրամաբանությամբ պետք է համարել, որ կարտոֆիլի ապրանքայնության մակարդակն իրականում ավելի բարձր է:

Վերը թվարկված պատճառներով արտադրող տնտեսություններում կարտոֆիլի ներքին սպառման ծավալները շատ դժվար է հաշվարկել: Ուստի Հայաստանի ամբողջ բնակչության շրջանում կարտոֆիլի սպառման ծավալները հաշվարկելու համար հիմք կընդունվի այլ մեթոդոլոգիա: Այն կառուցված է ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից պարենային զամբյուղի մշակման նպատակով կատարված հետազոտությունների տվյալների վրա: Ըստ այդմ, կարտոֆիլը, որպես շատ սպառվող սննդամթերք, տեղ է զբաղեցնում պարենային զամբյուղում, ընդ որում բնակչության մեկ շնչի կողմից կարտոֆիլի սպառման (օգտագործման) տարեկան նորման կազմում է 91.3 կգ (2010թ. II եռամսյակի տվյալներով): Հենց այս ցուցանիշի հիման վրա էլ հաշվարկվել է բնակչության կողմից կարտոֆիլի սպառման քանակները (տես հաջորդիվ **Բաժին 5.1.4, «Բնակչության սպառումը»**, էջ 92):

Այսպիսով, ամփոփելով մրգերի եւ բանջարեղենի ապրանքայնության ցուցանիշները, կարելի է հաշվել արտադրանքի այն քանակությունը, որը սպառվում է արտադրող տնտեսությունների ներսում: Հաշվարկման բանաձեւը հետեւյալն է.

**Արտադրող տնտեսությունների ներքին սպառման քանակ (տոննա) = Արտադրանքի քանակ (տոննա) x ( 100% - ապրանքայնության մակարդակ )**

**Աղյուսակ 25 - Արտադրող տնտեսությունների կողմից մրգերի եւ բանջարեղենի ներքին սպառման քանակները 2006-2009թթ.**

| Մրգեր եւ բանջարեղեն | Արտադրանքի քանակը, տոննա | | | | Արտադրող տնտեսությունների ներքին սպառման քանակը, տոննա | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2006 | 2007 | 2008 | 2009 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
| Խաղող | 201,371 | 218,883 | 185,832 | 208,649 | 28,393 | 32,176 | 30,291 | 33,593 |
| Ծիրան | 72,017 | 15,681 | 83,089 | 80,686 | 26,502 | 8,044 | 38,969 | 33,888 |
| Դեղձ | 61,477 | 63,868 | 41,651 | 57,883 | 22,624 | 32,764 | 19,534 | 24,311 |
| Սալոր | 7,591 | 11,226 | 12,077 | 10,344 | 2,794 | 5,759 | 5,664 | 4,345 |
| Կեռաս | 6,763 | 3,901 | 6,598 | 7,682 | 2,489 | 2,001 | 3,094 | 3,227 |
| Խնձոր | 96,268 | 111,836 | 117,199 | 120,844 | 35,427 | 57,372 | 54,966 | 50,754 |
| Տանձ | 22,566 | 27,105 | 29,322 | 28,247 | 8,304 | 13,905 | 13,752 | 11,864 |
| Կարտոֆիլ* | | | | | | | | |
| Լոլիկ | 319,285 | 321,471 | 293,784 | 278,582 | 80,460 | 74,260 | 73,446 | 72,153 |
| Վարունգ | 72,629 | 72,109 | 81,819 | 80,944 | 18,303 | 16,657 | 20,455 | 20,965 |
| Կաղամբ | 122,598 | 141,357 | 129,550 | 125,075 | 30,895 | 32,653 | 32,388 | 32,395 |
| Պղպեղ | 49,000 | 60,000 | 63,000 | 71,000 | 12,348 | 13,860 | 15,750 | 18,389 |
| Սմբուկ | 43,600 | 56,000 | 63,000 | 71,000 | 10,987 | 12,936 | 15,750 | 18,389 |
| Գլուխ սոխ | 62,235 | 56,847 | 61,449 | 50,416 | 15,683 | 13,132 | 15,362 | 13,058 |

* - Արտադրող տնտեսություններում կարտոֆիլի իրական սպառման քանակների (սննդամթերք + սերմացու) հաշվարկման համար ճշգրիտ տվյալներ չկան

! **Պետք է նկատի ունենալ, որ մրգերի կամ բանջարեղենի համար ընդհանրական կարգով հիմք ընդունված ապրանքայնության միջին ցուցանիշները առանձին ապրանքների մակարդակում կարող են ունենալ շեղումներ: Ուստի արտադրող տնտեսությունների կողմից մրգերի եւ բանջարեղենի ներքին սպառման վերաբերյալ Աղյուսակ 25-ում ներկայացված տվյալները պետք է ընդունել ոչ թե բացարձակ ճշմարտություն, այլ սպառման քանակները բնութագրող մոտավոր ցուցանիշներ:**

### 5.1.3 Վերամշակողների մթերումները

Գոյություն ունի թարմ մրգերի եւ բանջարեղենի սպառողների (օգտագործողների) մեկ այլ հանրություն՝ ի դեմս հայկական վերամշակող ձեռնարկությունների: Սույն հետազոտության կողմից թիրախված ապրանքների վերամշակողները բաժանվում են 2 խմբերի.

| | | | |
|---|---|---|---|
| **1.** | **Խաղողի վերամշակողներ** | ▶ | **Գինու եւ կոնյակի** արտադրության ձեռնարկություններ |
| **2.** | **Մրգերի եւ բանջարեղենի վերամշակողներ** | ▶ | **Պահածոների** եւ **չորացված մթերքի** արտադրության ձեռնարկություններ |

Հայաստանում արտադրվող մրգերից վերամշակման նպատակներով օգտագործվող ամբողջ քանակությունը բաշխվում է վերոհիշյալ 3 խմբերի ձեռնարկությունների միջեւ:

#### *5.1.3.1 Խաղողի վերամշակման քանակները*

Վերամշակող ձեռնարկությունների կողմից խաղողը մթերվում է գինու եւ կոնյակի արտադրության նպատակով: Խաղողից չորացրած մթերքի՝ չամիչի տեղական արտադրության քանակներն այնքան փոքր են, որ Հայաստանն այն գրեթե ամբողջությամբ ներմուծում է[25]: Հայաստանում խաղողագործության զարգացումը հիմնականում հիմնված է գինու եւ կոնյակի արտադրության բնագավառի զարգացման վրա: Վերջին տասնամյակում այն ունեցել է զգալի հաջողություններ (գինու եւ կոնյակի արտադրության եւ իրացման քանակների աճ, արտահանման քանակների եւ շուկաների թվի աճ), ինչը զգալիորեն խթանել է խաղողի արտադրության ծավալները (տես **Նկար 10**, էջ 28): Հիմնական խթանը եղել է գինու-կոնյակի ձեռնարկությունների կողմից խաղողի պահանջարկի եւ վերամշակման նպատակով մթերումների շարունակական ավելացումը: Դրա մասին են վկայում Նկար 36-ի տվյալները.

**Նկար 36 - Վերամշակող ձեռնարկությունների կողմից խաղողի մթերման քանակները 2003-2010թթ.**




Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն

Վերջին տասնամյակում վերամշակման նպատակով խաղողի մթերման քանակների միակ անկումը գրանցվել է 2008-2009թթ.-ին՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: Չի կարելի է ասել, որ Հայաստանում այդ ճգնաժամի հետեւանքներն արդեն ամբողջությամբ հաղթահարված են, սակայն 2010թ.-ի հունվար-

[25] 2006-2009թթ.-ին Հայաստանը ներմուծել է համապատասխանաբար 1100, 438, 433 եւ 930 տոննա չամիչ

հոկտեմբեր ամիսների կտրվածքով վերամշակողների կողմից խաղողի մթերումների ծավալը գերազանցել է 2009թ.-ի տարեկան ցուցանիշը: Դա լավ ազդակ է խաղողի արտադրողների համար, չնայած դեռեւս խնդրահարույց է մնում մթերման գների հարցը:

Գինու եւ կոնյակի արտադրության մեջ ներգրավված մոտ 4 տասնյակ ձեռնարկությունները տեղակայված են 6 մարզերում եւ խաղող են մթերում Հայաստանի 5 մարզերից: Մթերումների մեծ մասը բաժին է ընկնում տեխնիկական սորտերի խաղողի աճեցման խոշորագույն ռեգիոնին՝ Արարատի մարզին (տես Աղյուսակ 26), որտեղ են տեղակայված վերամշակող ձեռնարկությունների գրեթե կեսը:

**Աղյուսակ 26 - Վերամշակման նպատակով խաղողի մթերումներն ըստ մարզերի, 2006-2009թթ., տոննա**

| Մարզեր | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| Երեւան | 438 | - | - | - |
| Արագածոտն | 700 | 900 | 16 | 1,501 |
| Արարատ | 71,212 | 89,350 | 89,486 | 75,563 |
| Արմավիր | 19,700 | 37,094 | 37,699 | 36,576 |
| Կոտայք | 6,897 | 7,807 | 4,379 | 7,388 |
| Վայոց Ձոր | 1,630 | 1,645 | 1,789 | 1,688 |
| Տավուշ | 5,478 | 7,593 | 3,987 | 5,024 |
| **Ընդամենը** | **106,055** | **144,389** | **137,356** | **127,740** |

Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն

Գինու եւ կոնյակի շուկայում կենտրոնացվածությունը այնքան էլ մեծ չէ: 2006-2009թթ.-ին բնագավառի 5 առաջատար ձեռնարկությունները միասին մթերել են խաղողի 55-65%-ը, ընդ որում կոնյակի խոշորագույն գործարանը՝ «Երեւանի կոնյակի գործարանը» («Պեռնո Ռիկար») սովորաբար մթերում է խաղող 20-25%: 2006-2009թթ.-ի խաղող մթերող ձեռնարկությունների Top 5-ը ներկայացված է ստորեւ.

**Աղյուսակ 27 - Խաղողի մթերման 5 խոշոր ձեռնարկությունները 2006-2009թթ.**

| 2006 Ձեռնարկություններ | %* | 2007 Ձեռնարկություններ | % |
|---|---|---|---|
| ❶ «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ | 26.4% | ❶ «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ | 20.1% |
| ❷ «Երեւանի կոնյակի, գինու, օղու կոմբինատ» ԲԲԸ | 14.2% | ❷ «Երեւանի կոնյակի, գինու, օղու կոմբինատ» ԲԲԸ | 14.5% |
| ❸ «Արտաշատ Վինկոն» ՓԲԸ | 7.6% | ❸ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ | 7.6% |
| ❹ «Շահումյան Վին» ՍՊԸ | 6.8% | ❹ «Արտաշատ Վինկոն» ՓԲԸ | 7.0% |
| ❺ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ | 5.9% | ❺ «Վաղարշապատ» գինու-կոնյակի գործարան» ԲԲԸ | 6.5% |

| 2008 Ձեռնարկություններ | % | 2009 Ձեռնարկություններ | % |
|---|---|---|---|
| ❶ «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ | 22.5% | ❶ «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲԸ | 24.6% |
| ❷ «Երեւանի կոնյակի, գինու, օղու կոմբինատ» ԲԲԸ | 17.3% | ❷ «Երեւանի կոնյակի, գինու, օղու կոմբինատ» ԲԲԸ | 19.9% |
| ❸ «Քաղցրաշենի գինու գործարան» ՍՊԸ | 6.4% | ❸ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ | 11.1% |
| ❹ «Վաղարշապատ» գինու-կոնյակի գործարան» ԲԲԸ | 6.4% | ❹ «Քաղցրաշենի գինու գործարան» ՍՊԸ | 4.3% |
| ❺ «Շահումյան Վին» ՍՊԸ | 6.1% | ❺ «Շահումյան Վին» ՍՊԸ | 4.3% |

* - Մասնաբաժինները մրգերի ընդհանուր մթերման ծավալներում

### *5.1.3.2 Մրգերի եւ բանջարեղենի վերամշակման քանակները*

Մրգերի եւ բանջարեղենի մթերումներն իրականացնում են պահածոների եւ չորացրած մթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունները: Այս բնագավառում իրավիճակը խիստ անկայուն է: Չնայած այն բանին, որ **մրգերի** վերամշակման քանակների վերջին 10 տարիների միտումների կորը աճողական է, այնուամենայնիվ վերամշակողների մթերումները տարեց տարի մեծապես տատանվում են՝ արձանագրելով կտրուկ վերելքներ եւ անկումներ (տես Նկար 37):

**Նկար 37 - Վերամշակող ձեռնարկությունների կողմից մրգերի մթերման քանակները 2003-2010թթ.**




Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն

Եթե համեմատություն անցկացնենք մրգերի արտադրության եւ վերամշակման քանակների դինամիկաների միջեւ, ապա կարելի է հանդիպել զգալի նմանություններ: Մրգերի բերքի ցածր ցուցանիշներով տարիներին (2003թ., 2004թ., 2007թ., 2010թ.) անկում են ապրել նաեւ վերամշակման քանակները: Սա բնական է, քանի որ բերքից սակավ տարիներին ապրանքների քանակը քիչ է, իսկ գները բարձր, ինչը վերամշակողներին խանգարում է կատարել մեծածավալ մթերումներ: Այդ առումով վերջին 10 տարիներին ամենավատ ցուցանիշները արձանագրվել են 2010թ.-ին, քանի որ այս տարին խիստ անբարենպաստ էր վերամշակողների կողմից ամենապահանջված միանգամից 3 ապրանքների՝ ծիրանի, դեղձի եւ խնձորի գծով:

Ընդհանուր առմամբ մրգերի վերամշակողները մթերում են Հայաստանում աճող գրեթե բոլոր մրգերից, բացառությամբ թերեւս տանձի եւ խուրմայի: Սակայն հիմնական պահանջարկը ներկայացվում է ծիրանի եւ դեղձի նկատմամբ, ինչը նկատելի է նաեւ վերամշակման նպատակով մրգերի մթերումների ցուցանիշներից:

**Աղյուսակ 28 - Վերամշակման նպատակով մթերվող մրգերի տեսականին եւ քանակները, 2006-2009թթ., տոննա**

| Մրգեր | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| Ծիրան | 3,850 | 337 | 7,514 | 4,641 |
| Դեղձ | 1,493 | 4,766 | 6,953 | 1,928 |
| Սալոր | 500 | 525 | 579 | 550 |
| Կեռաս | 372 | 220 | 450 | 502 |
| Խնձոր | 4,605 | 4,208 | 2,646 | 2,107 |
| Ընկույզ | 139 | 193 | 133 | 151 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հատապտուղներ | 830 | 190 | 348 | 423 |
| Այլ մրգեր | 1,365 | 4,405 | 783 | 953 |
| **Ընդամենը** | **15,160** | **16,851** | **21,414** | **13,264** |

Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն

Մրգերի վերամշակման բնագավառում գործող մոտ 30 ընկերություններից առաջին 5-ին բաժին է ընկնում մթերումների մոտ 75% (միջին ցուցանիշ 2006-2009թթ.-ի համար): Վերամշակող ձեռնարկությունների գերակշիռ մասը տեղակայված է հումքի «արտադրական բազայում»՝ Արարատյան դաշտավայրում (Արարատի եւ Արմավիրի մարզեր): Շուկայի առաջատարը «Արտաշատի պահածոների գործարանն» է («ԱրտՖուդ») (տես Աղյուսակ 29).

**Աղյուսակ 29 - Մրգերի մթերման 5 խոշոր ձեռնարկությունները 2006-2009թթ.**

| 2006 Ձեռնարկություններ | %* | 2007 Ձեռնարկություններ | % |
|---|---|---|---|
| ❶ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ | 23.6% | ❶ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ | 35.6% |
| ❷ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ | 17.2% | ❷ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ | 27.5% |
| ❸ «Բորոդինո» Հայաստանի պահած. գործ.» ՍՊԸ | 15.3% | ❸ «Եվրոթերմ» ՓԲԸ | 12.0% |
| ❹ «Եվրոթերմ» ՓԲԸ | 10.9% | ❹ «Բորոդինո» Հայաստանի պահած. գործ.» ՍՊԸ | 7.7% |
| ❺ «Երեւանի գարեջուր» ՓԲԸ | 3.5% | ❺ «Երեւանի գարեջուր» ՓԲԸ | 2.7% |

| 2008 Ձեռնարկություններ | % | 2009 Ձեռնարկություններ | % |
|---|---|---|---|
| ❶ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ | 35.8% | ❶ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ | 26.6% |
| ❷ «Բորոդինո» Հայաստանի պահած. գործ.» ՍՊԸ | 18.8% | ❷ «Եվրոթերմ» ՓԲԸ | 13.1% |
| ❸ «Եվրոթերմ» ՓԲԸ | 13.5% | ❸ «Բորոդինո» Հայաստանի պահած. գործ.» ՍՊԸ | 7.9% |
| ❹ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ | 6.1% | ❹ «Այրումի պահածոների գործարան» ԲԲԸ | 7.5% |
| ❺ «Այրումի պահածոների գործարան» ԲԲԸ | 5.5% | ❺ «Պռոշյանի կոնյակի գործարան» ՍՊԸ | 7.3% |

* - Մասնաբաժինները մրգերի ընդհանուր մթերման ծավալներում

**Բանջարեղենի** վերամշակման բնագավառում եւս իրավիճակը անկայուն է: Վերջին 10 տարիներին վերամշակման նպատակով մթերումների քանակների կորը նվազող է (տես Նկար 38).

**Նկար 38 - Վերամշակող ձեռնարկությունների կողմից բանջարեղենի մթերման քանակները 2001-2010թթ.**




Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն

Բանջարեղենի մթերումների մեջ 90-95%-ը բաժին է ընկնում լոլիկին (տես Աղյուսակ 30): Վերամշակողների մեծ մասի գործունեությունը միտված է տոմատի մածուկի արտադրությանը եւ արտահանմանը, որը, վերամշակողների բնորոշմամբ, իրականացվում է շատ մեծ դժվարություններով: Առաջարկի կողմից էլ վերամշակողների համար դրական ազդակներ չկան: 2006թ.-ից սկսած նկատվում է լոլիկի ցանքատարածությունների կրճատում: Գյուղացիական տնտեսությունների մի մասը հրաժարվում է լոլիկի արտադրությունից, քանի որ վերամշակողների մթերման գները շարունակում են մնալ բավականին ցածր՝ հատկապես վերջին տարիներին նկատվող ինֆլյացիայի բարձր ցուցանիշների ֆոնի վրա:

**Աղյուսակ 30 - Վերամշակման նպատակով մթերվող բանջարեղենի տեսականին եւ քանակները, 2006-2009թթ., տոննա**

| Բանջարեղեն | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|
| Լոլիկ | 64,306 | 53,954 | 35,481 | 29,749 |
| Վարունգ | 407 | 351 | 470 | 526 |
| Պղպեղ | 740 | 481 | 649 | 257 |
| Սմբուկ | 1,261 | 1,255 | 1,305 | 745 |
| Լոբի, ոլոռ | 217 | 260 | 311 | 338 |
| Այլ բանջարեղեն | 632 | 810 | 783 | 693 |
| **Ընդամենը** | **67,563** | **57,111** | **38,999** | **32,309** |

Աղբյուր՝ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարություն

Բանջարեղենի վերամշակման բնագավառն աչքի է ընկնում իր կենտրոնացվածության բարձր մակարդակով կամ արտադրության դիվերսիֆիկացիայի ցածր մակարդակով): Բնագավառի 5 առաջատար ձեռնարկություններին բաժին է ընկնում բանջարեղենի մթերումների 96%-ը (տես Աղյուսակ 31).

**Աղյուսակ 31 - Բանջարեղենի մթերման 5 խոշոր ձեռնարկությունները 2006-2009թթ.**

| 2006 Ձեռնարկություններ | %* | 2007 Ձեռնարկություններ | % |
|---|---|---|---|
| ❶ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ | 41.0% | ❶ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ | 42.4% |
| ❷ «Բորոդինո» Հայաստանի պահած. գործ.» ՍՊԸ | 37.6% | ❷ «Բորոդինո» Հայաստանի պահած. գործ.» ՍՊԸ | 38.4% |
| ❸ «ՄԱՊ» ՓԲԸ | 7.9% | ❸ «ՄԱՊ» ՓԲԸ | 13.2% |
| ❹ «Մաքս Իդեա» ՍՊԸ | 6.0% | ❹ «Եվրոթերմ» ՓԲԸ | 1.1% |
| ❺ «Արտաշես» ՍՊԸ | 2.4% | ❺ «Արտաշես» ՍՊԸ | 1.0% |

| 2008 Ձեռնարկություններ | % | 2009 Ձեռնարկություններ | % |
|---|---|---|---|
| ❶ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ | 45.2% | ❶ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ | 40.6% |
| ❷ «Բորոդինո» Հայաստանի պահած. գործ.» ՍՊԸ | 37.3% | ❷ «Բորոդինո» Հայաստանի պահած. գործ.» ՍՊԸ | 30.3% |
| ❸ «ՄԱՊ» ՓԲԸ | 7.8% | ❸ «ՄԱՊ» ՓԲԸ | 16.7% |
| ❹ «Էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ | 4.7% | ❹ «Էջմիածնի պահածոների գործարան» ԲԲԸ | 6.7% |
| ❺ «Մաքս Իդեա» ՍՊԸ | 1.3% | ❺ «Կոնսեր» ՍՊԸ | 1.9% |

* - Մասնաբաժինները մրգերի ընդհանուր մթերման ծավալներում

Բացի պահածոների արտադրության ձեռնարկություններից, Հայաստանում գործում են նաեւ **<u>չորացրած մթերք</u>** արտադրող շուրջ 100 փոքր ձեռնարկություններ: Վերամշակման նպատակով

մրգերի եւ բանջարեղենի ընդհանուր մթերումների մեջ այս ձեռնարկությունների բաժինը կազմում է 2-5%: Նրանց կողմից հիմնական պահանջարկը ներկայացվում է ծիրանի, սեւ սալորի, լոլիկի եւ պղպեղի նկատմամբ: Ի լրումն նշված 50 ձեռնարկությունների, չորացրած մթերքի արտադրության մեջ են ներգրավված եւս 1,000 սուբյեկտներ՝ փոքր ձեռնարկություններ եւ արտադրող գյուղացիական տնտեսություններ, որոնց գործունեությունը կրում է անկայուն բնույթ: Բերքառատ տարիներին, երբ հումքի գները համեմատաբար էժան են, իսկ քանակը շատ է, նրանք արտադրում են չորացրած մթերք: Համապատասխանաբար բերքից սակավ տարիներին նրանք կարող են ընդհանրապես արտադրանք չտալ: Չորացրած մթերքի արտադրության մեջ ներգրավված սուբյեկտների 25%-ը գործում է Արարատի, 45%-ը՝ Արմավիրի, 10%-ը՝ Արագածոտնի մարզերում: Մյուս մարզերում արտադրողների թիվը փոքր է՝ ընդհանուր թվի 3-5%-ական սուբյեկտներ կան Վայոց Ձորի մարզում (Եղեգնաձոր), Սյունիքի մարզում (Մեղրի), Լոռիի մարզում (Այրում) եւ Տավուշի մարզում:

Չնայած չորացրած մթերքի արտադրությամբ զբաղվող սուբյեկտների համեմատաբար մեծ թվին, նրանց կողմից թողարկվող արտադրանքի քանակը խիստ փոքր է: Հայաստանում չորացրած մթերքի արտադրությունը կազմում է տարեկան 200-300 տոննա (այդ թվում նաեւ չորացրած մասուրը), իսկ սպառման ծավալները՝ միջին տարում մոտ 1,000 տոննա, ինչը նշանակում է, որ տեղական արտադրողները ապահովում են երկրի պահանջարկի 20-30%-ը: Բացասական առեւտրային հաշվեկշիռը պայմանավորված է հիմնականում չամիչի ներմուծման մեծ ծավալներով:

Ինչ վերաբերվում է չորացրած մթերքի արտահանմանը, ապա այն քանակով եւ արժեքով կազմում է շատ փոքր թվեր.

**Աղյուսակ 32 - Հայաստանի չորացրած մթերքի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ.**

| Չորացրած մթերք | Ցուցանիշ | 2006 | 2007 | 2008 | 2009 |
|---|---|---|---|---|---|
| Ծիրանի չիր | Քանակ, տոննա | 1.0 | 2.5 | 0.2 | 8.6 |
| | Արժեք, $ | 6,252 | 10,830 | 1,603 | 19,496 |
| Սեւ սալորաչիր | Քանակ, տոննա | 0.1 | 0.1 | 0.0 | 0.5 |
| | Արժեք, $ | 651 | 997 | 440 | 4,450 |
| Դեղձի չիր | Քանակ, տոննա | 0.4 | 0.4 | 0.2 | 0.4 |
| | Արժեք, $ | 3,006 | 4,149 | 2,156 | 5,199 |
| Տանձի չիր | Քանակ, տոննա | - | - | 9.9 | - |
| | Արժեք, $ | - | - | 9,541 | - |
| Չորացրած մասուր | Քանակ, տոննա | 0.4 | 13.9 | 13.5 | 15.1 |
| | Արժեք, $ | 8,885 | 16,991 | 21,290 | 16,995 |
| Չիրերի խառնուրդ | Քանակ, տոննա | - | - | 0.0 | 1.5 |
| | Արժեք, $ | - | - | 190 | 18,142 |
| Չորացրած լոլիկ | Քանակ, տոննա | 18.7 | 0.1 | 14.2 | - |
| | Արժեք, $ | 66,372 | 679 | 65,262 | - |
| Չորացրած բանջարեղեն | Քանակ, տոննա | 0.3 | 0.0 | 0.3 | 0.3 |
| | Արժեք, $ | 1,022 | 31 | 1,495 | 629 |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **Քանակ, տոննա** | **20.9** | **17.0** | **38.3** | **26.4** |
| | **Արժեք, $** | **86,188** | **33,677** | **101,977** | **64,911** |

Աղբյուր՝ «ՀՀ արտաքին առեւտուրը», ԱՎԾ, 2006-2009

### 5.1.4 Բնակչության սպառումը

Ունենալով մրգերի եւ բանջարեղենի առաջարկի բոլոր բաղադրիչների՝ արտադրության եւ ներմուծման ցուցանիշները, ինչպես նաեւ սպառման կառուցվածքային բաղադրիչների՝ արտադրողների ներքին սպառման, արտահանման եւ վերամշակման ցուցանիշները, կարելի է հաշվարկել **բնակչության կողմից** մրգերի եւ բանջարեղենի սպառման (օգտագործման) քանակները: Հաշվարկման բանաձեւը հետեւյալն է (չափի միավորը՝ տոննա).

| Բնակչության սպառում | = | Արտադրություն | - | Արտադրողների ներքին սպառում | - | Վերամշակում | - | Արտահանում | + | Ներմուծում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

Քանի որ բնակչության կողմից մրգերի եւ բանջարեղենի սպառման քանակների հաշվարկման բանաձեւը բաղկացած է 5 բաղադրիչներից, ապա սպառման քանակների փոփոխության միտումները եւ չափերը կախված են բոլոր այն գործոններից, որոնք ազդում են բաղադրիչներից յուրաքանչյուրի փոփոխության վրա: Դրան պետք է հավելել երկրի մակրոտնտեսական ցուցանիշների զարգացումների ազդեցությունը, ինչպես նաեւ, քանի որ խոսքը գնում է գյուղատնտեսության ոլորտի մասին՝ բնակլիմայական պայմանների ազդեցությունը: Փոքր դեր չեն խաղում նաեւ Հայաստանի քաղաքական հարաբերությունները հարեւան երկրների հետ, որոնք լուրջ ճշգրտումներ են մտցնում Հայաստանի արտաքին առեւտրի պոտենցիալի օգտագործման մեջ: Այս վերջին գործոնի ազդեցությունը պետք է ընդունել անփոփոխ (կայուն):

Սպառման քանակների վրա ազդող գործոնների բազմազանության պատճառով մշտապես տարբեր է ստացվում նաեւ բնակչության կողմից մրգերի եւ բանջարեղենի սպառման քանակները: Ստորեւ բերված աղյուսակներում ներկայացված են 2006-2009թթ.-ի արդյունքներով բնակչության կողմից մրգերի եւ բանջարեղենի սպառման քանակների հաշվարկները.

**Աղյուսակ 33 - Բնակչության կողմից մրգերի սպառման քանակները 2006-2009թթ., տոննա**

**ԽԱՂՈՂ**

| Տարիներ | Արտադրություն | Արտադրողների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 201,371 | 28,393 | 106,055 | 219.0 | 32.7 | 66,736 | **95,130** |
| 2007 | 218,883 | 32,176 | 144,389 | 1,349.0 | 10.0 | 40,979 | **73,155** |
| 2008 | 185,832 | 30,291 | 137,356 | 2,182.0 | 1.9 | 16,005 | **46,296** |
| 2009 | 208,649 | 33,593 | 127,740 | 4,003.0 | 26.1 | 43,340 | **76,933** |

**ԾԻՐԱՆ**

| Տարիներ | Արտադրություն | Արտադրողների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 72,017 | 26,502 | 3,850 | 1,929.2 | 0.0 | 39,736 | **66,238** |
| 2007 | 15,681 | 8,044 | 337 | 904.6 | 0.9 | 6,396 | **14,441** |
| 2008 | 83,089 | 38,969 | 7,514 | 5,280.1 | 0.6 | 31,326 | **70,295** |
| 2009 | 80,686 | 33,888 | 4,641 | 9,082.1 | 0.1 | 33,075 | **66,963** |

**ԴԵՂՁ**

| Տարիներ | Արտադրու-թյուն | Արտադրող-ների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 61,477 | 22,624 | 1,493 | 134.5 | 0.0 | 37,226 | **59,850** |
| 2007 | 63,868 | 32,764 | 4,766 | 314.5 | 10.2 | 26,034 | **58,798** |
| 2008 | 41,651 | 19,534 | 6,953 | 271.2 | 18.0 | 14,911 | **34,445** |
| 2009 | 57,883 | 24,311 | 1,928 | 654.2 | 0.0 | 30,989 | **55,300** |

**ՍԱԼՈՐ**

| Տարիներ | Արտադրու-թյուն | Արտադրող-ների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 7,591 | 2,794 | 500 | 90.7 | 0.0 | 4,207 | **7,001** |
| 2007 | 11,226 | 5,759 | 525 | 213.5 | 4.5 | 4,733 | **10,492** |
| 2008 | 12,077 | 5,664 | 579 | 269.8 | 3.8 | 5,567 | **11,231** |
| 2009 | 10,344 | 4,345 | 550 | 314.4 | 1.2 | 5,136 | **9,481** |

**ԿԵՌԱՍ**

| Տարիներ | Արտադրու-թյուն | Արտադրող-ների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 6,763 | 2,489 | 372 | 263.8 | 0.0 | 3,638 | **6,127** |
| 2007 | 3,901 | 2,001 | 220 | 95.5 | 0.1 | 1,585 | **3,586** |
| 2008 | 6,598 | 3,094 | 450 | 200.8 | 0.0 | 2,853 | **5,947** |
| 2009 | 7,682 | 3,227 | 502 | 599.3 | 0.0 | 3,355 | **6,582** |

**ԽՆՁՈՐ**

| Տարիներ | Արտադրու-թյուն | Արտադրող-ների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 96,268 | 35,427 | 4,605 | 0.0 | 37.0 | 56,273 | **91,700** |
| 2007 | 111,836 | 57,372 | 4,208 | 0.0 | 169.9 | 50,426 | **107,798** |
| 2008 | 117,199 | 54,966 | 2,646 | 34.0 | 83.5 | 59,636 | **114,603** |
| 2009 | 120,844 | 50,754 | 2,107 | 2.3 | 148.6 | 68,129 | **118,883** |

**ՏԱՆՁ**

| Տարիներ | Արտադրու-թյուն | Արտադրող-ների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 22,566 | 8,304 | | 0.0 | 3.3 | 14,265 | **22,569** |
| 2007 | 27,105 | 13,905 | | 0.0 | 27.3 | 13,228 | **27,133** |
| 2008 | 29,322 | 13,752 | | 0.1 | 49.1 | 15,619 | **29,371** |
| 2009 | 28,247 | 11,864 | | 0.6 | 81.3 | 16,464 | **28,328** |

Ինչպես նշվել է վերեւում, որոշակի դժվարություն է ներկայացնում կարտոֆիլի սպառման ծավալների հաշվարկը՝ առաջին հերթին արտադրող տնտեսություններում սպառման ծավալների հաշվարկման դժվարությունների պատճառով: Ուստի կարտոֆիլի սպառման ծավալները հաշվարկելու համար հիմք է ընդունվել ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից պարենային զամբյուղի մշակման համար հիմք ընդունված ցուցանիշը: Ըստ այդմ, բնակչության մեկ շնչի կողմից կարտոֆիլի սպառման (օգտագործման) տարեկան նորման կազմում է 91.3 կգ (2010թ. II եռամսյակի տվյալներով) (տես Աղյուսակ 34): Հենց այս ցուցանիշի հիման վրա էլ հաշվարկվել է բնակչության կողմից կարտոֆիլի սպառման քանակները (տես հաջորդիվ **Բաժին 5.1.4, «Բնակչության սպառումը»**, էջ 92):

**Աղյուսակ 34 - Բնակչության կողմից կարտոֆիլի սպառման քանակները 2006-2009թթ.**

**ԿԱՐՏՈՖԻԼ**

| Տարիներ | Հայաստանի բնակչության թվաքանակը (մարդ), տարվա վերջի դրությամբ | Բնակչության 1 շնչի կողմից կարտոֆիլի սպառման նորման, կգ/մարդ/տարեկան | Բնակչության սպառում, տոննա |
|---|---|---|---|
| 2006 | 3,222,900 | 91.3 | 294,251 |
| 2007 | 3,230,100 | 91.3 | 294,908 |
| 2008 | 3,238,000 | 91.3 | 295,629 |
| 2009 | 3,250,500 | 91.3 | 296,771 |

Պետք է նկատի ունենալ, որ 1 շնչի կողմից կարտոֆիլի սպառման հիմք ընդունված նորման (91.3 կգ/մարդ/տարեկան) սպառման նվազագույն մեծությունն է: Միջին սպառման նորման մոտ 25-30%-ով ավելի բարձր է:

Բնակչության կողմից բանջարեղենի մյուս տեսակների սպառման գծով պատկերը հետեւյալն է.

**Աղյուսակ 35 - Բնակչության կողմից բանջարեղենի սպառման քանակները 2006-2009թթ., տոննա**

**ԼՈԼԻԿ**

| Տարիներ | Արտադրություն | Արտադրողների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 319,285 | 80,460 | 64,306 | 0.2 | 509.9 | 175,029 | **255,489** |
| 2007 | 321,471 | 74,260 | 53,954 | 0.0 | 175.4 | 193,433 | **267,693** |
| 2008 | 293,784 | 73,446 | 35,481 | 7.2 | 93.8 | 184,944 | **258,390** |
| 2009 | 278,582 | 72,153 | 29,749 | 8.4 | 138.3 | 176,810 | **248,963** |

**ՎԱՐՈՒՆԳ**

| Տարիներ | Արտադրություն | Արտադրողների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 72,629 | 18,303 | 407 | 0.1 | 162.7 | 54,082 | **72,385** |
| 2007 | 72,109 | 16,657 | 351 | 0.0 | 377.2 | 55,478 | **72,135** |
| 2008 | 81,819 | 20,455 | 470 | 7.4 | 161.2 | 61,048 | **81,503** |
| 2009 | 80,944 | 20,965 | 526 | 5.5 | 129.1 | 59,577 | **80,541** |

**ԿԱՂԱՄԲ**

| Տարիներ | Արտադրություն | Արտադրողների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 122,598 | 30,895 | | 0.0 | 0.0 | 91,703 | **122,598** |
| 2007 | 141,357 | 32,653 | | 0.0 | 0.0 | 108,703 | **141,357** |
| 2008 | 129,550 | 32,388 | | 0.0 | 20.6 | 97,183 | **129,571** |
| 2009 | 125,075 | 32,395 | | 0.0 | 208.0 | 92,889 | **125,283** |

**ՊՂՊԵՂ**

| Տարիներ | Արտադրություն | Արտադրողների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 49,000 | 12,348 | 740 | 14.2 | 17.1 | 35,915 | **48,263** |
| 2007 | 60,000 | 13,860 | 481 | 15.9 | 22.6 | 45,666 | **59,526** |
| 2008 | 63,000 | 15,750 | 649 | 12.6 | 24.8 | 46,613 | **62,363** |
| 2009 | 71,000 | 18,389 | 257 | 15.5 | 15.0 | 52,354 | **70,743** |

ՍՄԲՈՒԿ

| Տարիներ | Արտադրու-թյուն | Արտադրող-ների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 43,600 | 10,987 | 1,261 | 0.0 | 16.2 | 31,368 | **42,355** |
| 2007 | 56,000 | 12,936 | 1,255 | 0.0 | 22.0 | 41,831 | **54,767** |
| 2008 | 63,000 | 15,750 | 1,305 | 0.0 | 20.3 | 45,965 | **61,715** |
| 2009 | 71,000 | 18,389 | 745 | 0.9 | 6.9 | 51,872 | **70,261** |

ԳԼՈՒԽ ՍՈԽ

| Տարիներ | Արտադրու-թյուն | Արտադրող-ների ներքին սպառում | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Մնացած բնակչության սպառում | Ընդհանուր բնակչության սպառում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2006 | 62,235 | 15,683 | | 0.0 | 5,352.9 | 51,904 | **67,587** |
| 2007 | 56,847 | 13,132 | | 0.0 | 6,402.5 | 50,118 | **63,249** |
| 2008 | 61,449 | 15,362 | | 0.1 | 4,554.9 | 50,642 | **66,004** |
| 2009 | 50,416 | 13,058 | | 20.2 | 5,338.7 | 42,677 | **55,735** |

Աղյուսակներ 33-35-ի տվյալները հիմք ընդունելու համար պետք է նկատի ունենալ հետեւյալը եւ անել հետեւյալ վերապահումները.

! Հետեւողական լինելու եւ համարժեք տվյալներ համադրելու համար արտահանման ցուցանիշները ներկայացվել են համաձայն ԱՎԾ տվյալների: Դա նշանակում է, որ այդ թվերի մեջ չեն մտնում շատ փոքր խմբաքանակներով արտահանված ապրանքների քանակները (որոնք երեւում են Բուսասանիտարիայի պետական տեսչության (ԲՍՊՏ) թվերի մեջ), որոնք հնարավոր է, որ Մաքսային մարմինների կողմից հաշվառված չեն: Սակայն այդ տարբերությունը այնքան փոքր թվեր են, որ ամբողջ երկրի արտադրանքի բաշխման մեջ չեն կարող էական դերակատարում ունենալ: Ամենամեծ տարբերությունը հանդիպում է կարտոֆիլի դեպքում, երբ ԱՎԾ-ն 2009թ.-ին ցույց է տալիս 614 տոննա արտահանում, իսկ ԲՍՊՏ-ը՝ 7,039 տոննա: Տարբերության գումարը կազմում է կարտոֆիլի առաջարկի ընդամենը 1%-ը:

! «Ընդհանուր բնակչության սպառում» հասկացությունը տվյալ դեպքում ավելի լայն իմաստ ունի, քան մրգերի եւ բանջարեղենի օգտագործումը սոսկ որպես սննդամթերքի սպառում դիտելը: Աղյուսակներ 33-35-ում «ընդհանուր բնակչության սպառում» հասկացությունը ներառում է մրգերի եւ բանջարեղենի հետագա բաշխման հետեւյալ ձեւերը.
- սպառում թարմ տեսքով՝ որպես սննդամթերք;
- բնակչության (սպառողների) կողմից տնայնագործ պայմաններում վերամշակում՝ պահածոյացում, չորացում, սառեցում, ինչը էապես երկարաձգում է մրգերի եւ բանջարեղենի սպառման տեւողությունը;
- մրգերի որոշ տեսակների՝ խաղողի, ծիրանի, խնձորի եւ տանձի դեպքում՝ արտադրող տնտեսությունների կողմից օգտագործում օղու կամ գինու արտադրություն;
- բերքահավաքի ընթացքում բերքի մի մասի անխուսափելի կորուստ;
- մրգերի եւ բանջարեղենի որոշ տեսակների՝ խաղողի, խնձորի, կարտոֆիլի, գլուխ սոխի երկարատեւ պահպանման դեպքում դրա մի մասի հնարավոր կորուստ:

Աղյուսակներ 33-35-ում ներկայացված տվյալները մեզ հուշում են շատ կարեւոր փաստի մասին: **Մրգերի եւ բանջարեղենի առաջարկի եւ բաշխման ընդհանուր համակարգում գլխավոր բաղադրիչը արտադրության քանակներն են: Բնակչության սպառման քանակները տատանվում են գլխավորապես արտադրության քանակների տատանման հաշվին: Արտահանումը, ներմուծումը եւ վերամշակումը մրգերի եւ բանջարեղենի հաշվեկշիռներում առայժմ ունեն երկրորդական դերակատարություն: Դա նաեւ նշանակում է, որ արտադրությունից հետո մրգերի եւ բանջարեղենի հետագա բաշխման մեծ մասը կատարվում է թարմ տեսքով դրանց սպառման միջոցով:**

Առանձին տարիներին մրգերի եւ բանջարեղենի հաշվեկշիռների մեծ տատանումները կարող են շուկայում առաջացնել ապրանքային դեֆիցիտ կամ ավելցուկ: Նման դեպքերում սովորաբար աշխատում է տնտեսագիտության կարեւոր օրենքներից մեկը՝ որքան մեծանում է առաջարկը, այնքան նվազում են ապրանքների իրացման գները եւ հակառակը:

## 5.2 ԻՐԱՑՄԱՆ ԳՆԵՐԸ

### 5.2.1 Իրացման գների վրա ազդող հիմնական գործոնները

Այսպիսով, մրգերի եւ բանջարեղենի **առաջարկի մեծությունը հանդիսանում է իրացման գների ձեւավորման հիմնաքարը**: Սակայն անկախ այն բանից՝ բարձր են գները, թե ցածր, **նրանք երբեք չեն արտահայտվում մեկ թվով**: Կան բազմաթիվ այլ գործոններ, որոնք վերջնական ճշգրտում են մտցնում ապրանքների իրացման գների մեջ՝ սահմանելով դրանց առավելագույն եւ նվազագույն սահմանները: Դրանցից հիմնական կարեւորներն են. ա) առաջարկի սեզոնայնությունը, բ) ապրանքների որակական հատկանիշները, եւ գ) ապրանքների ձեռքբերման վայրը:

**Նկար 39 - Մրգերի եւ բանջարեղենի առաջարկի մեծության եւ գների մակարդակի կոռելյացիան**




**Առաջարկի սեզոնայնության** գործոնը իր բնույթով նույնն է, ինչ առաջարկի մեծության վերը բերված հիմնարար սկզբունքը: Դրա իմաստն այն է, որ բերքահավաքի սեզոնի սկզբում եւ ապրանքային պաշարների սպառման փուլերում գները լինում են բարձր, իսկ բերքի սեզոնի պիկին՝ ցածր (ինչպես ներկայացված է Նկար 39-ում):

Ինչպես կարելի է հիշել մրգերի եւ բանջարեղենի իրացման/սպառման կառուցվածքի սխեմայից (տես Նկար 35, էջ 81), ապրանքների տարբեր սպառողներ/օգտագործողներ պահանջարկ են ներկայացնում ձեռք բերել տարբեր **որակական հատկանիշներ** ունեցող ապրանքներ՝ բարձր, միջին եւ ցածր որակի: Միեւնույն ժամանակ մրգերի եւ բանջարեղենի սպառողները/օգտագործողները տարբերվում են իրենց գնումների չափաքանակներով. ոմանք (արտահանողները, վերամշակողները) ապրանք են գնում են մեծ խմբաքանակներով, ոմանք էլ (բնակչությունը)՝ փոքր քանակներով, որոնք չափվում են կգ-ներով: Ապրանքների բաշխման այսպիսի խառը կոմբինացիաների արդյունքում նույն ապրանքի համար ձեւավորվում են տարբեր գներ: Ստորեւ ներկայացված են մրգերի եւ բանջարեղենի իրացման գների կառուցվածքը՝ ըստ ապրանքի արժեշղթայի մասնակիցների եւ որակական հատկանիշների.

**Աղյուսակ 36 - Մրգերի եւ բանջարեղենի գների կառուցվածքն ըստ արժեշղթայի մասնակիցների եւ ապրանքի որակական հատկանիշների**

| Ապրանքի արժեշղթայի մասնակիցներ (գործարքի կողմեր) | | Վաճառքի գնի բնույթը | Վաճառվող ապրանքի որակական հատկանիշները |
|---|---|---|---|
| Վաճառող | Գնորդ | | |
| Արտադրող տնտեսություն | ▪ Արտահանող | Մեծածախ գին | Բարձրորակ ապրանք |

| | | | |
|---|---|---|---|
| Արտադրող տնտեսություն ■ | Վերամշակող | Մեծածախ գին | Ցածրորակ ապրանք |
| Արտադրող տնտեսություն ■ | Միջնորդ-վերավաճառողներ | Մեծածախ գին | Բարձրորակ ապրանք<br>Միջին որակի ապրանք |
| Արտադրող տնտեսություն ■ | Բնակչություն | Մանրածախ գին | Բարձրորակ ապրանք<br>Միջին որակի ապրանք |
| Միջնորդ-վերավաճառողներ ■ | Բնակչություն | Մանրածախ գին | Բարձրորակ ապրանք<br>Միջին որակի ապրանք |

Գնագոյացման վրա ազդող մեկ այլ կարեւոր գործոն է **ապրանքների ձեռքբերման վայրը**: Որոշ գնորդներ ապրանքը ձեռք են բերում վաճառողի գտնվելու վայրում, իսկ որոշները՝ իրենց գործունեության տարածքում: Այս հանգամանքը բացարձակ նույն ապրանքի պարագայում առաջացնում է իրացման գնային տարբերություններ, որոնք թելադրված են ապրանքի ինքնարժեքում *տրանսպորտային (փոխադրման) ծախսերի* առկայությամբ: Մրգերի եւ բանջարեղենի արժեշղթայի տարբեր մասնակիցների դեպքում ապրանքների հիմնական ձեռքբերման վայրերը տարբեր են.

**Աղյուսակ 37 - Մրգերի եւ բանջարեղենի ձեռքբերման վայրերն ըստ գնորդների**

| Մրգերի եւ բանջարեղենի գնորդներ | Մրգերի եւ բանջարեղենի ձեռքբերման վայրերը | |
|---|---|---|
| Արտահանող | Հիմնականում վաճառողի գործունեության վայրում | ■ Մրգերի/բանջարեղենի արտադրության վայրում (այգում, դաշտում) կամ վաճառողի պահեստից |
| Վերամշակող | Հիմնականում սեփական գործունեության վայրում | ■ Վերամշակող ձեռնարկության տարածքում կամ մթերման կետում |
| Միջնորդ-վերավաճառողներ | Մասամբ սեփական գործունեության վայրում | ■ Գյուղմթերքների մանրամեծածախ շուկայի տարածքում |
| | Մասամբ վաճառողի գործունեության վայրում | ■ Մրգերի/բանջարեղենի արտադրության վայրում (այգում, դաշտում) կամ վաճառողի պահեստից |
| Բնակչություն | Հիմնականում սեփական գործունեության վայրում | ■ Բնակության վայրի մոտակա շուկայում կամ մանրածախ առեւտրի այլ կետերում (սուպերմարկետներ) |

Նկատի ունենալով մրգերի եւ բանջարեղենի գների վրա ազդող գործոնների բազմությունը, հետեւաբար նաեւ՝ իրացման գների բազմազանությունը, սույն հետազոտության կողմից թիրախված ապրանքների գները ներկայացվել են նվազագույն [min] եւ առավելագույն [max] սահմանաչափերով, իսկ միտումները ցույց տալու համար՝ նաեւ միջին գների ցուցանիշներով:

Ցանկացած ինտերվենցիայի արդյունքում, այդ թվում Ազատ Տնտեսական Գոտու գործարկման միջոցով արտահանման խթանումը որոշակի փոփոխություններ կարող է մտցնել ապրանքների գների մեջ: Երկրի համար այդպիսի ինտերվենցիաների հնարավոր տնտեսական օգուտները կարող են հակառակ էֆեկտն ունենալ ներքին շուկայի սպառողների շահերի համար: Մասնավորապես խոսքը գնում է ապրանքների գների հնարավոր թանկացման մասին: Այս տեսանկյունից սպառողներին առավելապես հետաքրքրում է մանրածախ գների մակարդակը: Ուստի մրգերի եւ բանջարեղենի գների վերլուծությունը կառուցվել է հիմնականում մանրածախ գների ցուցանիշների հիման վրա: Մանրածախ գների ցուցանիշները ներկայացվել են Գյուղատնտեսության Աջակցության Մարզային Կենտրոնների մոնիտորինգի արդյունքների հիման վրա, որն ընդգրկում է Երեւանի եւ մարզերի խոշոր քաղաքների գյուղմթերքների իրացման բոլոր շուկաների տվյալները:

Որոշ դեպքերում, որպես կողմնորոշիչ տեղեկատվություն, ներկայացվել են նաեւ արտահանողների եւ վերամշակողների գները:

### 5.2.2 Մրգերի եւ բանջարեղենի իրացման գները

***Խաղող սեղանի սորտերի***

Հետազոտության կողմից թիրախված ապրանքներից խաղողը (սեղանի սորտերի), ի թիվս խնձորի, կարտոֆիլի, կաղամբի, գլուխ սոխի, ամենաերկար պահպանվող եւ հետեւաբար՝ ամենաերկար իրացման ժամանակահատվածն ունեցող ապրանքն է: Շուկայում այն իրացվում է բերքահավաքի սկզբից՝ օգոստոսից մինչեւ հաջորդ տարվա մայիս ամիսները: Քանի որ տարվա գարնան ամիսներին նկատվում է մրգերի դեֆիցիտ, եւ հիմնական իրացվող մրգերը խաղողն ու խնձորն են, ապա մինչեւ այդ տարվա առաջին մրգերի հասունանալը խաղողի գները գնալով թանկանում են, ինչը պայմանավորված է պաշարների նվազման հետ: «Հին» տարվա խաղողը շուկայից դուրս է մղվում (կամ՝ ապրանքատերերը աշխատում են նրա իրացումն ավարտել) կեռասի եւ ծիրանի հասունանալու պահին:

Խաղողի դեպքում իրացման գները ներկայացվել են միայն սեղանի սորտերի համար, քանի որ սույն հետազոտության տեսանկյունից վերամշակվող (տեխնիկական սորտերի) խաղողի գները էական նշանակություն չունեն եւ չեն կարող ունենալ: Դրանց գնագոյացումը մշտապես կառուցված է լինելու «արտադրող-վերամշակող» ուղղակի հարաբերությունների հարթության վրա եւ միջնորդավորված չի լինելու երրորդ սուբյեկտներով կամ շուկայական այլ մեխանիզմներով (ինչպիսին կարող է լինել Ազատ Տնտեսական Գոտին):

Ստորեւ բերված Նկար 40-ում ներկայացված են 2007-2010թթ.-ին խաղողի մանրածախ գների դինամիկան: Կարելի է նկատել, որ ավելի բարձր մակարդակով աչքի են ընկնում 2008թ.-ի բերքի գները: Հասկանալու համար դրա պատճառները, պետք է համադրել 2007-2009թթ.[26]-ի խաղողի առաջարկի թվերը եւ մանրածախ վաճառքի միջին գները.

**Աղյուսակ 38 - Խաղողի առաջարկի մեծության եւ մանրածախ գների համադրություն (2007-2009թթ.-ի արդյունքներով)**

| Բերքի իրացման սեզոնը | Առաջարկի բաղադրիչները, տոննա | | | | | Մանրածախ վաճառքի միջին գինը, դրամ/կգ |
|---|---|---|---|---|---|---|
| | Արտադրություն | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Բնակչության սպառում | |
| VIII 2007-V 2008 | 218,883 | -144,389 | -1,349.0 | +10.0 | **=73,155** | **494** |
| VIII 2008-V 2009 | 185,832 | -137,356 | -2,182.0 | +1.9 | **=46,296** | **635** |
| VIII 2009-V 2010 | 208,649 | -127,740 | -4,003.0 | +26.1 | **=76,933** | **353** |

Ներկայացված տվյալներից ակնհայտ է առաջարկի մեծության եւ խաղողի իրացման գների կապը: Վերջին 3 տարիներին առավելագույն գինը գրանցվել է 2008-2009թթ. բերքի իրացման սեզոնին, պայմանավորված 2008թ.-ին խաղողի բերքի փոքր քանակներով (186 հազ. տոննա) եւ բնակչության սպառման հաշվեկշռի նվազմամբ (46 հազ. տոննա):

Արտահանողների մեծածախ գները էապես տարբերվում են միջին մանրածախ գներից (տես Աղյուսակ 39): Դա պայմանավորված է նրանով, որ արտահանողներն իրենց մթերումները կազմակերպում են բերքահավաքի սեզոնին՝ գների ամենացածր մակարդակի ժամանակ:

[26] 2010թ.-ի ցուցանիշները հնարավոր չէ հաշվի առնել, քանի որ դեռեւս ավարտված չէ այդ տարվա բերքի իրացման սեզոնը: Ոչ ամբողջական սեզոնի միջին գները հնարավոր չէ համեմատել ամբողջ սեզոնի գների հետ:

**Նկար 40 - Խաղողի միջին մանրածախ գների դինամիկան 2007-2010թթ.**




**Աղյուսակ 39 - Արտահանողների կողմից խաղողի մթերման գներն ըստ արտահանվող հիմնական տեսակների, 2008-2010թթ.**

| Խաղողի սորտեր | 2008 | 2009 | 2010 |
|---|---|---|---|
| Կարմիր քիշմիշ | 350-400 | 350-400 | 450-500 |
| Սեւ քիշմիշ | 250-300 | 250-300 | 300-350 |
| Իծապտուկ | 200-250 | 170-200 | 250-300 |
| Ծահումյան | 200-250 | 180-250 | 200-300 |

**Խաղողի գների փոփոխությունների փուլերը**

| | | |
|---|---|---|
| 1. Օգոստոս | ▶ | Արարատյան դաշտավայրում հասունանում է խաղողի առաջին բերքը |
| 2. Սեպտեմբեր-Հոկտեմբեր | ▶ | Խաղողի բերքահավաքը գտնվում է իր պիկին: Առաջարկի կտրուկ մեծացման պատճառով սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին գրանցվում է գների նվազման միտում: Հոկտեմբերի կեսերին խաղողի գինը գտնվում է իր ամենաստորին մակարդակի վրա: |
| 3. Նոյեմբեր-Դեկտեմբեր | ▶ | Խաղողի գներն աստիճանաբար բարձրանում են: Բնակչության սպառումն իր պիկին է հասնում Ամանորյա տոների նախօրեին: |
| 4. Հունվար-Մայիս | ▶ | Քանի որ խաղողի պահպանումը կատարվում է սառնարաններում, ուստի որքան ուշ է այն իրացվում (կամ որքան երկար է այն պահպանվում), այնքան նրա ինքնարժեքը բարձրանում է: Դրա պատճառով այս ժամանակահատվածում խաղողի գները շարունակում են դանդաղ բարձրանալ: |
| 5. Մայիս-Հունիս | ▶ | Շուկայում ավարտվում է «հին» տարվա խաղողի բերքը: Այն իր տեղը զիջում է նոր հասունացող մրգերին: Եթե այդ պահին դեռեւս առկա է նախորդ տարվա բերքից մնացած (չիրացված) խաղող, ապա արձանագրվում է գների կտրուկ անկում՝ շատ արագ այն իրացնելու համար: |

**Աղյուսակ 40 - Խաղող. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 86.6 | 100.2 | 101.5 | 111.2 | 116.9 | 121.0 | 105.8 | 125.6 | 107.8 | 106.0 | 94.8 | 92.6 |
| 2008 | 90.9 | 87.7 | 77.1 | 72.5 | 76.3 | 71.5 | 104.1 | 84.5 | 94.0 | 109.9 | 122.3 | 123.2 |
| 2009 | 147.0 | 142.9 | 160.0 | 178.4 | 252.5 | 271.6 | 120.6 | 147.8 | 114.4 | 93.9 | 88.7 | 97.3 |
| 2010 | 74.7 | 57.8 | 55.7 | 52.9 | 44.4 | 40.7 | 91.6 | 102.1 | 125.3 | 151.2 | | |

**Աղյուսակ 41 - Խաղող. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 17.5 | 10.3 | -2.6 | 2.1 | 11.9 | 0.9 | 8.9 | -25.4 | -42.3 | -3.1 | 17.8 | 19.0 |
| 2008 | 15.4 | 6.4 | -14.4 | -4.0 | 17.7 | -5.5 | 58.5 | -39.5 | -35.8 | 13.3 | 31.1 | 20.0 |
| 2009 | 37.6 | 3.4 | -4.1 | 7.1 | 66.6 | 1.6 | -29.6 | -25.8 | -50.3 | -7.1 | 23.9 | 31.7 |
| 2010 | 5.6 | -20.0 | -7.6 | 1.8 | 39.8 | -6.8 | 58.4 | -17.4 | -39.0 | 12.2 | | |

! Այստեղ եւ հետայսու մրգերի եւ բանջարեղենի սպառողական գների փոփոխությունները ներկայացվել է են ըստ ԱՎԾ-ի կողմից հրապարակվող «Սպառողական գների ինդեքսը (գները) Հայաստանի Հանրապետությունում» պարբերականի:

## *Ծիրան*

Հետազոտության կողմից թիրախված ապրանքներից ծիրանը բացառիկ է նրանով, որ հենց նրա գների դեպքում են հանդիպում ամենամեծ տատանումները: Ընդ որում՝ ծիրանի գները տատանվում են ինչպես առանձին տարիներին, այնպես էլ նույն տարվա առանձին ամիսներին: Ըստ տարիների՝ ծիրանի գների մեծ տատանումները պայմանավորված են բերքի ծավալի (առաջարկի մեծության) փոփոխություններով: Ինչպես արդեն նշվել է, բերքի քանակի տատանումները ծիրանի դեպքում շատ կտրուկ են (5-10 անգամ), ինչն էլ պատճառ է դառնում գների համարժեք տատանումների (տես Աղյուսակ 42):

**Աղյուսակ 42 - Ծիրանի առաջարկի մեծության եւ իրացման գների համադրություն (2006-2010թթ.-ի արդյունքներով)**

| Տարի-ներ | Առաջարկի բաղադրիչները, տոննա | | | | | Իրացման գներ, դրամ/կգ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արտադ-րություն | Վերամշա-կում | Արտա-հանում | Ներմուծում | Բնակչության սպառում | Վերամշա-կողներ | Արտահա-նողներ | Միջին մանրածախ գներ |
| 2006 | 72,017 | -3,850 | -1,929.2 | +0.0 | **=66,238** | | **250-400** | **230-520** |
| 2007 | 15,681 | -337 | -904.6 | +0.9 | **=14,441** | | **600-1,000** | **540-925** |
| 2008 | 83,089 | -7,514 | -5,280.1 | +0.6 | **=70,295** | **35-50** | **220-400** | **230-340** |
| 2009 | 80,686 | -4,641 | -9,082.1 | +0.1 | **=66,963** | **35-50** | **150-350** | **300-470** |
| 2010 | ≈10,000 | -շատ քիչ | -4,626.9 | +n/a | **=≈5,000** | **400** | **500-1,200** | **700-1,350** |

Ինչ վերաբերվում է նույն տարվա առանձին ամիսներին ծիրանի գների տատանումներին, ապա դա եւս պայմանավորված է կոնկրետ ամսում շուկայում առկա ապրանքի քանակից: Սովորաբար գները բարձր են բերքահավաքի ամենասկզբում (հունիսի սկիզբ, երբ դեռ ապրանքը քիչ է) եւ ամենավերջում (օգոստոսի կեսեր, երբ արդեն ապրանքն ավարտվում է)[27]:

[27] Ծիրանի առաջին բերքը հասունանում է Արարատի մարզի Սուրենավան գյուղում՝ հունիս ամսվա սկզբին, եւ ավարտվում է Արագածոտնի եւ Կոտայքի մարզերի նախալեռնային հատվածներում՝ օգոստոս ամսվա կեսերին

Առաջարկից քանակներից ծիրանի գների կախվածությունը հաստակ երեւում է նրա գների ինդեքսից: Ստորեւ ներկայացված են 2007-2010թթ.-ի համար ծիրանի գների ինդեքսները.

**Աղյուսակ 43 - Ծիրան. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 244.9 | 252.1 | 250.1 | 253.5 | 235.6 | 357.3 | 191.1 | 158.1 | 166.0 | 169.2 | 182.5 | 172.6 |
| 2008 | 159.3 | 159.1 | 155.6 | 151.2 | 147.8 | 46.5 | 34.1 | 41.6 | 56.2 | 58.0 | 51.9 | 53.4 |
| 2009 | 56.4 | 52.6 | 52.8 | 57.2 | 66.1 | 150.0 | 93.4 | 118.7 | 91.2 | 155.6 | 170.9 | 186.9 |
| 2010 | 173.8 | 176.1 | 181.7 | 178.2 | 156.2 | 107.1 | 432.7 | 372.6 | 301.9 | 184.1 | | |

**Աղյուսակ 44 - Ծիրան. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 18.3 | 0.0 | 0.0 | 1.7 | 14.2 | 38.0 | -48.4 | 24.0 | 5.8 | 3.3 | 17.8 | 10.5 |
| 2008 | 9.2 | -0.1 | -2.2 | -1.2 | 11.6 | -56.6 | -62.2 | 51.3 | 42.9 | 6.5 | 5.4 | 13.7 |
| 2009 | 15.3 | -6.9 | -1.7 | 6.9 | 29.1 | -1.4 | -76.4 | 92.3 | 9.8 | 81.8 | 15.7 | 24.3 |
| 2010 | 7.2 | -5.6 | 1.4 | 4.9 | 13.2 | -32.4 | -4.8 | 65.6 | -11.1 | 10.9 | | |

Հետազոտված բոլոր ապրանքների մեջ ծիրանի առաջարկի եւ իրացման սեզոնայնությունը ամենակարճն է: Նրա գներն իրենց [Max] մակարդակից իջնում են [Min]-ի ուղիղ 20-25 օրվա ընթացքում, մնում են այդ դիրքում 10-15 օր եւ կրկին վերադառնում են իրենց նախկին մակարդակին՝ մեկ ամսվա ընթացքում (տես Նկար 41): Արտահանողների մոտ գների կորը նույնն է, միայն թե միջին գնի նկատմամբ ավելի քիչ շեղումներով (տես Նկար 42): Ծիրանի մանրածախ գների դինամիկան ըստ մարզերի ներկայացված է Աղյուսակ 45-ում:

**Աղյուսակ 45 - Ծիրանի մանրածախ գների դինամիկան ըստ մարզերի, 2008-2010թթ.**

| Ցուցակներ | | 2008 | | | | | | 2009 | | | | | | | 2010 | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 02.06. | 11.06. | 22.06. | 02.07. | 11.07. | 22.07. | 22.06. | 02.07. | 13.07. | 22.07. | 13.08. | 24.08. | 02.09. | 22.06. | 02.07. | 13.07. | 20.07. | 02.08. |
| Երեւան | Min | 1,000 | | | 140 | | | | 160 | | | | | 600 | | 450 | | | 1,200 |
| | Max | 1,620 | | | 310 | | | | 330 | | | | | 780 | | 1,240 | | | 2,560 |
| Արագածոտն | | | 600 | | | 100 | | | | 100 | | 500 | | | | | 700 | | |
| Արարատ | | | 500 | | | 150 | | | | 100 | | 200 | | | | | 700 | | |
| Արմավիր | | | 500 | | | 150 | | | | 70 | | 250 | | | | | 700 | | |
| Գեղարքունիք | | | 500 | | | 200 | | | | 150 | | 200 | | | | | 1,000 | | |
| Լոռի | | | 500 | | | 200 | | | | 100 | | 250 | | | | | 600 | | |
| Կոտայք | | | | 300 | | | 250 | 800 | | | 150 | | 400 | | 550 | | | 750 | |
| Շիրակ | | | | 250 | | | 250 | 1,000 | | | 100 | | 400 | | 600 | | | 800 | |
| Սյունիք | | | | 300 | | | 300 | 600 | | | 150 | | 400 | | 850 | | | 900 | |
| Վայոց Ձոր | | | | 300 | | | | 800 | | | 150 | | | | 1,000 | | | 700 | |
| Տավուշ | | | | 250 | | | 150 | 600 | | | 150 | | | | 700 | | | 700 | |
| **ՀԱՅԱՍՏԱՆ** | **Min** | **1,000** | **500** | **250** | **140** | **100** | **150** | **600** | **160** | **70** | **100** | **200** | **400** | **600** | **550** | **450** | **600** | **700** | **1,200** |
| | **Max** | **1,620** | **600** | **300** | **310** | **200** | **300** | **1,000** | **330** | **150** | **150** | **500** | **400** | **780** | **1,000** | **1,240** | **1,000** | **900** | **2,560** |

**Նկար 41 - Ծիրանի առաջարկի սեզոնայնության եւ մանրածախ գների համադրություն (2009թ.-ի տվյալների հիման վրա)**




**Նկար 42 - Ծիրանի առաջարկի սեզոնայնության եւ արտահանողների մթերման գների համադրություն (2009թ.-ի տվյալների հիման վրա)**



## *Դեղձ, սալոր, կեռաս*

**Աղյուսակ 46 - Դեղձ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 281.1 | 287.5 | 284.8 | 289.2 | 271.8 | 193.1 | 185.9 | 136.4 | 91.0 | 92.4 | 78.6 | 77.6 |
| 2008 | 71.6 | 72.0 | 70.6 | 68.6 | 66.4 | 92.0 | 62.8 | 86.2 | 107.7 | 105.0 | 122.2 | 103.3 |
| 2009 | 109.1 | 102.2 | 102.8 | 110.3 | 129.1 | 94.5 | 118.6 | 95.5 | 97.7 | 99.5 | 169.2 | 186.3 |
| 2010 | 173.0 | 174.9 | 180.1 | 177.8 | 156.3 | 139.6 | 148.8 | 190.8 | 252.0 | 297.5 | | |

**Աղյուսակ 47 - Դեղձ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 18.2 | -0.6 | -0.2 | 1.9 | 15.5 | 0.8 | -11.6 | -51.7 | -36.4 | 24.4 | 24.6 | 32.6 |
| 2008 | 9.0 | 0.0 | -2.2 | -1.0 | 11.9 | 39.6 | -39.7 | -33.8 | -20.5 | 21.3 | 44.9 | 12.1 |
| 2009 | 15.1 | -6.2 | -1.6 | 6.2 | 30.9 | 2.2 | -24.3 | -46.7 | -18.6 | 23.5 | 146.5 | 23.5 |
| 2010 | 6.9 | -5.2 | 1.4 | 4.8 | 15.1 | -8.7 | -19.3 | -31.7 | 7.5 | 45.8 | | |

**Աղյուսակ 48 - Սալոր. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 236.3 | 242.3 | 240.6 | 245.1 | 230.6 | 135.4 | 124.0 | 92.3 | 119.2 | 127.1 | 162.9 | 156.7 |
| 2008 | 146.1 | 146.6 | 143.0 | 138.3 | 132.0 | 76.0 | 67.7 | 71.6 | 67.3 | 66.0 | 50.0 | 50.3 |
| 2009 | 52.8 | 49.6 | 50.0 | 53.7 | 63.7 | 141.0 | 98.3 | 102.1 | 98.9 | 99.3 | 105.0 | 113.2 |
| 2010 | 105.2 | 106.7 | 109.9 | 108.6 | 98.1 | 114.1 | 310.8 | 323.1 | 263.6 | 280.1 | | |

**Աղյուսակ 49 - Սալոր. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 17.4 | -0.4 | 0.1 | 2.2 | 15.6 | 0.8 | -21.9 | -32.3 | 10.6 | 23.3 | 40.3 | 11.2 |
| 2008 | 9.5 | 0.0 | -2.4 | -1.2 | 10.4 | -41.9 | -30.5 | -28.4 | 4.0 | 20.8 | 6.3 | 11.8 |
| 2009 | 15.0 | -6.1 | -1.6 | 6.1 | 31.0 | 28.6 | -51.5 | -25.7 | 0.8 | 21.2 | 12.5 | 20.4 |
| 2010 | 6.9 | -4.8 | 1.4 | 4.9 | 18.4 | 49.6 | 31.9 | -22.7 | -17.7 | 28.8 | | |

**Աղյուսակ 50 - Կեռաս. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 96.9 | 99.1 | 98.5 | 100.3 | 96.0 | 170.5 | 198.4 | 190.0 | 156.4 | 157.8 | 170.7 | 163.6 |
| 2008 | 151.2 | 152.1 | 149.0 | 144.4 | 138.0 | 86.6 | 51.2 | 54.9 | 68.9 | 71.4 | 63.8 | 64.9 |
| 2009 | 68.4 | 64.3 | 64.5 | 69.0 | 79.4 | 144.9 | 118.6 | 110.9 | 114.7 | 107.0 | 114.1 | 122.2 |
| 2010 | 113.7 | 115.6 | 119.1 | 117.5 | 107.8 | 93.9 | 165.7 | 204.6 | 183.1 | 205.0 | | |

**Աղյուսակ 51 - Կեռաս. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 17.5 | -0.6 | 0.1 | 2.3 | 17.6 | 18.9 | -0.7 | -3.4 | -23.4 | 2.8 | 17.9 | 10.1 |
| 2008 | 8.7 | 0.0 | -2.0 | -0.9 | 12.4 | -25.4 | -41.3 | 3.6 | -4.0 | 6.5 | 5.4 | 11.9 |
| 2009 | 14.6 | -6.1 | -1.6 | 6.1 | 29.3 | 36.0 | -51.9 | -3.1 | -0.7 | -0.7 | 12.5 | 19.8 |
| 2010 | 6.6 | -4.5 | 1.3 | 4.7 | 18.6 | 18.4 | -15.1 | 19.6 | -11.2 | 11.3 | | |

### Աղյուսակ 52 - Դեղձի առաջարկի մեծության եւ իրացման գների համադրություն (2007-2010թթ.-ի արդյունքներով)

| Տարի-ներ | Առաջարկի բաղադրիչները, տոննա | | | | | Իրացման գները (դրամ/կգ) եւ դրանց արձանագրման պահերը | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արտադ-րություն | Վերամշա-կում | Արտա-հանում | Ներմու-ծում | Բնակչության սպառում | 02.07. | 13.07. | 20.07. | 02.08. | 11.08. | 23.08. | 01.09. | 10.09. | 22.09. | 12.10. | 02.11. |
| 2007 | 63,868 | -4,766 | -314.5 | +10.2 | **=58,798** | | | 500-900 | | | | | 140-230 | | | |
| 2008 | 41,651 | -6,953 | -271.2 | +18.0 | **=34,445** | 520-1,160 | 300-400 | 350-450 | | 200-525 | | | 150-250 | 200-300 | 200-350 | |
| 2009 | 57,883 | -1,928 | -654.2 | +0.0 | **=55,300** | 780-1,340 | | 300-400 | | 200-300 | 200-300 | 160-290 | 100-250 | 250-300 | 150-300 | 190-560 |
| 2010 | ≈20,000 | -շատ քիչ | -194.0 | +n/a | **=≈20,000** | 1,140-1,600 | | | 460-700 | 400-600 | 300-500 | 340-610 | 400-600 | 400-700 | 800-1,000 | 600-1,100 |

### Աղյուսակ 53 - Սալորի առաջարկի մեծության եւ իրացման գների համադրություն (2007-2010թթ.-ի արդյունքներով)

| Տարի-ներ | Առաջարկի բաղադրիչները, տոննա | | | | | Իրացման գները (դրամ/կգ) եւ դրանց արձանագրման պահերը | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արտադ-րություն | Վերամշա-կում | Արտա-հանում | Ներմու-ծում | Բնակչության սպառում | 02.07. | 13.07. | 22.07. | 02.08. | 13.08. | 24.08. | 02.09. | 12.09. | 22.09. | 02.10. | 13.10. |
| 2007 | 11,226 | -525 | -213.5 | +4.5 | **=10,492** | | | | | | | | | | | |
| 2008 | 12,077 | -579 | -269.8 | +3.8 | **=11,231** | 190-300 | 170-250 | 150-250 | | | | | 200-250 | 100-200 | | 200-350 |
| 2009 | 10,344 | -550 | -314.4 | +1.2 | **=9,481** | 280-390 | | | 150-250 | 150-250 | 200-300 | 170-300 | 120-200 | 200-400 | 220-300 | |
| 2010 | n/a | -շատ քիչ | -351.0 | +n/a | **=n/a** | 660-940 | | | 560-740 | 400-600 | 300-500 | 310-520 | 320-500 | 300-600 | | |

### Աղյուսակ 54 - Կեռասի առաջարկի մեծության եւ իրացման գների համադրություն (2007-2010թթ.-ի արդյունքներով)

| Տարի-ներ | Առաջարկի բաղադրիչները, տոննա | | | | | Իրացման գները (դրամ/կգ) եւ դրանց արձանագրման պահերը | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Արտադ-րություն | Վերամշա-կում | Արտա-հանում | Ներմու-ծում | Բնակչության սպառում | 22.05. | 02.06. | 11.06. | 22.06. | 02.07. | 11.07. | 22.07. | 02.08 |
| 2007 | 3,901 | -220 | -95.5 | +0.1 | **=3,586** | | | | | | | | |
| 2008 | 6,598 | -450 | -200.8 | +0.0 | **=5,947** | 1,000-1,500 | 660-1,280 | 450-500 | 400-600 | 280-540 | 250-400 | 250-350 | |
| 2009 | 7,682 | -502 | -599.3 | +0.0 | **=6,582** | | 560-920 | 470-900 | 500-600 | 310-470 | 200-450 | 200-400 | |
| 2010 | n/a | -շատ քիչ | -267.0 | +n/a | **=n/a** | | 600-880 | 450-900 | 500-600 | 600-900 | 700-1,000 | 600-1,100 | 1,080-1,400 |

## *Խնձոր, տանձ*

**Աղյուսակ 55 - Խնձորի առաջարկի մեծության եւ մանրածախ գների համադրություն (2007-2009թթ.-ի արդյունքներով)**

| Տարիներ | Առաջարկի բաղադրիչները, տոննա | | | | | Մանրածախ վաճառքի միջին գինը, դրամ/կգ |
|---|---|---|---|---|---|---|
| | Արտադրություն | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Բնակչության սպառում | |
| 2007 | 111,836 | -4,208 | -0.0 | +169.9 | **=107,798** | **460** |
| 2008 | 117,199 | -2,646 | -34.0 | +83.5 | **=114,603** | **373** |
| 2009 | 120,844 | -2,107 | -2.3 | +148.6 | **=118,883** | **368** |

**Աղյուսակ 56 - Խնձոր. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 112.0 | 114.0 | 113.3 | 117.6 | 135.0 | 144.6 | 119.0 | 107.7 | 101.7 | 101.8 | 99.2 | 98.6 |
| 2008 | 94.1 | 93.7 | 91.3 | 80.1 | 66.3 | 62.1 | 60.1 | 69.2 | 88.6 | 105.8 | 100.5 | 94.3 |
| 2009 | 95.0 | 85.6 | 83.0 | 98.0 | 116.6 | 122.5 | 108.5 | 108.2 | 97.2 | 87.2 | 90.2 | 97.7 |
| 2010 | 101.4 | 105.0 | 111.7 | 106.1 | 105.3 | 104.8 | 160.4 | 177.3 | 164.0 | 164.7 | | |

**Աղյուսակ 57 - Խնձոր. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 21.2 | -0.8 | -3.0 | 0.9 | 16.8 | 14.4 | -14.3 | -20.9 | -20.8 | -4.9 | 9.7 | 11.9 |
| 2008 | 15.7 | -1.2 | -5.5 | -11.4 | -3.4 | 7.2 | -17.0 | -8.9 | 1.4 | 13.6 | 4.1 | 5.0 |
| 2009 | 16.5 | -11.0 | -8.4 | 4.6 | 14.9 | 12.7 | -26.5 | -9.1 | -8.9 | 1.8 | 7.8 | 13.7 |
| 2010 | 21.0 | -7.9 | -2.5 | -0.6 | 14.0 | 12.1 | 12.6 | 0.4 | -15.7 | 2.3 | | |

**Աղյուսակ 58 - Տանձի առաջարկի մեծության եւ մանրածախ գների համադրություն (2007-2009թթ.-ի արդյունքներով)**

| Տարիներ | Առաջարկի բաղադրիչները, տոննա | | | | | Մանրածախ վաճառքի միջին գինը, դրամ/կգ |
|---|---|---|---|---|---|---|
| | Արտադրություն | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Բնակչության սպառում | |
| 2007 | 27,105 | - | 0.0 | +27.3 | **=27,133** | **606** |
| 2008 | 29,322 | - | -0.1 | +49.1 | **=29,371** | **684** |
| 2009 | 28,247 | - | -0.6 | +81.3 | **=28,328** | **828** |

**Աղյուսակ 59 - Տանձ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 132.1 | 132.7 | 126.9 | 133.6 | 142.3 | 141.0 | 122.1 | 125.7 | 80.6 | 95.5 | 86.7 | 87.9 |
| 2008 | 109.4 | 107.8 | 97.7 | 92.2 | 98.4 | 123.2 | 91.3 | 86.0 | 135.3 | 150.5 | 158.0 | 141.4 |
| 2009 | 120.9 | 123.5 | 138.9 | 141.9 | 168.7 | 131.9 | 150.4 | 113.6 | 83.2 | 69.8 | 72.8 | 86.1 |
| 2010 | 82.2 | 80.8 | 81.3 | 82.1 | 83.1 | 92.0 | 99.3 | 147.5 | 156.0 | 164.6 | | |

**Աղյուսակ 60 - Տանձ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 20.5 | 2.1 | -4.3 | 5.5 | 10.1 | 2.2 | 5.2 | -16.0 | -38.1 | -2.9 | -0.9 | 19.4 |
| 2008 | 50.1 | 0.5 | -13.2 | -0.4 | 17.5 | 28.0 | -22.0 | -20.9 | -2.7 | 8.1 | 4.1 | 6.8 |
| 2009 | 28.3 | 2.7 | -2.4 | 1.7 | 39.6 | 0.1 | -11.1 | -40.2 | -28.7 | -9.4 | 8.5 | 26.4 |
| 2010 | 22.5 | 1.0 | -1.8 | 2.8 | 41.4 | 10.7 | -4.0 | -11.2 | -24.6 | -4.4 | | |

**Նկար 43 - Խնձորի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ.**




**Նկար 44 - Տանձի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ.**



## *Կարտոֆիլ*

**Նկար 45 - Կարտոֆիլի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ.**




**Աղյուսակ 61 - Կարտոֆիլ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 160.6 | 145.0 | 140.7 | 161.1 | 158.9 | 140.7 | 103.1 | 85.5 | 87.4 | 91.3 | 87.8 | 86.2 |
| 2008 | 80.9 | 80.6 | 84.4 | 68.3 | 43.6 | 47.4 | 60.4 | 61.0 | 64.3 | 75.9 | 74.6 | 67.2 |
| 2009 | 66.3 | 60.3 | 51.2 | 51.6 | 61.0 | 92.4 | 90.0 | 104.9 | 113.6 | 94.1 | 83.7 | 82.4 |
| 2010 | 83.3 | 89.8 | 99.9 | 109.2 | 171.3 | 136.5 | 189.5 | 261.2 | 203.9 | 165.1 | | |

**Աղյուսակ 62 - Կարտոֆիլ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 10.8 | 2.6 | -3.2 | 7.7 | 24.3 | -2.4 | -40.3 | -13.2 | -1.2 | 1.5 | 8.5 | 6.4 |
| 2008 | 4.0 | 2.2 | 1.3 | -12.9 | -20.6 | 6.0 | -23.9 | -12.5 | 4.3 | 19.8 | 6.6 | -4.1 |
| 2009 | 2.6 | -7.1 | -13.9 | -12.2 | -6.2 | 60.6 | -25.8 | 2.0 | 13.0 | -0.7 | -5.2 | -5.7 |
| 2010 | 3.7 | 0.1 | -4.2 | -4.0 | 47.2 | 27.9 | 3.0 | 40.6 | -11.8 | -19.6 | | |

***Լոլիկ***

Լոլիկի առաջարկը ապահովվում է ամբողջ տարվա ընթացքում: Հոկտեմբերի վերջին, երբ կրճատվում եւ սպառվում բաց գրունտի լոլիկը, շուկա է մտնում փակ գրունտի վրա արտադրված ներմուծված լոլիկը, որի գները տատանվում են 900-1,200 դրամ/կգ-ի սահմաններում: Ներմուծված լոլիկը շուկայում իր տեղը զիջում է, երբ հասունանում է արդեն Հայաստանում փակ գրունտի վրա արտադրվածը: Տեղական ջերմոցային լոլիկը շուկա է մտնում 800-1,000 դրամ/կգ գնով, որն աստիճանաբար նվազում է եւ բաց գրունտի լոլիկի հասունանալու պահին արժենում է արդեն 400-500 դրամ/կգ: Այնուհետեւ շուկան «անցնում է» բաց գրունտի լոլիկին, որն անհամեմատ էժան է (տես Նկար 46): Այս ցիկլը կրկնվում է անընդհատ, եւ ուշագրավն այն է, որ լոլիկի գները նշված սահմաններում արդեն երկար տարիներ մնում են գրեթե անփոփոխ:

**Նկար 46 - Լոլիկի միջին մանրածախ գների դինամիկան 2008-2010թթ.**




Զարմանալի կայունություն են դրսեւորում նաեւ վերամշակողների կողմից առաջարկված գները: Արդեն մեկ տասնամյակ կլինի, որ դրանք գտնվում են 25-35 դրամ/կգ-ի սահմաններում: Գների այդպիսի կայունությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- Վերամշակողները հակված չեն լոլիկի համար վճարել ավելի թանկ գին: Վերամշակող ձեռնարկություններում լոլիկի մեծ մասը վերամշակվում եւ դառնում է ոչ թե վերջնական արտադրանք, այլ կիսաֆաբրիկատ՝ մեծ տարաների (պլաստիկ տակառների) մեջ տարավորված լոլիկի մածուկ: Այն նախատեսված է հիմնականում այլ երկրներում լոլիկից տարբեր արտադրանք թողարկող վերամշակող ձեռնարկությունների համար: Սակայն վերջին տարիներին այդ արտադրանքի իրացումն ուղեկցվում է դժվարություններով: Հիմնական դեպքերում վերամշակող ձեռնարկությունները տարին փակում են ապրանքային մեծ պաշարներով: Այս հանգամանքը վերամշակողներին ստիպում է կրճատել լոլիկի մթերման քանակը, ինչն էլ

նպաստում է վերամշակվող լոլիկի գների ցածր մակարդակի պահպանմանը: 2007-2009թթ.-ին վերամշակողների կողմից մթերվող լոլիկի քանակները կրճատվել են 45%-ով:

- Իրացման դժվարությունները լոլիկի արտադրողներին ստիպում է կրճատել ցանքատարածքները եւ հրաժարվել լոլիկի աճեցումից: Այդ պատճառով է, որ միայն 2007-2009թթ..-ին լոլիկի արտադրության քանակները նվազել են 13%-ով (տես Աղյուսակ 63): Դա տեղի է ունեցել հիմնականում ի հաշիվ վերամշակողների քանակների: Բնակչության սպառման համար նախատեսված ծավալները քիչ են նվազել (7%), ինչի արդյունքում մանրածախ գների բացարձակ մեծությունները բաց գրունտի բերքի սեզոնին (օգոստոս-հեկտեմբեր) տատանվում են 100-150 դրամ/կգ-ի սահմաններում:

**Աղյուսակ 63 - Բաց գրունտի վրա աճեցված լոլիկի առաջարկի մեծության եւ մանրածախ գների համադրություն (2007-2009թթ.-ի արդյունքներով)**

| Տարիներ | Առաջարկի բաղադրիչները, տոննա | | | | | Բերքի սեզոնին մանրածախ վաճառքի միջին գինը, դրամ/կգ |
|---|---|---|---|---|---|---|
| | Արտադրություն | Վերամշակում | Արտահանում | Ներմուծում | Բնակչության սպառում | |
| 2007 | 321,471 | -53,954 | 0.0 | +175.4 | **=267,693** | **89** |
| 2008 | 293,784 | -35,481 | -7.2 | +93.8 | **=258,390** | **104** |
| 2009 | 278,582 | -29,749 | -8.4 | +138.3 | **=248,963** | **131** |

**Աղյուսակ 64 - Լոլիկ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 140.9 | 160.3 | 133.0 | 104.9 | 87.2 | 101.6 | 81.3 | 86.9 | 98.6 | 89.2 | 88.0 | 84.1 |
| 2008 | 100.4 | 93.3 | 102.9 | 109.6 | 106.8 | 104.3 | 93.2 | 129.9 | 133.6 | 151.4 | 104.3 | 99.2 |
| 2009 | 83.1 | 79.1 | 79.7 | 90.6 | 80.0 | 91.0 | 124.9 | 114.7 | 99.9 | 87.7 | 86.9 | 92.2 |
| 2010 | 99.2 | 100.6 | 114.5 | 112.1 | 109.0 | 93.8 | 113.4 | 157.9 | 118.9 | 103.3 | | |

**Աղյուսակ 65 - Լոլիկ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 74.9 | 1.1 | -15.6 | -17.1 | 0.7 | -37.2 | -60.5 | -58.7 | -4.8 | 49.4 | 130.8 | 100.8 |
| 2008 | 108.9 | -6.1 | -7.0 | -11.7 | -1.8 | -38.7 | -64.7 | -42.4 | -2.0 | 69.3 | 58.9 | 91.1 |
| 2009 | 74.9 | -10.6 | -6.2 | 0.3 | -13.3 | -30.3 | -51.6 | -47.1 | -14.7 | 48.7 | 57.5 | 102.7 |
| 2010 | 88.1 | -9.3 | 6.8 | -1.8 | -15.7 | -40.0 | -41.5 | -26.3 | -35.7 | 29.1 | | |

### *Վարունգ*

Վարունգի մանրածախ գների կորը գրեթե նույնությամբ կրկնում է լոլիկի գների կորին: Դա բնական է, քանի որ վարունգը լոլիկի նման աճեցվում է ինչպես բաց, այնպես էլ փակ գրունտի վրա: Դրա հաշվին հնարավոր է լինում ամբողջ տարվա ընթացքում ապահովել կայուն առաջարկ: Գների տատանման՝ վերելքի եւ անկման դինամիկան (տես Նկար 47) ամբողջությամբ պայմանավորված է «փակ գրունտի վարունգ-բաց գրունտի վարունգ» ապրանքների հերթականությամբ: Համապատասխանաբար այն ժամանակահատվածում, երբ շուկայում առաջարկն ապահովվում է փակ գրունտի վարունգի հաշվին, գները բարձր են, եւ հակառակը:

**Նկար 47 - Վարունգի միջին մանրածախ գների դինամիկան 2008-2010թթ.**




**Աղյուսակ 66 - Վարունգ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 91.3 | 124.5 | 115.5 | 103.9 | 92.3 | 102.6 | 81.5 | 106.0 | 131.1 | 117.2 | 128.9 | 128.1 |
| 2008 | 109.5 | 102.5 | 102.6 | 106.6 | 86.2 | 130.1 | 109.7 | 100.9 | 84.9 | 113.1 | 107.4 | 79.6 |
| 2009 | 84.2 | 75.0 | 86.2 | 94.4 | 108.3 | 92.6 | 131.9 | 164.5 | 139.2 | 112.1 | 106.2 | 133.0 |
| 2010 | 114.7 | 121.7 | 123.1 | 115.5 | 98.1 | 98.3 | 134.4 | 85.5 | 113.9 | 124.1 | | |

**Աղյուսակ 67 - Վարունգ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 75.9 | -1.0 | -14.3 | -24.1 | -51.4 | -46.8 | -23.3 | 18.3 | 20.7 | 22.3 | 71.2 | 91.0 |
| 2008 | 50.3 | -7.3 | -14.2 | -21.2 | -60.7 | -19.7 | -35.4 | 8.8 | 1.6 | 63.0 | 62.6 | 41.5 |
| 2009 | 58.9 | -17.4 | -1.4 | -13.7 | -55.0 | -31.3 | -7.9 | 35.6 | -14.0 | 31.2 | 54.1 | 77.1 |
| 2010 | 37.1 | -12.4 | -0.2 | -19.0 | -61.7 | -31.1 | 25.8 | -13.7 | 14.6 | 43.0 | | |

## *Կաղամբ*

**Նկար 48 - Կաղամբի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ.**




**Աղյուսակ 68 - Կաղամբ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 116.6 | 96.1 | 108.7 | 128.3 | 98.9 | 71.6 | 40.1 | 41.8 | 60.3 | 80.6 | 90.0 | 88.6 |
| 2008 | 92.4 | 116.9 | 103.9 | 87.6 | 60.3 | 160.3 | 126.2 | 109.7 | 115.5 | 126.3 | 142.5 | 188.0 |
| 2009 | 216.8 | 140.0 | 159.0 | 191.6 | 243.5 | 76.8 | 71.3 | 92.1 | 101.9 | 105.4 | 96.2 | 64.8 |
| 2010 | 49.7 | 55.1 | 54.4 | 51.1 | 58.0 | 122.2 | 328.5 | 367.1 | 206.0 | 106.1 | | |

**Աղյուսակ 69 - Կաղամբ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 11.6 | 6.6 | -1.5 | 3.5 | 33.9 | -31.6 | -28.2 | -5.5 | 2.1 | 14.2 | -5.1 | 6.2 |
| 2008 | 16.4 | 34.8 | -12.5 | -12.7 | -7.8 | 81.8 | -43.4 | -17.9 | 7.5 | 24.9 | 7.1 | 40.0 |
| 2009 | 34.2 | -12.9 | -0.6 | 5.2 | 17.2 | -42.7 | -47.4 | 6.0 | 19.0 | 29.2 | -2.3 | -5.7 |
| 2010 | 2.9 | -3.4 | -1.8 | -1.3 | 33.2 | 20.7 | 41.3 | 18.4 | -33.2 | -33.5 | | |

### *Պղպեղ*

Լոլիկի եւ վարունգի նման, պղպեղի առաջարկը իր փակ գրունտի վրա աճեցման հնարավորության հաշվին ապահովվում է ամբողջ տարվա ընթացքում: Գների տատանումներն ունեն նույն առանձնահատկությունները. փակ գրունտի պղպեղն ավելի թանկ է, քան բաց գրունտինը: Այն այնքան թանկ է, որ շուկայում ընդունված է ջերմոցային պղպեղի գինն արտահայտել այլ չափի միավորով՝ հատով: Այդ առանձնահատկության պատճառով պղպեղի մանրածախ գների դինամիկան ներկայացվել է՝ չափի միավոր ունենալով. ա) փակ գրունտի պղպեղի դեպքում՝ հատը, եւ բ) բաց գրունտի պղպեղի դեպքում՝ կգ-ը (տես Նկար 49): Համադրելու համար կարելի է ընդունել, որ փակ գրունտի 4-5 հատ պղպեղը հավասար է 1 կգ-ի:

**Նկար 49 - Պղպեղի միջին մանրածախ գների դինամիկան 2008-2010թթ.**




**Աղյուսակ 70 - Պղպեղ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 120.5 | 101.3 | 93.4 | 94.7 | 98.7 | 146.5 | 141.7 | 103.9 | 105.8 | 117.7 | 135.3 | 116.9 |
| 2008 | 115.5 | 136.7 | 143.4 | 130.0 | 116.9 | 96.4 | 75.0 | 90.0 | 88.3 | 86.3 | 81.4 | 102.6 |
| 2009 | 63.0 | 45.2 | 78.1 | 95.7 | 104.3 | 110.8 | 106.6 | 125.9 | 126.9 | 104.7 | 117.2 | 151.9 |
| 2010 | 207.1 | 230.8 | 132.0 | 115.3 | 109.0 | 110.2 | 119.7 | 112.0 | 108.9 | 137.7 | | |

**Աղյուսակ 71 - Պղպեղ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 114.1 | 8.6 | -5.6 | 0.3 | 18.6 | -35.5 | -48.0 | -65.9 | -4.9 | 57.6 | 53.3 | 70.5 |
| 2008 | 111.6 | 28.5 | -0.9 | -9.0 | 6.6 | -46.8 | -59.5 | -59.1 | -6.7 | 54.1 | 44.5 | 114.9 |
| 2009 | 30.0 | -7.9 | 71.4 | 11.4 | 16.2 | -43.6 | -61.0 | -51.7 | -6.0 | 27.2 | 61.7 | 178.6 |
| 2010 | 77.3 | 2.6 | -1.9 | -2.7 | 9.9 | -43.0 | -57.7 | -54.9 | -8.6 | 60.9 | | |

### *Սմբուկ*

Հայաստանի շուկայում թարմ սմբուկի առաջարկն ունի սեզոնային բնույթ: Այն ընդհատվում է դեկտեմբեր-մասիս ժամանակամիջոցում: Առաջին սմբուկը, որ հայտնվում է շուկայում, դա ներմուծվածն է: Ներմուծված սմբուկի իրացումը նախորդում է տեղական սմբուկի հասունացման պահին եւ ժամանակագրորեն համընկնում է մայիս-հունիս ամիսներին: Այդ ժամանակ սմբուկի գները ամենաբարձրն են՝ մոտ 1,200-1,300 դրամ/կգ: Հուլիսի սկզբին, երբ շուկա է դուրս գալիս տեղական սմբուկը, գներն սկսում են կտրուկ նվազել: Դրանք կրկին թանկանում են արդեն բերքի սեզոնի վերջում՝ հոկտեմբերի վերջերին: Վերամշակողների կողմից սմբուկը մթերվում է բերքահավաքի պիկին՝ սեպտեմբերին, երբ գները գտնվում են ստորին մակարդակի վրա: Մթերման գները տատանվում են 60-70 դրամ/կգ-ի սահմաններում:

**Նկար 50 - Սմբուկի միջին մանրածախ գների դինամիկան 2008-2010թթ.**




**Աղյուսակ 72 - Սմբուկ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 90.2 | 102.8 | 93.1 | 89.8 | 88.8 | 95.4 | 123.9 | 95.2 | 90.4 | 86.9 | 93.6 | 84.9 |
| 2008 | 149.3 | 143.4 | 139.5 | 133.6 | 138.7 | 99.7 | 94.1 | 107.6 | 109.0 | 100.0 | 89.4 | 122.4 |
| 2009 | 88.4 | 72.9 | 124.9 | 132.1 | 84.1 | 100.6 | 106.9 | 117.1 | 131.4 | 134.2 | 136.4 | 163.3 |
| 2010 | 108.6 | 120.9 | 84.8 | 92.0 | 112.7 | 102.0 | 95.3 | 85.1 | 67.3 | 64.3 | | |

**Աղյուսակ 73 - Սմբուկ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 43.4 | 16.5 | -6.1 | -0.3 | 25.2 | 4.4 | -50.0 | -75.9 | -10.8 | 32.3 | 47.2 | 98.2 |
| 2008 | 152.2 | 12.0 | -8.7 | -4.6 | 30.0 | -24.9 | -52.8 | -72.4 | -9.6 | 21.4 | 31.6 | 171.5 |
| 2009 | 82.3 | -7.7 | 56.5 | 0.9 | -17.2 | -10.3 | -49.8 | -69.8 | 1.4 | 23.9 | 33.8 | 225.1 |
| 2010 | 21.2 | 2.7 | 9.8 | 9.5 | 1.4 | -18.8 | -53.1 | -73.1 | -19.8 | 18.4 | | |

## *Գլուխ սոխ*

**Նկար 51 - Գլուխ սոխի միջին մանրածախ գների դինամիկան 2006-2010թթ.**




**Աղյուսակ 74 - Գլուխ սոխ. սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 90.5 | 103.5 | 101.9 | 106.6 | 109.4 | 90.9 | 88.0 | 91.1 | 105.5 | 105.6 | 96.1 | 95.1 |
| 2008 | 91.8 | 85.0 | 86.9 | 88.0 | 86.4 | 103.6 | 126.3 | 121.4 | 118.3 | 108.4 | 87.4 | 76.7 |
| 2009 | 80.1 | 75.7 | 77.7 | 92.2 | 124.4 | 114.6 | 98.5 | 103.1 | 100.4 | 116.7 | 189.4 | 191.4 |
| 2010 | 182.7 | 193.2 | 207.0 | 175.0 | 121.5 | 105.1 | 108.8 | 105.3 | 113.3 | 129.6 | | |

**Աղյուսակ 75 - Գլուխ սոխ. սպառողական գների ինդեքսը նախորդ ամսվա նկատմամբ**

| | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2007 | 23.7 | 9.0 | -5.3 | -0.3 | 3.4 | -18.6 | -14.6 | -3.8 | -5.8 | -6.8 | 3.1 | 19.3 |
| 2008 | 19.4 | 0.9 | -3.1 | 0.9 | 1.6 | -2.3 | 4.0 | -7.5 | -8.2 | -14.5 | -16.9 | 4.7 |
| 2009 | 24.7 | -4.8 | -0.5 | 19.8 | 37.1 | -10.0 | -10.6 | -3.1 | -10.7 | -0.6 | 34.9 | 5.8 |
| 2010 | 19.1 | 0.7 | 6.6 | 1.2 | -4.8 | -22.1 | -7.5 | -6.3 | -3.9 | 13.7 | | |

# 6 ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## 6.1 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՍԽԱԼԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մրգերի եւ բանջարեղենի արտահանման ծավալների գնահատելը այնքան էլ կոռեկտ հարցադրում չէ, քանի որ գործնականում անհնար է հանդես գալ միանշանակ պնդումներով եւ դատողություններով: Պատճառն այն է, որ մրգերի եւ բանջարեղենի արտահանման գործընթացի վրա ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, որոնց մի մասի ազդեցությունը գործնականում անհնար է կանխատեսել: Այդպիսի գործոնների քանակը եւ դրա պատճառով գնահատականների հնարավոր սցենարները այնքան շատ են, որ մեզ այլ բան չի մնում, քան հանդես գալ գնահատականներով՝ անկանխատեսելի փոփոխական գործոնների համար ընդունելով մի որեւէ կոնկրետ սցենար: Նախքան արտահանման գնահատմանն անցնելը, սահմանենք այն գործոնները, որոնք մենք համարում ենք անկանխատեսելի:

- **Բնակլիմայական պայմանները**

Տնտեսության բոլոր ոլորտների մեջ բնակլիմայական պայմանների նկատմամբ ամենազգայուն ոլորտը գյուղատնտեսությունն է: Դա առավել ընդգծված է բուսաբուծության բնագավառում: Վերջին 10-15 տարիներին առավել հաճախ դիտվող կլիմայական կատակլիզմները իսկայական ազդեցություն են թողնում Հայաստանում հատկապես մրգերի արտադրության քանակների վրա: Քանի որ Հայաստանում մրգերի եւ բանջարեղենի աճեցումն աչքի է ընկնում մեծ կենտրոնացվածությամբ, ուստի ցրտահարությունները, նորմայից բարձր տեղումների քանակները կամ երաշտը կարող են ոչնչացնել սպասվող բերքի մինչեւ 80%-ը: Կլիմայական կտրուկ տատանումների նկատմամբ առավել զգայուն են ծիրանը եւ դեղձը: Այս մրգերի ցրտահարությունը 3-4 անգամ կարող է կրճատել Հայաստանի մրգերի արտահանման քանակները: Վերջին 10 տարվա մեջ այդպես եղել է 3 անգամ՝ երեք տարին մեկ անգամ հաճախականությամբ: Չնայած մասնագետներն այս երեւույթը չեն համարում օրինաչափ, սակայն մենք կարծում ենք, որ հատկապես ծիրանի դեպքում անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով բերքի քանակի կտրուկ անկումներ կլինեն նաեւ առաջիկա տարիներին. ըստ նախադեպի՝ օրինակ 2013թ.-ին: Հաշվարկներում դա այդպես էլ ընդունվել է: Իսկ մյուս մրգերի դեպքում մենք զերծ ենք մնացել կլիմայի կանխատեսումներից եւ առաջիկա 3-4 տարիները ընդունել ենք որպես միջին բարենպաստ տարիներ:

- **Գնաճի մակարդակը**

Գնաճի մակարդակը մեծ եւ ուղղակի ազդեցություն ունի մրգերի եւ բանջարեղենի գների վրա: Արտադրողների համար կարեւոր ապրանքների (վառելիք, այգիների եւ ցանքատարածությունների խնամքի օժանդակ նյութեր, առաջին անհրաժեշտության պարենամթերք) գների թանկացումը բարձրացնում է մրգերի եւ բանջարեղենի ինքնարժեքը եւ բացասաբար է ազդում արտադրող տնտեսությունների գնողունակության վրա: Այդ երեւույթները անխուսափելիորեն թանկացնում են նաեւ մրգերի եւ բանջարեղենի գները: **Գալիք տարիներին գնաճի մակարդակի կանխատեսումը մենք համարել ենք անհնար**: Համաշխարհային տնտեսության զարգացումը չի դրսեւորում կայունության, հատկապես այս հետճգնաժամային ժամանակահատվածում: Ուստի մրգերի եւ բանջարեղենի արտահանման կանխատեսումներում կարելի է հիմք ընդունել **գնաճի պայմանական մեծություն՝ 5%**: Դա 2002-2010թթ.-ի համար մոտավոր միջին մեծություն է, սակայն առաջիկա տարիների համար նրա շեղումը կարող է լինել շատ մեծ:

- **Տարադրամի փոխարժեք**

Ապրանքների արտահանման տեսանկյունից տարադրամի փոխարժեքը շատ կարեւոր գործոն է: Դրամի թուլացումը (արժեզրկումը) կարող է խթանել արտահանման քանակները, եւ

հակառակը՝ դրամի ուժեղացումը բացասաբար կարող է անդրադառնալ արտահանման վրա: Սակայն հաշվի առնելով դրամի փոխարժեքի «անկայուն պահվածքը» (կտրուկ տատանումները), ինչպես նաեւ այն, որ դրամի փոխարժեքը դեռեւս օգտագործվում է որպես գնաճի զսպման գործիք (ըստ փորձագիտական կարծիքների), ուստի խիստ դժվար է հանդես գալ դրամի փոխարժեքի կանխատեսման շատ թե քիչ հիմնավորված դատողություններով: Մրգերի եւ բանջարեղենի **արտահանման կանխատեսումներում մենք դրամի փոխարժեքի հնարավոր տատանումները հաշվի չենք առել՝ այն համարվել է պայմանականորեն կայուն**:

## 6.2 ԱՌԱՋԻԿԱ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՄՐԳԵՐԻ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Առաջիկա տարիներին մրգերի եւ բանջարեղենի արտահանման ծավալների գնահատման համար մենք հիմնվել ենք երկու մոտեցումների վրա. ա) փորձագիտական գնահատականների վրա, եւ բ) արտահանման կանխատեսման/գնահատման էկոնոմետրիկ մոդելների արդյունքների վրա: Դրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած ունեն որոշակի թերություններ: Փորձագիտական գնահատականները հիմնված են սուբյեկտիվ դատողությունների վրա, որոնց շեղումն իրականությունից կարող է լինել մեծ: Դրա ապացույցն է նաեւ այն, որ նույն հարցի շուրջ տարբեր փորձագետների գնահատականները երբեմն իրարից էապես տարբերվում են: Պատմական թվային շարքերի վրա հիմնված էկոնոմետրիկ մոդելների գլխավոր թերությունը կայանում է թվային շարքերի կարճության մեջ: Գաղտնիք չէ, որ մրգերի արտադրությանը վերաբերվող ցուցանիշները՝ մշակության տարածքներ, բերքատվություն, բերքի քանակ, *ըստ մրգերի առանձին տեսակների* առաջին անգամ ԱՎԾ-ն հրապարակել է 2004թ.-ին: 6-7 տարիների պատմության վրա հիմնված կանխատեսումներում ստանդարտ շեղումը ստացվում է բավականին մեծ: Բացի այդ, պատմական թվային շարքերի վերլուծությունը չի կարող ճշգրիտ պատկեր տալ այն պատճառով, որ 2010թ.-ին մրգերի եւ բանջարեղենի արտահանման բնագավառ է մտել նոր մասնակից, որի արտահանման ծավալներն էապես փոխելու են արտահանման ցուցանիշները: Սակայն փորձագիտական գնահատականները եւ էկոնոմետրիկ մոդելների արդյունքները միասին դիտարկման արդյունքում եւ փոխլրացման շնորհիվ տալիս են արտահանման բավականին արժանահավատ գնահատականներ:

Գյուղատնտեսության եւ բուսաբուծության բնագավառի մասնագետների գնահատմամբ, առաջիկա տարիներին (2011-2014թթ.) մրգերի եւ բանջարեղենի արտահանումը նախորդ տարիների նման ներկայացված կլինի հիմնականում մրգերով: Ընդ որում տարեկան կտրվածքով *կայուն արտահանումը* բաղկացած է կլինի 5 տեսակի մրգերից, որոնք են խաղողը, ծիրանը, դեղձը, սալորը, կեռասը: Դժվար է որեւէ կանխատեսում անել խնձորի արտահանման մասով, քանի որ ներքին շուկայում նրա իրացման գործընթացը ամենադիվերսիֆիկացվածն է (տեւողության առումով), ինչի պատճառով խնձորի իրացման հարցում մեծ խնդիրներ չեն առաջանում: Բացի այդ, հայկական խնձորը արտահանման ավանդական շուկաներում (հիմնականում Ռուսաստան, նաեւ Ուկրաինա, Բելոռուս) չունի այն հռչակը, որպիսին ունեն ծիրանը եւ ինչ որ չափով նաեւ խաղողը: Ավելին, նշված երկրներում խնձորի հարցում մրցակցությունը շատ ավելի մեծ է, քան ծիրանի եւ խաղողի դեպքում: Դա է պատճառը, որ վերջին տարիներին Հայաստանից խնձորն արտահանվել է հիմնականում Վրաստան, շատ փոքր խմբաքանակներով՝ փոքր առեւտրականների կողմից:

Ինչ վերաբերվում է բանջարեղենին, ապա դրա արտահանման գնահատման հետ կապված խնդիրն էլ ավելի բարդ է: Բանջարեղենի արտահանման հարցում Հայաստանը չունի հարուստ պատմություն եւ փորձ: Դատելով նախորդ տարիների ցուցանիշներից (տես **Աղյուսակ 17 - Հայաստանի բանջարեղենի արտահանման ծավալներն ըստ տեսակների, 2006-2010թթ., էջ 63**),

բանջարեղենի առանձին տեսակների արտահանումը կրել է անկայուն բնույթ կամ եղել է շատ փոքր քանակներով: Փորձագետներն այդ երեւույթը բացատրում են մի քանի պատճառներով. Սույն հետազոտության կողմից թիրախված բանջարեղենի գրեթե բոլոր տեսակներով Հայաստանի արտադրության քանակները հազիվ բավարարում են ներքին պահանջարկը: Այսինքն չկա ապրանքի այնպիսի ավելցուկ, որի վրա հնարավոր լինի կառուցել արտահանման քաղաքականությունը, այն է՝ ապահովել կայունություն, կանոնավորություն եւ նշանակալից քանակներ: Պահանջարկը գերազանցող քանակներով արտադրվում է միայն կարտոֆիլը, սակայն տարիներ շարունակ նրա արտահանման հետ կապված դժվարությունները արդեն կանգնեցրել են կարտոֆիլի արտադրության քանակների աճը: Որոշակի շարժ է նկատվել միայն 2010թ.-ին, երբ որոշ արտադրողներ կարողացան իրենց արտադրանքն արտահանել Իրաք, Ղազախստան, Վրաստան: Բայց այստեղ ուշագրավն այն է, որ կարտոֆիլի արտահանումն իրականացրել են անմիջապես արտադրողները, եւ ոչ թե արտահանման մեջ մասնագիտացած սուբյեկտները: Ըստ վերջիններիս վկայության, այն շուկաներում, որտեղ իրենք աշխատում են, կարտոֆիլի արտահանումն անհեռանկարային է: 2010թ.-ին Հայաստանից առաջին անգամ Ռուսաստան է արտահանվել լոլիկի, վարունգի եւ կաղամբի ռեկորդային քանակություն: Դա պայմանավորված էր 2010թ.-ին Ռուսաստանում արձանագրված աննախադեպ երաշտով եւ բերքի սակավությամբ, ինչպես նաեւ Թուրքիայից բանջարեղենի մատակարարման դադարեցմամբ: Գրեթե բոլոր արտահանողները համակարծիք են, որ եթե 2011թ.-ին թուրքական ապրանքի մուտքը ռուսական շուկա բացվի, իսկ տարին էլ բերքի առումով լինի բարենպաստ, ապա Ռուսաստանի շուկա բանջարեղեն արտահանելու մեր հնարավորությունները շատ փոքր են լինելու:

Փորձագետների գնահատմամբ, 2011-2014թթ.-ին մրգերի արտահանման քանակները կախված կլինեն հետեւյալ 3 գործոններից.

- Մշակության տարածքների եւ արտադրության քանակների փոփոխությունից,
- «Ավանդական» արտահանողների գործունեության մասշտաբներից,
- Արտահանման բնագավառում նոր մասնակցի՝ «Սպայկա» ընկերության ծրագրի իրականացումից:

### 6.2.1 Մշակության տարածքների եւ արտադրության քանակների փոփոխության գործոնը

Փորձագետների մեծ մասը միակարծիք են այն հարցում, որ մրգերի արտահանման զարգացման գլխավոր նախադրյալը հանդիսանում է նրանց առաջարկը՝ արտադրության քանակները: Եթե արտադրության քանակները փոքր են, ապա արտահանման քանակները եւս փոքր են, ինչպես օրինակ՝ դեղձի, սալորի եւ կեռասի դեպքում: Ծիրանի դեպքում, որտեղ արտադրության պոտենցիալը մեծ է՝ բարենպաստ տարում արտահանման քանակները մեծ են, իսկ ցրտահարության տարիներին՝ փոքր: Դա նշանակում է, որ **եթե մրգերի քանակը քիչ է, ապա արտահանողները չեն կարող Հայաստանում իրականացնել դրանց մթերումները՝ ի հաշիվ ներքին սպառողի (բնակչության) բաժնի**: Դրա պատճառն այն է, որ բնակչությունը եւ արտահանողները շուկայում «հավակնում» նույն ապրանքին՝ բարձրորակ մրգերին, եւ բնակչության մի մասը եւս պատրաստ է մրգերի համար վճարել բարձր գին՝ ինչպես արտահանողները: **Ուստի արտահանողները չեն կարող արտադրողների համար դիտվել որպես բացառիկ գնորդներ**: Այս տրամաբանությամբ փորձագետները գտնում են, որ **առաջիկա տարիներին մրգերի արտահանման քանակները կարող են աճել միայն դրանց արտադրության քանակների աճի արդյունքում**:

Ի՞նչ կանխատեսումներ ունեն փորձագետները առաջիկա տարիներին՝ կապված մրգերի արտադրության քանակների հետ: Փաստ է, որ արտաքին շուկաների պահանջարկի տեսանկյունից արտահանման առավել մեծ պոտենցիալ ունեցող 5 մրգերի տեսակների այգիների տարածքները ընդլայնվում են: Եվ դրանց ընդլայնման գլխավոր խթանը հենց

արտահանման հնարավորությունն է: Խոսքը գնում է խաղողի, ծիրանի, դեղձի, սալորի եւ կեռասի մասին: Այս մրգերի տարածքների ընդլայնման միտումն առկա է վերջին 10 տարիների ընթացքում: Սակայն առանձին մրգերի դեպքում այդ միտումները տարբեր են: Սեղանի սորտերի խաղողի տարածքներն աճում են, բայց ավելի դանդաղ, քան ծիրանի դեպքում: Ելնելով նոր տնկվող այգիների եւ հին կամ ցածր բերքատվությամբ այգիների քանդման դինամիկաների համադրությունից, փաստացի գոյություն ունեցող, բայց չհաշվառված այգիների մեծությունից, ինչպես նաեւ բերքատվության միջին ցուցանիշներից, փորձագիտական գնահատմամբ 2011-2014թթ.-ին մրգերի արտադրության քանակները կունենան հետեւյալ ցուցանիշները.

**Նկար 52 - Մրգերի արտադրության քանակների գնահատականը առաջիկա 3-4 տարիների համար**




Աղբյուր՝ Փորձագիտական գնահատական

Նկար 52-ի տվյալները կառուցված են այն ենթադրության վրա, որ 2001-2014թթ.-ին արձանագրվելու են բերքատվության տեսանկյունից բարենպաստ տարիներ: Այդ տվյալներից երեւում է, որ արտահանման եւ դրա աճի պոտենցիալ ունեցող 5 մրգերի մասով 2011-2014թթ.-ին սպասվում է արտադրության քանակների աճ՝ 71 հազ. տոննայի կամ տարեկան միջին հաշվով 17.7 հազ. տոննայի չափով: Դա նշանակում է, որ արտահանման աճի տեսանկյունից կարեւոր նախադրյալը՝ առաջարկի աճը ապահովված է:

### 6.2.2 «Ավանդական» արտահանողների գործունեության մասշտաբների գործոնը

Առաջիկա տարիներին մրգերի արտահանման քանակների մեջ կշարունակեն կարեւոր դերակատարություն ունենալ արտահանողների 1-ին խմբի (փաստացի արտահանողները, որոնք անվանապես չեն երեւում) կամ այսպես կոչված «ավանդական» արտահանողների գործունեության մասշտաբները: Փորձագետների գնահատմամբ, «ավանդական» արտահանողների կողմից ինտենսիվ եղանակով արտահանման քանակների աճ դժվար թե

արծանագրվի: Դա նշանակում է, որ եթե բնագավառում չհայտնվեն նույն տիպի նոր արտահանողներ, ապա ներկայիս արտահանողների կողմից արտահանման ծավալների էական աճ չի սպասվում: Փորձագետների այս գնահատականը կառուցված է հետեւյալ դատողությունների վրա.

- «Ավանդական» արտահանողների գործունեությունը սահմանափակված է նրանց կողմից տնօրինվող ֆինանսական միջոցների մեծությամբ: Նրանց կողմից արտահանման մեջ օգտագործվում է մի կոնկրետ դրամագլուխ, որը տարեց տարի առանձնապես չի փոփոխվում: «Ավանդական» արտահանողների գործունեության շահույթները ուղղվում են նրանց անձնական բարեկեցության պայմանների բարելավմանը եւ ոչ թե բիզնեսի մեջ ներդրումների իրականացմանը:
- Անգամ ամենափորձառու «ավանդական» արտահանողներն իրենց գործունեության 10-15 տարիների ընթացքում չեն ստեղծել իրենց **երկարաժամկետ գործունեության համար անհրաժեշտ նվազագույն բազա՝** տրանսպորտային միջոցներ, սեփական գրասենյակ, կազմակերպաիրավական տեսք:
- «Ավանդական» արտահանողների գործունեությունը միօրինակ է՝ հիմնականում միտված դեպի Ռուսաստանի բացօդյա շուկաները: Նրանցից ոչ ոք չի աշխատում առեւտրի ցանցերի հետ: Ավելին՝ դա անելու նրանց հնարավորությունները շատ սահմանափակ են, քանի որ նրանք ունեն որակի ապահովման խնդիրներ:

«Ավանդական» արտահանողների ներկայիս գործելաոճի պայմաններում նրանց արտահանման ծավալները կարող են աճել, սակայն շատ դանդաղ, որը 3-4 տարիների դինամիկայի մեջ կարող է թվալ կայուն: Դա են վկայում փորձագետների կողմից կատարված գնահատականները, ինչպես նաեւ պատմական թվային շարքերի (2002-2010թթ.) ռեգրեսիոն վերլուծության արդյունքները (տես Աղյուսակ 76 եւ Աղյուսակ 77. ենթադրվել է, որ 2013թ.-ին ծիրանի համար կլինի անբարենպաստ տարի (կլինի բերքի մոտ 80% կորուստ), իսկ մյուս 4 մրգերի համար՝ միջին բարենպաստ տարի).

**Աղյուսակ 76 - «Ավանդական» արտահանողների կողմից մրգերի արտահանման գնահատականն ըստ փորձագետների**

| Մրգեր | 2011 | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|---|
| Խաղող | 2,762 | 2,825 | 2,888 | 2,951 |
| Ծիրան | 9,062 | 9,350 | 3,267 | 10,117 |
| Դեղձ | 475 | 501 | 521 | 533 |
| Սալոր | 424 | 552 | 635 | 660 |
| Կեռաս | 349 | 422 | 507 | 566 |
| **Ընդամենը** | **13,071** | **13,651** | **7,818** | **14,827** |

Աղբյուր՝ Փորձագիտական գնահատական

**Աղյուսակ 77 - «Ավանդական» արտահանողների կողմից մրգերի արտահանման գնահատականն ըստ պատմ. թվային շարքերի ռեգրեսիոն վերլուծության**

| Մրգեր | 2011 | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|---|
| Խաղող | 3,596 | 2,827 | 2,890 | 2,953 |
| Ծիրան | 7,747 | 7,874 | 3,189 | 8,128 |
| Դեղձ | 517 | 529 | 542 | 554 |
| Սալոր | 350 | 361 | 397 | 411 |
| Կեռաս | 379 | 392 | 406 | 418 |
| **Ընդամենը** | **12,589** | **11,983** | **7,424** | **12,464** |

Մրգերի արտահանման ներկայացված գնահատականները կարելի է օգտագործել միայն «ավանդական» արտահանողների մասով դատողություններ անելու համար: Սակայն Հայաստանի մրգերի արտահանման տեսանկյունից դրանք լիարժեք չեն այն պատճառով, որ 2010թ.-ին մրգերի եւ բանջարեղենի շուկա է մտել նոր մասնակից, որը միայնակ հավակնում է արտահանել այնքան՝ որքան բոլոր «ավանդական» արտահանողները միասին:

### 6.2.3 «Սպայկայի» գործոնը

Ինչպես արդեն նշվել է, 2010թ.-ին մրգերի եւ բանջարեղենի արտահանման բնագավառ է մտել «Սպայկա» ընկերությունը: Վերջինիս բացառիկությունը կայանում է նրանում, որ առաջին անգամ լուրջ ներդրումներ են կատարվում մրգերի եւ բանջարեղենի արտահանման ենթակառուցվածքների, փոխադրող մեքենաների մեծ պարկի ստեղծման մեջ: Ի տարբերություն «ավանդական» արտահանողների, «Սպայկան» կենտրոնացած չէ միայն Ռուսաստանի խոշոր քաղաքների բացօդյա շուկաների վրա, այլ նաեւ լուրջ ջանքեր է գործադրում մտնելու խոշոր առեւտրային ցանցեր: Խոշոր ներդրումները եւ առ այսօր իրականացվող ակտիվ շուկայավարման քայլերը մեծ հույս են ներշնչում, որ «Սպայկան» կկարողանա հասնել արտահանման իր առջեւ դրված քանակների ապահովմանը: Ըստ ընկերության պատասխանատուների, «Սպայկան» նախատեսում է առաջիկա տարիներին մթերել եւ արտահանել տարեկան առնվազն 10 հազ. տոննա միրգ եւ բանջարեղեն: 2010թ.-ին եւս ընկերության առջեւ դրված է եղել այդպիսի խնդիր, որը սակայն չի լուծվել բերքի աննախադեպ փոքր քանակների պատճառով: Առաջիկա տարիներին, եթե արձանագրվեն բերքատվության առումով բարենպաստ տարիներ, «Սպայկան» անշուշտ կկարողանա ապահովել այդ ցուցանիշը, ինչը գրեթե կկրկնապատկի Հայաստանից մրգերի եւ բանջարեղենի արտահանման քանակները:

**Նկար 53 - Հայաստանի մրգերի եւ բանջարեղենի արտահանման քանակների գնահատականը 2011-2014թթ.-ին**




Աղբյուր՝ Փորձագիտական գնահատական

Այսպիսով, մրգերի եւ բանջարեղենի շուկայում առկա զարգացումների հիման վրա **կանխատեսվում է, որ 2011-2014թթ.-ին մրգերի եւ բանջարեղենի արտահանման ծավալները վերջին տարիների միջինը 10 հազ. տոննայից կհասնի տարեկան մինչեւ 22-23 հազ. տոննայի**: Սա կարճ ժամանակահատվածի համար մեծ թռիչք է եւ կարելի է ենթադրել, որ այն պետք է ինչ-որ կերպ ազդի ներքին շուկայում արտահանվող մրգերի եւ բանջարեղենի գների վրա: Նման դեպք 2010թ.-ին արդեն գրանցվել է Հայաստանում, երբ կենդանի քաշով ոչխարների արտահանման քանակների կտրուկ աճի պատճառով ոչխարի մսի գները թանկացան 2-2.5 անգամ: Ի՞նչ է սպասվում մրգերի եւ բանջարեղենի գների դեպքում՝ այս հարցի անդրադարձը հաջորդ բաժնում է:

## 6.3 ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԳՆԵՐԻ ՎՐԱ

Ինչպես արդեն նշվել է, մրգերի գների վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնց մի մասի ազդեցության չափը դժվար է գնահատել: Եթե մենք բացառենք այդ գործոնների ազդեցությունը կամ դրանք համարենք 2011-2014թթ.-ի համար անփոփոխ, ապա **գլխավոր գործոնը, որը կազդի մրգերի գների վրա՝ դա շուկայի հաշվեկշռի փոփոխությունն է**: Ենթատեքստում պետք է հասկանալ, որ Ազատ տնտեսական գոտու «ճարտարապետները», ի դեմս ՀՀ Էկոնոմիկայի Նախարարության եւ այլ շահագրգիռ կառույցների, առավելապես մտահոգված են **մրգերի մանրածախ գների հնարավոր բարձրացմամբ**, որը կարող է բացասաբար անդրադառնալ բնակչության կողմից դրանց սպառման ծավալների վրա, ինչն էլ իր հերթին կարող է լուրջ խոչընդոտ դառնալ մրգերի արտադրության զարգացման ճանապարհին: Այդպիսի սցենարը ուղղակիորեն հարվածում է մրգերի արտադրությամբ զբաղվող հազարավոր ֆերմերային տնտեսությունների շահերին: Մրգերի շուկայի հաշվեկշիռ ասելով նկատի ունենք մրգերի այն քանակությունը, որը պետք է սպառի բնակչությունը: Այն հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով.

**Շուկայի հաշվեկշիռ = Արտադրանքի քանակ - Արտահանում - Վերամշակում + Ներմուծում**

**«5.1.4 Բնակչության սպառումը» բաժնում** (տես էջ 92) մենք արդեն անդրադարձել ենք այդ հարցին: Հետեւությունն այն էր, որ շուկայի հաշվեկշռի ձեւավորման գլխավոր բաղադրիչներն են հանդիսանում արտադրանքի քանակները եւ արտահանման քանակները: Վերամշակման եւ ներմուծման քանակները գրեթե ազդեցություն չունեն, քանի որ.

- Արտահանվող մրգերից վերամշակողները պահանջարկ են ներկայացնում միայն ցածրորակ (պետք է հասկանալ՝ շատ էժան) ապրանքների նկատմամբ, որը հավաքվում է բերքահավաքի ժամանակ խոտանված (ծառերի տակ թափված, ապրանքային տեսք չունեցող, շատ մեծ ավելցուկի պատճառով սպառման որեւէ հնարավորություն չունեցող) բերքի քանակից: Այդ քանակությունը շատ մեծ չէ (բոլոր մրգերի մասով վերջին 10 տարիների միջինը՝ տարեկան 10 հազ. տոննա) եւ այն եւս ամբողջությամբ կախված է արտադրության քանակներից. եթե արտադրանքը շատ է, անորակ ապրանքը եւս շատ է եւ հակառակը;
- Հայաստանում արտադրվող եւ արտահանվող մրգերի ներմուծման քանակները շատ փոքր են եւ նախատեսված են միայն Հայաստանում նախաբերքահավաքային ժամանակահատվածում (որպես կանոն՝ մինչեւ 1 ամսում) իրացման համար: Դրանք իրենց փոքր քանակների եւ թանկ գների պատճառով չեն կարող դրական ազդեցություն ունենալ շուկայի հաշվեկշռի վրա:

Հետեւաբար առաջիկա տարիներին ներքին շուկայում մրգերի մանրածախ գների վրա հիմնական ազդող գործոնները կլինեն արտադրության քանակները եւ արտահանումը, ընդ որում՝

- **որքան ավելանան <u>արտադրանքի</u> քանակները, այնքան կմեծանա շուկայի հաշվեկշիռը, որի պատճառով կարող են նվազել մրգերի գները, եւ**
- **որքան ավելանան <u>արտահանման</u> քանակները, այնքան կփոքրանա շուկայի հաշվեկշիռը, որի պատճառով կարող են աճել մրգերի գները**:

Ասվածը նշանակում է, որ **որպեսզի չառաջանա ներքին շուկայում գների թանկացման նախադրյալ, շուկայի ներկա հաշվեկշիռը առնվազն չպետք է նվազի**: Դա նաեւ նշանակում է, որ **առաջիկա տարիներին արտադրանքի քանակի աճը պետք է հավասար լինի կամ գերազանցի արտահանման քանակի աճին**:

Դատողություններ անելու համար պետք է համադրել 2011-2014թթ.-ին մրգերի արտադրության եւ արտահանման քանակների գնահատվող քանակները: Այն ներկայացված է Նկար 54-ում:

Հաշվարկները կատարվել են արտահանվող 5 մրգերի (խաղող, ծիրան, դեղձ, սալոր, կեռաս) հանրագումարային ցուցանիշների հիման վրա, ընդ որում ենթադրվել է, որ արտահանման մեջ ամենամեծ մասնաբաժին ունեցող ծիրանի համար 2013թ.-ը կլինի անբարենպաստ տարի:

**Նկար 54 - Հայաստանի մրգերի արտադրության եւ արտահանման 2011-2014թթ.-ի կանխատեսվող քանակների համադրություն**




Աղբյուր՝ Փործագիտական գնահատական

Նկար 54-ը վկայում է, որ արտահանման բնագավառ «Սպայկայի» մուտքով արտահանման քանակները կկրկնապատկվեն, ինչի արդյունքում 2011-2014թթ.-ին Հայաստանից կարտահանվի 5 մրգերի համախառն արտադրանքի 5.7%-ը՝ նախորդ տարիների 2.6%-ի փոխարեն: Սակայն շուկայի հաշվեկշիռը դրանից ոչ թե կնվազի, այլ կաճի (տես Նկար 55), քանի որ բացարձակ մեծությամբ արտադրանքի քանակի աճը գերազանցում է արտահանման քանակի աճին.

**Նկար 55 - Արտահանվող 5 մրգերի շուկայի հաշվեկշռի դինամիկան 2004-2014թթ.**



Ներկայացված նկարների տվյալները բացարձակ թվերով նշանակում են այն, որ 2011-2014թթ.-ին 5 մրգերի արտադրության քանակները կաճեն 71 հազ. տոննայով, իսկ արտահանման քանակները՝ մոտ 40 հազ. տոննայով: Եթե անգամ ընդունենք, որ նշված 71 հազ. տոննայից ոչ բոլոր քանակությունն է լինելու *արտահանելի* (բարձրորակ կամ փոխադրունակ), այնուամենայնիվ արտահանման համար պիտանի քանակությունը կլինի ավելին, քան արտահանողների պահանջարկն է: Եզրահանգումն այն է, որ **այլ հավասար պայմաններում 2011-2014թթ.-ին 5 մրգերի արտահանման քանակների աճի պատճառով ներքին շուկայում դրանց գների բարձրացման համար նախադրյալներ չկան:**

# 7 ԱՄՓՈՓՈՒՄ

## 7.1 ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

Մրգերի եւ բանջարեղենի արտահանման հնարավոր ծավալների ուսումնասիրության սույն հաշվետվությունը համապարփակ է եւ թույլ է տալիս կատարել եզրահանգումներ, որոնք առավելագույնս են բնորոշում իրավիճակը հայկական մրգերի եւ բանջարեղենի արտահանման բնագավառում:

1. **Գլխավոր գործոնը**, որը պայմանավորում է Յայաստանի մրգերի եւ բանջարեղենի արտահանման քանակները՝ դա **արտադրության քանակներն են կամ առաջարկի մեծությունը**: Սույն ուսումնասիրության շրջանակներում ուսումնասիրվել են մրգերի եւ բանջարեղենի 14 տեսակներ, որոնք Յայաստանում արտադրվում են առավել մեծ քանակներով եւ որոնք միասին կազմում են Յայաստանում արտադրվող մրգերի եւ բանջարեղենի համապատասխանաբար 88%-ը եւ 95%-ը: Այդ 14 տեսակի ապրանքներից միայն 5-ն են (խաղող, ծիրան, խնձոր, կարտոֆիլ, լոլիկ) արտադրվում Յայաստանի ներքին պահանջարկը գերազանցող կամ բավարարող քանակներով: Արտադրության փոքր քանակների պատճառով Յայաստանը չի կարող ունենալ արտահանման նշանակալից քանակներ: Դրա ապացույցն այն է, որ վերջին 10 տարիների ընթացքում մրգերի արտահանումը միջին հաշվով կազմել է արտադրանքի ընդամենը 2%-ը, իսկ լավագույն տարում՝ 5%-ը (2009թ.): Բանջարեղենի դեպքում այդ ցուցանիշներն անհամեմատ ցածր են:

2. Մրգերի եւ բանջարեղենի **արտադրության քանակների վրա բացասաբար ազդող հիմնական խնդիրներից են մշակության այն մեթոդները եւ տեխնոլոգիաները**, որոնք կիրառում են արտադրող ֆերմերները: Այս հարցը հատկապես հրատապ է ծիրանի դեպքում, որը ներկայումս եւ առաջիկա տարիներին եւս հանդիսանալու է գլխավոր արտահանվող միրգը: Խոսքը գնում է ծառերի չափերի եւ բերքահավաքի կազմակերպման մեթոդների մասին: Յայաստանում ծիրանենիները աճում են մինչեւ 6-7 մ բարձրության վրա, ինչը էապես դժվարացնում է բերքահավաքը: Արդյունքում բերքի մինչեւ 10%-ը խոտանվում է՝ ծառերից թափվելու կամ չհավաքվելու պատճառով:

3. Չունենալով ներքին պահանջարկը էապես գերազանցող արտադրության քանակներ, Յայաստանն առայժմ չի կարող արտաքին շուկաների համար դիտվել որպես հուսալի մատակարար: Գնորդների կողմից ներկայացվող պահանջները, որոնք են քանակների կայունությունը, մատակարարումների կանոնավորությունը, որակի ստանդարտների ապահովումը, մենք այսօր դեռեւս չենք կարող ապահովել: Ներկայումս եւ առաջիկա 3-4 տարիներին արտաքին շուկաներում Յայաստանը կարող է հանդես գալ **միայն որպես սեզոնային մատակարար**: Դա էապես թուլացնում է մեր երկրի մրցակցային դիրքերը:

4. Յայաստանից մրգերի եւ բանջարեղենի արտահանումն իրականացնում են սուբյեկտներ, որոնց բիզնեսի վարման մշակույթը չի կարելի համարել օրինակելի (բացառությամբ «Սպայկայի»): Նրանց գործունեությունը չունի կազմակերպաիրավական տեսք, նրանք չունեն գրասենյակներ, չեն իրակակացնում շուկայավարման միջոցառումներ: **Արտահանողների գործունեությունը աչքի է ընկնում դիվերսիֆիկացիայի ցածր մակարդակով**. նրանք բոլորն էլ կենտրոնացած են մեկ շուկայի վրա (Ռուսաստան) եւ իրենց ապրանքն իրացնում են մեկ եղանակով (սեփական ուժերով եւ բացօդյա մեծածախ շուկաներում): Կենտրոնանալով նույն երկրի նույն շուկաների վրա, չկարողանալով համատեղ պլանավորել եւ կազմակերպել մատակարարումները, հայկական արտահանողներն իրենք են հանդիսանում իրենց իսկ գլխավոր մրցակիցները արտաքին շուկաներում:

5. Հայաստանի մրգերի շատ թե քիչ կանոնավոր բնույթ ունեցող արտահանումը ներկայացված է 5 տեսակներով (խաղող, ծիրան, դեղձ, սալոր, կեռաս): Սակայն **արտահանման տեսականին եւս դիվերսիֆիկացված չէ**: Արտահանման քանակի մեջ 85-90%-ը բաժին է ընկնում խաղողին եւ ծիրանին: Եթե ըստ տարիների խաղողի առաջարկը համեմատաբար կայուն է, ապա ծիրանի դեպքում այդպես չէ: Այն խիստ զգայուն է կլիմայական կտրուկ տատանումների նկատմամբ, ինչը վերջին 10 տարիների ընթացքում 3 անգամ պատճառ է դարձել բերքի շուրջ 80% կորստի: Դրա հետեւանքը եղել է արտահանման կտրուկ անկումները: Միակ գործոնը, որը պաշտպանում է հայկական մրգերի դիրքերը ռուսական շուկայում՝ դա սպառողների շրջանում ծիրանի եւ մասամբ էլ խաղողի բացառիկ համբավն է: Բայց դա ոչ թե մերօրյա արտահանողների վաստակն է, այլ դեռեւս խորհրդային տարիներից ժառանգություն ստացած ստերեոտիպերը:

6. Միրգ եւ բանջարեղեն արտահանող մրցակից երկրների համեմատ Հայաստանն ունի առնվազն մեկ ավել խնդիր. **դա բեռնափոխադրման ուղիների սահմանափակ հնարավորություններն են**: Արտահանողները շուկա ելք ունեն միայն մեկ ճանապարհով՝ վրաց-ռուսական սահմանին գտնվող Վերին Լարսի անցակետով: Վրաց-ռուսական լարված հարաբերությունների պատճառով այդ ուղին չի կարելի համարել բացարձակ երաշխավորված: 2010թ.-ի ամռանը, արտահանումների ամենաեռուն սեզոնին, այն փակվել է 2 անգամ: Այստեղ անելիք ունի ՀՀ Կառավարությունը, որը պետք է կարողանա հասնել այդ անցակետի անխափան աշխատանքին: Միայն ցամքային եւ կանոնավոր գործող երթուղին կարող է ապահովել արտահանումների սահուն (առանց կուտակումների) ռեժիմը եւ կանոնավորությունը:

